

ԲԱԳԻՆ ՅԿ. ՏԱՐԻ-1975 ՅՈՒԼԻՍ ԹԻԻ 7
digitised by A.R.A.R.@

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Ռ. ԿՈՍՏԱՆՆՆԱՆ	Յարակից բնութիւն
»	Եզրանակ վասն սրնգի եւ ծննդայի
Ո. ՍԱՆԻՆՆԱՆ	Նիւ Եռբք եւ դարձ
Ռ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Վազարդայնմներու միջնարարին
»	Հեռագրագրութեան քառադրոմներում
Ա. ԱՐՓԻՆԷ	Յաւերժական սէր
Յ. ՆԱԳՈՒԼՆԱՆ	Երկուշաբթիէն մինչեւ Շաբաթ օր
Յ. ՕՇԱԿԱՆ	Մարիկ Մելիքիսանեան
ՇԱՀԱՆՆՈՒԿԵՏ	Եւրոպական իմը, որ իմն չէր...
Մ. ՊԶԱՔՃՆԱՆ	Պայուսակը
* * *	Մտաւարական մը՝ Շահան Պերպէրեան
Շ. ՊԵՐՊԵՐՆԱՆ	Ընկերարարութիւնն ու հայ հոգի
Լ. ՄԿՏՁՆԱՆ	Բարոյագիտութեան շնչաը փիլիսոփայութեան մէջ
Վ. ՆԻՆՐԲԷԹԼՆԱՆ	Արքիւր Ազատով կամ՝ լիմերութեան մղձաւանջը
Պ. Ս.	Յ. Կոստանդեանի <i>«Բանաստեղծութեամբ...»</i> ը
Յ. Մ.	Յ. Կարապետեանի <i>«Նոր Աշխարհի հին սերմնացանները»</i>
Ս. Կ.	Ա. Ալիքեանի <i>«Նժար»</i> ը
Ք. Հ.	Պ. Գոթեպեանի <i>«Արիւնկեան համահունակ»</i> ը
Ս. Կ.	Հետաքրքրական երատարակութիւններ
* * *	Գրախօսական՝ գրախօսականներու մասին
Ա. ԼԵԼՄ	Դէպի քա՛նտ, Փարաճանով...

Բարձր

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍԻ

Ճ.Ն. ՊԱՆՈՒՆ, ԹԻՒՆ Գ

ՅԱՆՎԱՐ 1928

ՊԵՏԱԲՈՒԴ

Համայնքային Առաջին պատե-
րազին եւս Ափիւսի թէ Հայաստանի
մէջ յայտնուած եւր գրողները եւերու-
թեան ներկայացնելու համար՝ զհայ
գրողներու բարեկամները մասնա-
կարգ յայ ընծայեց յազգայնական
չարք մը, որուն ներքոյ Հասարի
(1941) մէջ Յարութ Կաստանզեանի մա-
սին կայ ցանկ մը ապեց առ փնտ-
զրակեց:

Ձեռն է Պաշի (Գործադատան),
1908ին, Կարեւորան ուսումը առն է
Գոմպէի Բաթեարայ բարձրագոյն գոր-
ծարանը՝ 1922-1926ին, 1927ին Կ'նքնի
Ճրտանա, Գրիչ սփան է 1930ին, Ա-
խասակցան է ՎՍՍՍին և ՎՍՍՍ
Հանգիստներուն, Լոյս ընծայան է Օրն-
քի իմաստաւարիւնը զերթուստներու
Հասարը՝ 1935ին:

Այնուհետև փարիզայ թերթե-
րուն մէջ յանաստեղծութիւններ և եր-
թմն արձակ էջեր ստորագրեց Կա-
ստանզեան, յայց հասար Երասարակցու
փոյթ չըբաւ երթեց իր բարեկամե-
րուն պնդումովն եր, որ իրմէ յայ տե-
սաւ ներքոյ Հասար մը, առաջինն
ուզից 80 տարի ետք, զհամաստեղծու-
թեամբ:

Ստորև նրկու յերթուան զհամա-
տեղծութեամբն: Անոր ներքուան
գրաբանականը կարգայ տակն սեղին:

ՅԱՐԱԿԻՑ ԲՆՈՒԹԻՒՆ

Մինչ հայեայքիս մէջ այստեղ սեւեռան,
Հասուն բերկրութեամբ ծփում են դաշտեր՝
Հովն է ծածանում հասկերը բերուն,
Եւ այի՛ք-այի՛ք ցորենի վաշտեր
Յարդում են հեռում:

Հեռո՛ւն — միևնի լուրք լեռների լակիին,
Ուր ծաղկածաւալ մարգեր աւ առուայտ
Հասնում են լճի լազուարթ կամանջին՝
Անդո՛րր արձագանգ անհունի կապոյտ
Ու անմերձ կամչիլ:

Կա՛նչ՝ որ հնչում են հողմերն անտառի,
Կա՛նչ՝ որ սլկիման է հեռում տարփալաւ,
Կա՛նչ՝ որ հիաստանջ պտղում է ծաղիկ՝
Ստինգնների պէս առայց աւ պայծաւ,
Տե՛նչա՛մքն աշխարհի:

Տե՛նչա՛մք՝ աննի ո՛ւժ տուտածագի՛
Աստղերից բխած միևնի կոյր քարին,
Հա՛ւր՝ որ ներսզուան կարծրութեամ անեղ՝
Նմանում է սերս աւ ջիմջ գոհարին
Եւ լա՛յս է շքեղ:

Լա՛յս՝ որ յուրքեամ արտայտն է եշտին,
Գեղեցիկ քան սէրն՝ այլ սէ՛րն արդարեւ,
Լո՛յս՝ որ ցիրուցան ծայքեամ այս էրին՝
Սիրում է սկի հասկերի վերեւ
Հայեացքն իր սեւեռն...

digitised by A.R.A.R.



ԵՂԱՆԱԿ ՎԱՍՆ ՍՐՆԳԻ ՈՒ ԾԻԾԱՂԻ

Յունիսն անցա՛ւ, արդէն ամառ է լուսայեղց —
 Փա՛ռֆ այս յամառ արեգակին.
 Գարունն ացա՛ւ՝ ահա հասուն ծիրան ու դեղձ,
 Եւ ահա լոյսը քանկազի՛ն՝
 Ոսկեփռոշին, որ շագում են՝ վերի շողերը շափուղայ
 Արծաթահունչ աղբերակին,
 Սաղարթախիտ սօսիների ստուերի տակ՝
 Ասես փշրե՛լ են ապակի, —
 Երգկածառայ կանանչութեան սփռել դիպակ՝
 Հասունութիւնն եղանակի.
 Յունիսն անցա՛ւ՝ փա՛ռֆ ծիրանի Արեգակին:

digitised by A.R.A.R.@

Եւ փա՛ռք յոյգիմ այս տօթակէզ ու բարգաւան,
 Որ ճուլելով ծառիմ, ծաղկի՛մ՝
 Օժտել է մեզ երազներով լուսաճանճանչ,
 Եւ հրաբորբ տեմդով նախկին
 Հիւքել հեշտանքն արարչագործ ու փառահեղ՝
 Վայելքն անբա՛ւ վաղվաղակի —
 Գեղեցկութիւնը հայանի, որ տարփայտյոզ ու սիրագեղ,
 Նման շքեղ մի մուակի՛
 Ծփում է հոծ իր հեշտանքի պլեծածան ծովի վրայ
 Եւ գալարում իր հազագից
 Քաղցր ու ահեղ երկնում է կանչն այն հեռակայ՝
 Որի դիւքովը կրկնակի
 Ծովանոյշներ կախարդեցին մուերն ամառ
 Դէպի խութերը խարակի:
 Եւ դարձեալ փա՛ռք Արեգակին:
 Եւ փա՛ռք լուսէ անդորութեան այս անվրդով,
 Ուր լուսութեան մէջ համակիր՝
 Եւ ծուլութեան կա՛ն տուերներ կապոյտ ու գով.
 Եւ կան աչքերդ դաւադի՛ր — Օ՛, սիրական իմ հագնեթով —
 Որ անթափանց դահանակի
 Մաւք ու կանանչ սարսուտներ են սիրագորով՝
 հոստումների մման պատիր հայելիներ — ուր ես խռով՝
 Բամտուած տատկերն եմ յատակի...
 — Քայց դու լուս ես ու գեղանի՛ — այլ թող աշխարհքը քե՛զ մայի —
 Դու՛ արփագեղ, դու հոյակեթս հատումութիւն ամառնային.
 Պազշու ծաղի՛կ արեգակի՛
 Որ միրգերի պէս հայանի հանդերձանքով եւ հմայիչ՝
 Գեղեցկութի՛ւն, որ ծածկում են միայն շիկնող լուսեր թաւիչ —
 Շուշանագարդ դու շափրակի
 Մերկութիւնն ես խորհրդաւոր. եւ մերկութիւնն ես ընտանի՛.
 — Արդ՝ հայեացքներ հիասարսուտ բող ժանգակն քեզ կենդանի...
 Եւ փա՛ռք անեղծ Արեգակին:

ՅԱՐՈՒԹ ԿՈՍՏԱՆՆԵԱՆ

Ս. Ս Ա Ն Ի Ն Ե Ա Ն

ՆԻԻ ԵՈՐՔ ԵՒ ԴԱՐՁ

WHITIE, SWEETIE...

Հանրակառքերի կայանից դուրս գալուց յետոյ, ես կանգնեցի Ութերորդ պողոտայի եւ Քառասունմէկերորդ փողոցի անկիւնը, առիթի սպասելով դիմացի մայթն անցնելու համար:

Մութ էր արդէն, եւ Նիւ Եորքը լուսաւորուած էր բիրաւոր ելեկտրական լամպերով:

Պողոտայով վարարած գետի հոսանքի պէս անցնում էին անթիւ-անհամար ինքնաշարժներ: Տեղի պակասութեան եւ շտապելու պատճառներով, գրանջ դնում էին խիտ շարքերով եւ զլխապտոյտ էին առաջացնում իրենց միօրինակութեամբ, մեքենականութեամբ եւ հոգեղրկութեամբ:

Ինձնից մի քանի հարիւր քայլ դէպի հիւսիս-արեւելք էր յնկած Թայմզ Աջուէր հրապարակը, որը հեքիաթային մի քաղաք է բուն Նիւ Եորքի գրկում: Թայմզ Աջուէրում ամէն ինչ կայ, բայց ոչինչ չկայ: Լոյսեր շատ կան, օսկայն այդ լոյսերը շին գրաւում քեզ, որովհետեւ զգում ես, որ այդ լոյսերը շին լարուած քեզ համար, այլ՝ լուսատիրոջ համար: Նիւ Եորքում մարդիկ շատ կան, բայց հոգեկան կապ չկայ նրանց միջեւ: Մարդն այդ քաղաքում այն է, ինչ ձուկը ջրում: Վտարում է, թէ մենակ, մենակ է: Եւ այդ է պատճառը, որ Նիւ Եորք եկած ամէն մի նորեկ ցանկանում է, որքան կարելի է շուտ փախչել այդ իւրատեսակ քաղաքից: Բայց, երբ մնում է հարկապարտ, վարժուում է: Եւ այլեւս ուզում է միշտ էլ այդ խնկարկոյտ ապրել:

Նոյնը պատահեց նաեւ ինձ հետ: Տարիներ առաջ ես այդ քաղաքն եկայ աշխատանք գտնելու յոյսով: Առաջին օրերին ես միշտ մզտում էի ինքնասպանութիւն դործել, ինձ նետելով Հուդսոն գետը: Յետոյ վարժուեցի, ինչպէս որ մարդը վարժուում է ամէն տեսակի պայմաններին, որոնց նրան համակերպման է ջորդում յոյսը: Յոյսն ինձ նման տառապած հոգիներին այն միակ միթարութիւնն է, որ մի օր լաւ կը լինի: Անշուշտ այդ մի օրը չի գալիս, բայց յոյսն էլ չի լքում քեզ, եւ աստիճանաբար վարժութիւն ու համբերութիւն է ստեղծում:

Եւ այդպէս, ես վարժուեցի Նիւ Եորքին, եւ այլեւս չէի դնում Հուդսոնը դիտելու, որի օտար ու անհոգի ջրերը, մտայլ ու լքուած ափերը, եւ թրուում էր թէ ոչ մարդկային ձեռքերով, այլ դիւային ուժով կառուցուած կամուրջները սարսափ էին ազդում ինձ վրայ:

Այսպիսով ես դիմացկունութիւն ստեղծեցի իմ մէջ, գերադասելով

ապրել նիւ Եւրթում, քան ջրահեղձ լինել Հուդսոնի ջրերում :

Եւ հիմա ես նորից նիւ Եւրթում էի : Եկել էի տեսնելու իմ մտերիմ-ներին, բայց չտեսած՝ ուզում էի հետանալ :

Ընդամենը վաթսուներեք սնեթ ունէի պինդ սեղմած բոուս, եւ մբ-տածում էի ինչ զինել այդ դրամով, մի տուփ ծխապղանիկնե՛ր, առանց որոնց ինձ շատ դժուար կը լինէր, թէ՛ մի պնակ ազուր, յազուրդ տալու համար սովիս, որն սկսել էր ինձ տանջել ինքնակալ կերպով :

Անցայ պոզստան եւ սկսեցի քայլել զէպի Թայմզ Սթուէր, որը կենս-րոնատեղի է՝ մենակների, նորեկների, նորագասկների, աղքատների, խը-մանների, մուրացկանների, պոռնիկների երկու սեռերից էլ, եւ պէս-պէս այլ դասերի մարդկանց :

Սակայն, դեռ Թայմզ Սթուէր չհասած՝ ինձ զպսի մի ճաշարան-ձա-ղարանում, այնքան անշուք, այնքան աղտոտ, որ հասկացայ, թէ՛ այստեղ ես կարող եմ իմ վաթսուներեք սնեթով մի աման ապուր ստանալ : Երեւի կեն-դանական բնուղն ինձ հրել էր այդ ճաշարանը, որպէսզի ես իմ վաթսուե-րեք սնեթը ծխապղանիկի վրայ շմսխէի, այլ կենսական կարեւորութիւն ու-նեցող ապուրը պնէի :

Եւ երբ ես արդէն ներսումն էի, էլ շուպեցի դուրս գալ եւ գնացի նըս-տեցի մի սեղանի առջեւ :

Այս ճաշարանն ինչքան նեղ էր, այնքան երկարաւուն էր : Ծաշարանի խորքում, վերջին պատի տակ՝ ծաղարանն էր :

Այդտեղ, մէկ անկիւնից մինչեւ միւս անկիւնը դարակներ էին, ուր շարուած էին խմիչքների պէս-պէս տեսակների շերտ : Մէկ-երկու մետր այս կողմը, պատից պատ ձգուած էր մի երկար սեղան, որի առջեւի բարձրատե-թաթոսակների վրայ հասած էին յաճախորդները : Այս վաճառասեղանի եւ պա-տի վրայ խմիչքների շերտի համար ամբողջաւով զարակ-վանդակների միջեւ կանդնած մի հուսկու տակառասպետ սպասարկում էր յաճախորդներին, ան-վերջորէն իր փորի վրայ ամբողջաւով սրբիչով սրբելով մատները, եւ ինքն էլ յաճախորդների հետ խմելով :

Ծաշարանային մասը դրան մտն էր : Այդտեղ աղտոտ սփռոցներով մի քանի քոտակուսի սեղաններ կային : Ծաշարանային մասում ոչ ոք չկար : Ինչպէս երեւում էր՝ այդ վայրում խմիչքներն աւելի որակաւոր էին, քան ճաշերը :

Ծաշարանային մասի եւ խմիչքարանի միջեւ բաւական աղստ տարա-ծութիւն կար, երեւի բոնցքամարտի համար :

Ես զզրացի, որ մտել եմ այս ճաշարանը, մտածելով, որ դրանց մա-տուցած ապուրն անպայման ամանների լուսաքաջուր է լինելու :

Հազիւ էի նստել այդ անմաքուր սեղաններից մէկի առջեւ, երբ իմ կողքին ցցուեց գողնացող մի սպասուոր երիտասարդ : Թէեւ նա բխ-մո-րուք չունէր, բայց նրա մազերը շատ երկար էին : Ինչպէս երեւում էր՝ նա օրուայ տարագի հետ էր քայլում, բայց ոչ ամբողջովին : Նրա քիթը վարից մի քիչ վեր էր ցցուել եւ նա շատ սուր աչքեր ունէր :

— Ի՞նչ է ուզում պարոնը, — հարցրեց ինձ այնպէս, որ կարծես ես բացակայ էի :

— Մի աման chicken noodle soup, — ասացի, — միայն տաքը, խըն-դրում եմ :

— Մեր բոլոր կերակուրները տաք են, — ասաց, — բայց այսօր մենք ձեր ուզած ապուրը չունենք :

— Լաւ, — ասացի, — տուէք ինչ որ ունէք :

- Օ. Ք., — ասաց նա, — ուրիշ ի՞նչ :
- Այդ քան միայն, — ասացի :
- Նա ինձ նայեց սպաննիչ Հայեացքով եւ Հարցրեց .
- Այդ քա՞ն միայն . . .
- Այդ քան միայն, — ասացի :

Ինձնից աջ կողմի պտտի կողմից ծիծաղ լսուեց : Ըս նայեցի այն կողմը եւ նոր տեսայ, որ այդ պտտի մէջ մի դուռ կար պատուհանով, որտեղից իր գլուխը դուրս էր հանել «խոհարարը» եւ լսում էր մեր խոսակցութիւնը : Նրա խոհարարական պիտակն այնքան եկտր էր, որ կարեք չկար այդ քան երկար լինելու :

Սպասուորը զոյնոցի զրոյանից Հացի մի պղպլ Հանեց եւ նետեց սեղանին վրայ .

- Վաթսուն սենթ :
- Վաթսուն սե նթ, — Հարցրի :
- Դու լսեցիր արդէն :
- Մի պնակ ապուրը ուրիշ ճաշարաններում արժէ քառասունհինգ յիսուն սենթ, — սակարկեցի :
- Բայց ո՛չ դիւրուայ այս ժամին եւ այսպիսի մի առաջնակարգ ճաշարանում :

- Ըս ծիծաղեցի :
- Ինչո՞ւ եւ ծիծաղում, — բարկացաւ նա :
- Հենց այնպէս, — ասացի, — բերեցէք ապուրը :
- Վճարեցէք :
- Դեռ չկերած :
- Այս՛, Մեզ մօտ այսպէս է ընդունուած :

Ըս բացեցի բոսոս եւ վաթսուներեք սենթը թափեցի սեղանի վրայ : Նա Հաշուեց եւ ասաց .

- Երեք սենթ ասելի է :
- Այդ երեք սենթը քեզ նուէր է, — ասացի :
- Նա բարձրացրեց սենթերը, եւ ցոյց տուեց խոհարարին :
- Չարի՛, տես, ես երեք սենթ նուէր օտացայ, — ասաց նա, եւ վերվեր նետեց արկածից Հացին աղատուած իմ Հուստարիմ սենթերը :

Չարի՛ խոհարարը գլխից Հանեց իր սպիտակ ու անիբրյանալիօրէն երկար թուացող զլխարկը եւ նրանով սկսեց Հարուածել պատուհանի զոյնն, անզուսպօրէն ծիծաղելով :

Նրանք ինձ Ժողովրդին մօտ Հինգ րոպէի չափ Յետոյ՝ ապաստուրը բերեց իմ ապուրը : Երբ նա պնակը դնում էր սեղանի վրայ, տեսայ, որ նրա բթամտոր մինչեւ կէսը ապուրի մէջ էր գտնուում :

Նման վայրերի փորձ ունենալով, ես Հստկացայ, որ եթէ Հակայարմակման շանցնեմ, նա շնչին առիթով այդ զապուրի՞ք պնակը, Հենց այնպէս, զուարճութեան Համար, կը շքի՛ իմ գլխին : Միայն ու միայն վաթսուներեք սենթ ունեցողի Հետ Նիւ Եորքում այդպէս են վարում, երբ նա ճաշարան է մտնում :

- Էսի՛ր, — ասացի նրան, իրր շատ բարկացած, — ես քեզանից տաք ապուր խնդրեցի, իսկ դու նորից ստուք բերեցիր :
- Դեռ չկերած, ինչպէ՞ս դիտես, — Հարցրեց նա :
- Ուտելու պէտք չկայ իմանալու Համար այդ, երբ քո բթամտան ապուրի մէջ էր եւ դու չէիր զգում տաքութիւնը :
- Նա նայեց թաց բթամտան եւ գոյնոցի փէշով սրբեց այն, անտարբեր :

— Ուշադրութիւն մի գարձբու, իմ բթամտան աշխան է ալուսեղ տաք ապուրի մէջ, որ վորժուել է և Ապուրը տաք է:

Կղայով խոտնեցի ապուրը եւ հասկացայ, որ ես նշմարիտ էի եղել և նա ինձ բերել էր ամանների լուացուած ջուրը: Զրուանքով յետ հրեցի գապուրիքս պնակը եւ գրպանիցս հանեցի ծխաղլանիկների տուփը: Նայեցի ներսը, չորս հատ էր մնացել:

«Մէկը հիմա կը ծխեմ, մէկը հանրակառք նստիչուց անմիջապէս յետոյ, մէկը կ'էս աննապարհին, իսկ մերջինը, երբ հասնենք իմ ապրած քաղաքին», — մտածեցի, եւ անմիջապէս վառեցի մի գլուխիկ:

— Ինչո՞ւ չես ուտում ապուրը, — հարցրեց պատասաւորը:

— Տրամադրութիւն չունեմ, եթէ ունենայի, այդ ապուրով քո գլուխն էի լուսնայտ, — ասացի:

— Ուրեմն վերցնե՛մ, — հարցրեց նա:

— Վերցրու եւ կորի՛ր աշփոցս, — ասացի:

Նա վերցրեց սնակը եւ ատրաւ դրաւ պատուհանի դռը:

— Չարի՛, քո եփած ապուրը յաճախորդը չհաւանեց:

— Չհաւանե՞ց, պատուհանում երեւոց Չարի՛ն, — երբ իմ եփած ապուրը ինքը, նահանգապետ Բակին է հաւանում, նա ասանց իմ ապուրն ուտելու չի կարողանում քնել:

Ապաստարն ու խոհարար Չարի՛ն նորից ծիծաղեցին արտանց:

Մտում էի եւ մտածում, երբ մի կ'ին ողջունեց՝ ինձ գրաւիչ եւ ատառանկուն անուանելով:

— Hail, Handsome...!

Գլուխը բարձրացրի: Սեղանի միւս կողմում կանգնել էր մի շատ երիտասարդ կին: Նրա մազերը դիպումսային խառնիխառն էին: Աչքերը վախշուտ էին: Դէմքը գէշ չէր:

— Sit down, please, sit down, — խոտնուցի ետ, եւ վեր թռչելով տեղիցս, մի աթոռ յետ քաշեցի սեղանից եւ նստն նստեցրի իմ դիմաց:

Նա նստեց եւ ասանց իր բարակ շրթունքներն իրտրից բաժանելու ժպտաց ինձ՝ ասանց այն էլ իր երկար բերանն է՛լ աւելի երկարացնելով:

— Ուզո՞ւմ էք ձեր մի արարկուն հանել արդեօք, — հարցրի պատրաստակամ, օգնելու համար:

— Ոչ, այդպէս լաւ է, — ասաց նա՝ արձակելով իր շատ բարակ մերարկուի վերեւի կոճակները, եւ ցոյց տուով իր լաւ միզն ու լեցուն կրծքերի վերեւի մասերը:

— Իմ անունը Սուրէն է, — ասացի, եւ ինչպէս հազար անգամ ասալնեկում, այս անգամ էլ սկսեցի հեղել՝ էս-իւ-աւ-ի-էն:

Սակայն, նա ոչ մի ուշադրութիւն չդարձրեց իմ ասածի վրայ, գլուխը թռթռեց, մտկերն իրենց տեղը նստեցնելու համար եւ ձեռքը դնելով ձեռքի վրայ, ասաց:

— Honey! Ինձ համար ուրիշի գինի՞ր... Յետոյ, յետոյ մենք կը դընանք մի լաւ ճաշարան, եւ յետոյ ո՛ւր որ դու ցանկանաս... O.K...?

Մինչ նա ինձ ժպտում էր իր քայ-կապոյտ աչքերով եւ իր տաք ձեռքի հպումով ձեռքիս վրայ քրտնեղի ժամեր խոստանում այս գիշերուայ համար, ես, որովհետեւ չէի կարող այդ կնոջ խնայրանքը կատարել, ամօթից քրտնեղ էի ու կարմրել, եւ չգիտէի, թէ ինչ անէի: Վերջում, որպէսզի նա չմտաւորուէր, ձեռքս աստիճանաբար հանեցի նրա ձեռքի տակից, եւ կարկառու մեղով ու կակազելով մի կերպ ասացի:

— Honey, baby, դուք հրաշալի էք եւ ես շատ շնորհակալ եմ, որ ինձ

էք ընտրել, բայց ամաչում եմ տեսնու, որ ես չեմ կարող ձեզ համար անդամ մէկ կաթիլ գարեջուր գնել...

Նա թէեւ մի քիչ, շատ քիչ, շփոթուեց, բայց շարունակելով փայտալ, հարցրեց.

— Ինչո՞ւ, Honey, Big Man...

— I am broke, Sonshine..., — ասացի:

— Հասկանում եմ, — ասաց նա, — թերեւս մի ուրիշ անգամ... Այդպէս չէ՞, — ուզեց մխիթարել ինձ:

— Այո, այո, — շտապեցի վստահեցնել նրան, — թէեւ այս գիշեր ես գուրկ պիտի մնամ ձեր գլուխներին, բայց պիտի ինձ մխիթարեմ, որ յաջորդ անգամ պիտի ունենամ դրանք...

— Դուք ինձ հաւանում էք, — հարցրեց նա:

— Այո, շատ, — ասացի, — ձեզ մի քանի անգամ փողոցներում տեսել եմ եւ միշտ էլ մտածել, թէ who is this sweet doll...?

— Դուք չէք սխալուել, — շարունակեց իր բարակ շրթունքներով փայտալ նա, յետոյ իր գէմքն ինձ մօտ բերեց, — ես սովորակապէս չեմ, ես բնասնական եմ...

— Ա՛յ, ա՛յ, ա՛յ, — ցոյց տուեցի, որ շատ ցաւեցի ես, — եւ ես իմ ձեռքից բաց եմ թողնում մի այդպիսի գեղեցիկ...

— Գեղեցիկ ի՞նչ, — հարցրեց նա:

— Գեղեցիկ մի կին, — ասացի:

— Ինձ մի ծխազլանիկ տուէք, — ասաց նա, առանց ուշադրութիւն դարձնելու իմ մեծարանքի վրայ:

— Օ՛, սիրով, — ասացի եւ իմ ունեցած երեք զլանիկներից մէկը տուեցի նրան:

— Վառեցէ՛ք, — գլուխն ինձ մօտ բերելով եւ շրթունքները ցցելով, ծխազլանիկն ուղղեց իմ կողմը նա:

Ես շտապեցի վառել նրա ծխազլանիկը, բայց զգացի, որ մեր միջեւ այլևս ամէն ինչ վերջացել է, որ նա այլևս ինձ չի զգում, եւ եթէ, նոր նիսկ, զգում է, բայց ոչնչու թիւն է համարում:

Նա տարտամ ու տնհամ բերանով մի կում ծուխ վերցրեց եւ անմիջապէս դուրս փչեց, հակառակ կնճռակով: Յետոյ անհանգստօրէն սկսեց շորս կողմը նայել:

— Խմե՛լ եմ ուզում եւ sex, — ասաց նա ինքն իրեն: Նա այլևս ինձ չէր տեսնում:

Նա նորէն ուզեց ծխել, բայց կէս ճանապարհին ծխազլանիկը յետ նետեց եւ այն, իմ լաւ ու բարի, ամբողջ երեք հատ ունեցածիցս մէկը, շարունակեմ ջարդոտեց մոխրամանի մէջ: Յետոյ ելաւ ու իր կոնքն օրօրելով գնաց ծաղարանի կողմը:

Նայեցի նրա շքեղ սրունքներին եւ հառաչեցի:

— Գեղեցիկ կին էր, պէտք չէր, որ բաց թողնէիր, — յանկարծ լզիտեմ սրտեղից կողքիս կանգնեց սպասաւորը:

Ես կարծեցի, որ նա ծաղրում էր նորից, բայց նա լուրջ էր:

— Ես սենթ անգամ չուեմ, — խոստովանեցի:

Նրա գէմքը ցնցուեց.

— Ուրեմն դու սոված մնացիր... Ես հիմա քեզ իրական ապուր կը բերեմ, — միանգամայն անկեղծօրէն ասաց նա:

— Ո՛չ, ո՛չ, շատ շնորհակալ եմ, — ասացի:

Նա զնաց եւ խոհանոցի պատուհանի միջով սկսեց խոհարար Չարիքի հետ խօսել:

Ես ուզում էի էլնել ու զնալ, երբ մօտ քսանութ տարեկան զունաս ու հիհար դէմքով եւ մութ շէկ մազերով մի երիտասարդ ընկաւ այն աթոռի վրայ, ուր նստել էր անծանօթուհին:

— Ի՞նչ եղաւ այն կիներ, — հարցրեց նա հեիհեւ ու ջղազրզիտ:

— Ի՞նչ կիներ:

— Այն՝ որ նստել էր այս աթոռի վրայ:

— Գնաց այնտեղ, — ասացի՝ զիտով ցոյց տալով ծաղարանի կողմը:

Նա աչքերը կկոցեց եւ սկսեց ծիւի միջով ծաղարանի կողմը նայել:

— Այնտեղ է, — ասաց նա, — գնա՛ց, — եւ սկսեց բռունցքով սեղանը հարուածել:

— Ո՞վ է նա, — հարցրի:

— Կիներ: Իմ հարազատ ու սեփական կիներ, — հառաչեց նա եւ ջղայնութիւնից սկսեց մատները ջարդոտել, — Ի՞նչ էր խօսում նա ձեզ հետ:

— Խնդրեց, որ իր համար խմիչք գնեմ...

— Փոխարէնը բան չիտեսացա՞ր...

— Առատ սէր, մի ամբողջ գիշերուայ համար...

— Պէտք է գնած լինէիք խմիչքը, — ասաց նա:

— Չեմ հասկանում, — ասացի:

— Քիչ առաջ Ջոյսի հետ նորից կուտեցինք... Դուք նրան ինձ յետ կը տայիք: Ուրիշից դժուար է:

— Ջոյսի՞, — հարցրի:

— Իմ կնոջ անունը Ջոյս է: Երբ նրա հետ կուտեմ ենք, նա ինձնից վրէժ լուծելու համար վայել է ծաղարանները մէկ ուրիշի հաշուին հարբում է եւ գիշերը նրա հետ է տնկացնում: Վերջերս, այդ էլ շորբորդ անդամն է, որ այդպէս է վարում նա...

— Ի՞նչ էք ասում, — զարմացայ ես, — այդ ահուելի մի վրէժխնդրութիւն է...

— Այո, հաստատուպէս, — քիչ մնաց լացէր նա:

— Եւ դուք ոչինչ չէ՞ք կարողանում անել:

— Ի՞նչ կարող եմ անել:

— Ամուսնայութուէք:

— Չեմ կարող, չեմ կարող, չեմ կարո՞ղ...

— Ինչո՞ւ: Գեղեցկութեան համար...

— Առանց ինձ նա կը կորչի, փողոցային պողոտիկ կը դառնայ: Յետոյ էլ սիրում եմ նրան, շա՛տ...

— Մէքը փոխադարձ է լինում, բայց ձեր արածն ի՞նչ է... Նա արդէն փողոցային պողոտիկ է...

— Ծխապլանիկ ունէ՞ք, — ընդհատեց նա ինձ:

— Ունեմ:

— Մէկ հատ ինձ տուէք:

Ես սուեցի նրան իմ ունեցած վերջին երկու ծխապլանիկներից մէկը: Մնաց մէկ հատ: Նա ծխող շէր երեւում, որովհետեւ սկսեց արագ-արագ ծըխել ու հազալ: Ծխում էր, ծուխը փչում երեսիս, փչում էր սեղանի երեսին, իր ուղեքիտ արանքում եւ կամ էլ զլուխը յետ էր պցում ու փչում էր առաստաղն ի վեր: Նա ծխեց պլանիկի ամբողջ ծխախոտային մասը եւ կոթը, մինչեւ որ այրեց շրթունքներն ու մատները: Յետոյ սկսեց կնոջ կողմը նա

յիւ: Լաւ տեսնելու համար՝ ձեռքի ափը հովանի էր դարձնում աչքերի վերեւում եւ շարում տեսողութիւնը:

Ես խղճում էի նրան, շա՛տ:

— Ինչո՞ւ էք կուռւմ, — հարցրի:

— Դրամի համար: Նա շատ դրամ է ուզում: Միշտ: Ըն չունեմ: Ըն աշխատար մէկն եմ: Նրա մայրը եւ մօր աղտոտ սիրեկանը փչացրել են նրան... Նրան հաւատացրել են, որ կարող է շարժապատկերի աստղ դառնալ...

Նա մէկ անգամ էլ նայեց ծաղարանի կողմը եւ փուռեց աթոռի յենակին ինչպէս թողած հեծուտը ցորենի դէպին:

Ես երկարեցի սեղանի վրայով եւ հարցրի.

— Ի՞նչ պատահեց:

— Կիսա արդէն համբուրում է, — հաղիւ կարողացու ասել նա:

Նայեցայ ծաղարանի կողմը: Իրաւ, Ջոյն ու մի տղամարդ ջով ջովի նստած գիճակում համբուրում էին: Մեր կողմից միայն նրանց թիկունքներն էին երեւում եւ զլուխները: Ջոյն իր ձախ ձեռքով զրկել էր տղամարդի հաստ վիզը, իսկ նրա սիրեկանը իր աջ ձեռքը դրել էր Ջոյնի լաւ կոնքի վրայ: Այնտեղ մօտ տասն հոգի ուրիշ խմողներ կային, եւ ոչ ոք ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում նրանց վրայ: Խմիչքապետը, որ գէտջով սիրահարուածներէ կողմն էր կանգնած, սոց էր տալիս, որ առանձին ոչինչ տեղի չի ունենում:

— Ի՞նչ անեմ, — խղուած ձայնով ինձ հարցրեց Ջոյնի դժբախտ մուսիկը:

— Ինձ ասէք, թէ ի՞նչ է մեր անունը, — հարցրի:

— Ուիլիամ, այսինքն՝ Բրիլ, — ասաց նա:

— Բրիլ, — ասացի, — դու երկու բան կարող ես անել: Առաջինը, որին ես շատ համոճայն եմ, դու Հենց հիմա պիտի վճուես, որ պիտի ամուսնալուծուես եւ դնաս որպէս վկաներ զրեւ խմիչքապետի եւ մի քանի ուրիշներէ անունները, այս ժամը, ծաղարանի անունը եւ այլ բոլորը ներկայացնես դատարանին՝ արտահրաչանի համար...

— Ձե՞մ կարող, — ընդհատեց նա ինձ:

— Լու, տատցիր շն կարող, արտահետե սիրում ես կնոջը: Ձե՞մ հասկանում, թէ ինչպէ՞ս դու կարող ես սիրել մի կնոջ, որը Հենց քո ներկայութեան անհրաժեշտութեամբ է գրազուում:

— Երկրորդն ի՞նչ է, — հարցրեց նա:

— Երկրորդն այն է, որ փոխանակ այստեղ նստելու եւ ախուճախ անելու, պիտի գնաս կնոջը ձեռքից բռնես եւ տուն ասնես:

— Մէնակ է՞ս, — հարցրեց նա:

— Էլ ո՞վ:

— Եթէ ոտիկանի դիմե՞մ:

— Ոտիկանը չի օգնի քեզ, որովհետեւ կինդ ինքնակամօրէն է համբուրում:

— Նրան խմցրել են...

— Նրան խմցրել են իր խնդրանքով, այլ ոչ բռնի կերպով:

Նա ծանրօրէն հառաչեց եւ, նորից կնոջ կողմը նայելով՝ ինքն իրեն ասաց.

— Գալիս են...

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

(Մնացեալը յարորդով)

Յ. Մ Ա Ն Ո Ւ Կ Ե Ա Ն

Վ Ա Ղ Ո Ր Գ Ա Յ Ն Ն Ե Ր Ո Ւ Մ Ի Ջ Ն Ա Ր Ա Ր Ի Ն

Անհունութեան եւ իմ միջեւ՝
 Զուրերու ներասոյց խորութիւն,
 Ուր վիժող ձայնանիշերու սերունդներ
 Կը ձուլուին
 Ծովափներու մեռեալ երաժշտութեան...:

Դուն չես գիտեր,
 Թէ վազարդայններ
 Մայրամալու ունին տենչանք մը անճում՝
 Ժամանակի սահմանագանց ճգտումով:
 Տղանալու՝
 Կախարդանքը գաղափարին,
 Որ կը ննջէ
 Հոգակոյտին տակ բառերու,
 Եղանակին՝
 Որ կը յածի
 Ստեղներուն մտացութեան:
 Կամրջելու այգաբացր խոհերուդ՝
 Անճրեւային հոլովոյթին հեռուներուն,
 Որ սաղմեր անարգանդ
 Կը շողածաղկին
 Այլակերպութեան ապակեպատ ջերմոցներուն տակ:

Կեանքի եւ իմ միջեւ՝
 Տեսիլքներու տապանաբար,
 Ուր արշալոյս մը կը թխտուի
 Յիշատակի թելերուն տակ.
 Կը համբառնան դոները փակ՝
 Քարերու մամռոտ յիշողութեան
 Եւ դարերու ֆոնին վըրայ
 Վրէժի նշդրակով գեղաբուծուած
 Կրունկն Աֆիլէսի
 Կը խոյսնայ
 Հին հեզնանքի արիւնախանձ հետքերով...:

Դուն չես գիտեր,
 Թէ բնաշխարհն յուշերուդ
 Հոն պիտի ծաղկի,
 Ուր վազարդայններ
 Պիտի կենդանագրին մտերմութեանդ որմերուն

Երիզները պատահարին,
 Չքամբում իմաստութիւնն ասացուածքի.
 Նայուածքներու մահացումը գլխիվար՝
 Տենչանքներու ջրհորներում անջրդի.
 Երգոց երգը՝
 Ուղիներու Քափառական:

Գուն չես գիտեր,
 Թէ օրերուդ համբերանքին
 Եխանն ի վեր մխացոյ
 Ընտրեալիդ հանդիսաւոր յայտնութեան
 Պիտի դառնան գուլա՛ն աւետաւոր...:

ՅԵՌԱԶԳԱՑՈՒԹԵԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՆ

Թափուր են փողոցները հիմա՝
 Երակներու պէս անախշ.
 Առեւանգած են առօրեան,
 Չես գիտեր ինչո՞ւ,
 Չես գիտեր ո՞ր...:

Կ'արշաւեն ստուերներ հեռուն,
 Կը շուպեն կանչեր աներդիք.
 Կ'արմատանայ սարսուռ մը ահա
 Փողոցներու ճակտին ամայակէզ:
 Լուսքեան ներբաններուն տակ
 Փշրուած արձագանգներ
 Կ'ազգագուրուին վերահաս գալիքի քառուղիներում:
 Ծնող ամէն ակնքարք
 Խուճապահար կը փախչի
 Իր իսկ շուքէն երկնչած
 Եւ խոյս կու տայ
 Անիջեւան լանջերուն անցեալի...:

★

Առեւանգած են առօրեան
 Ու կը թուի
 Գնացքն ի վար փողոցներու
 Պիտի պայթի
 Դիպուած մը մեծ:
 Կը տողանցեն տեսիլներ անկերպար,
 Կը խլրտի տառապանք մը անյայտագիր.
 Նախագգացման ծիծառներն արդէն
 Կը գաղթեն դէպի լճափն հարաւի:

digitised by A.R.A.R.@

Կը յօրինուի տեսակա՞ն մը արգեօք
Հերձուածներու դղեակին մէջ.
Կը սազմնաւորուի դա՞ւ մը քրմական՝
Քառասնօրեայ փորձութեան անապատներուն,
Կը փայտատակի արա՞ր մը հոգեփոխութեան՝
Սպասման մաշած պարիսպներուն տակ:

★

Թափուր են փողոցները հիմա՝
Երակներու պէս անախշ.
Առեւանգած են առօրեան,
Չես գիտեր ինչո՞ւ,
Չես գիտեր ո՞ւր...:

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ա. Ա Ր Փ Ի Ն Է

ՅԱԿԵՐԺԱԿԱՆ ՍԵՐ

Նայե՛մք մէկ: Կատարեալ ամառ:
 Լուսա չ է, որ ութ սրտան ընթաց-
 քին տարւոյն շորս եղանակները գոյու-
 թեան կոչուին, իրարու հանդիպին, աշ-
 նա՛մ գարուն յաջորդէ, ու ձմրան՝ ամառ:
 Կը քայլեմ, քայլերուս դեկը յանձնած
 սրտիս: Մատերը ոսկի են հողեր: մի քա-
 նին արեւին մէջ բոց են ստեր: ուրիշներ՝
 գեղ՛նի ու կանանչի խառնուրդ մը տա-
 կաւին: Արազ սկնարկ մը բնդհանուրին,
 ու պատրանքը՝ առաւելապէս տաք դոյ-
 ներոյ հարուստ, հարս՛ւստ երանդապնա-
 կի մը:

Ուղեքրուս տակ՝ փափուկ գորգը
 թափած տերեւներուն: Տխորս փսիսուք
 մը, որուն սակույն գուարթ չեչտ մը դի-
 տէ տալ արեւը: Վերը՝ ջինջ կապոյտին
 վրայ, բամպակի կապոցներու նման սնա-
 շարժացած ճերմակ ամպեր, վարը՝ դե-
 տին հեղասառ վաղըբ հաղիւ նկատելի:

Հագուսակներէն կը յաջողիմ միտքս
 տյայգէս պարպել ամէն մասնումէ, զայն
 ազատադրել հայտնող, շարժարող խոր-
 հուրգներէ: Շուրջս ո՛ր մէկ շնչող արա-
 բած, լոռիթին, ամառային, խաղաղու-
 թիւն: Ի գուր կը փնտռեմ սաղարթներուն
 կեանք տուող թռչնիկներ, անոնց կտու-
 ցէն թոռած, սրտէն փրթած երգի պատա-
 ոխիկներ, սրտնք պային շոյել հողիս:

Կը քայլեմ՝ սկանջ տալով թափած,
 մեռած տերեւներէն բարձրացող խորհր-
 դաւոր շշուկներուն: Իրենց կուրծքը տը-
 ւած տարուկ ու բուրումնուէտ հողին՝
 կարծես կը պատճեն կեանքի քաղցրու-
 թեան, կեանքի պայթարին, տառապանա-
 քին ու... անխուսափելի վայնճանին մա-
 սին:

Ու կը քայլեմ, կը քայլեմ սա սրբա-
 դան լոռիթեան մէջ, բնութեան տաճարին

մէջ: Լուած են նաեւ հողիս խռովքի մաս-
 նող, դիս անհանդարտ պաւնող անբա-
 քատրելի, անյուժեյի ներքին շշուկնե-
 րը, որոնք ի գուր ջանացած եմ հասկը-
 նալ ու լոյսին բերել:

Արեւապաշտ հողիս սա խաղաղու-
 թեան, գոյնի սա շքեղանքին մէջ անյա-
 գորէն կ'ըմպէ ծորոզ շողերը արեւին ու
 կը շնչէ խոնաւ հողին ու յորցած տերեւ-
 ներուն բոյրը: Այժմ ամբողջ էութիւնս
 կը ձգտի զէպի երեւակայութեանս պաս-
 տատին ուրուսպծուող լեռը: կը ձգտի
 անոր անհասանելի, անմեքմնայի բար-
 ձունքին, ուր յաւերժօրէն արձագանդող
 մեղեդիներով պիտի յորդէր հողիս:

Կարծես կը քայլեմ ամպերու վրայէն,
 ամպերու մէջէն: Հեռո՛ւն, կապտորակ
 նուր շղարչին ետեւէն կ'երբի գանդը-
 ւածը նիւ Եւրօքի երկնաքերներուն:

Ինչպիսի՞՜ հակադրութիւն...
 Մշտական շարժում ու ժխոր այնտեղ:
 Վարար դետի նման կը հոռին ինքնա-
 շարժները, կը հոսի ժողովուրդը: Թու-
 նայի օդին ու երկնասայցներու դոր շու-
 քին՝ հեռու վաղըբ մեքենայացած մար-
 դուն ի ինդիք նիւթի, ի ինդիք պերճանա-
 քի, ի ինդիք վազանցուկ հաճոյքի:

Դէպի վար՝ գեանահայեաց նստա-
 րաններուն վրայ կնոջ մը ուրուսպիծը:
 Յոռաջացող քայլերուս հետ կը յստա-
 կանայ, կը պայծառանայ, գոյն ու կեանք
 կը ստանայ:

Ծերունադարը, դայիպղէմ կին մը՝
 բարութիւն ծորոզ աչքերով, խօսելու
 ծարաւով, սկնարկը կ'ուղղէ ինծի:

— Nice day, — կ'ըսէ ջերմութեամբ
 լեզուն:

— Այո, — կը պատասխանեմ, —
 ամբան օդ կ'ընէ:

— Ես տը ատիկա կ'ըսէի ձէջին, — կը յարէ դէպի աջ գառնալոյս, կարծես հոն, քոյր, մէկը նստած ըլլար:

Յանկարծ կը լրջանայ: Ժպիտը կը շքանայ: Կնճիտները կը շեշտուին: Ակններէն վախով կը քննէ դէմքը: Հոն զարմանք, կամ ծիծաղ արտայայտող ոչինչ զտնկում՝ կը խաղաղէ կարծես ու կը սկսի խօսիլ, պատմել:

Գիտէր, այո՛, գիտէր... Ուրիշներու քով ձէջի մասին խօսք պէտք չէ ընէր: Երբեմն այսպէս կը տարուէր ու կը մոռնար, յետոյ կ'անզրպարանար:

— Բայց... քու նայուածքէդ... աշքերէդ... կը դգամ, որ կը հասկնաս...

— Անշուշտ կը հասկնամ...

Ժպիտս քնք է: Խրախուսիչ: Ուրիշ՝ համարձակութիւնը վերադասած:

— Օրուան ընթացքին ձէջին հետ այս պատկեր միակ հանոյքս է: Ազատութիւն ու առանց վախի այն ատեն միայն կրնամ խօսիլ իրեն հետ: Այնուհետ, Բզապէլլա Հոմին մէջ երբեք պէտք չէ ձէջին խօսքը ընել... Աղջիկս խուլու արգելած է ատիկա: Եւ երբ որ այսչաւ չեն արտօնէր, որ դուրս ելլես, կ'ըսէ:

— Իրաւունք ունի ձեր սղջիկը, — կը պատասխանեմ:

Մտածելու՝ կը ճշտէ ձեռքի պայուսակը, ապա դտոնալով ինձի՝

— Եւ դուն չհարցուցիր, չուղեցիր գիտնալ անպատճառ, թէ ո՞վ է ձէջը...

— Ծիչդ է... Ձեռք սրբեր հարցումներ ընել, բայց միշտ հանոյքով մտիկ կ'ընեմ:

— Զէջը ամուսինն է...

Յողնած, ծերացած աչքերը քաղցրութեամբ կը պարուրուին:

— Կրէ՛յա, — կ'ըսէր յաճախ, — երբ մեռնիմ՝ չըլլայ որ յազուիս, լսագիտցիր, որ ես միշտ քովդ պիտի ըլլամ, ու այդպէս ալ եղաւ... Սիրտս հիւանդ է, որեւէ օր կրնամ յանկարծ ինչալ, բայց այլեւ ոչ մէկ սարսափ ունիմ մաշէն... Գիտեմ, թէ այդ պահուն ձէջին թուերուն մէջ պիտի ըլլամ, այլեւ անկէ անբաժան:

Նախանձելի, նախանձելի՛ հաւատք, երանելի՛ էակ, կը կրկնեմ մտովի:

— Այս բաները չեմ ուզեր աղջկանս բռնի. չ'ախորժիր, չի հասկնար, մտիկ ընել չ'ուզեր...

Կը թթթէ աչքերը, կը նայի ժամացոյցին:

— Այլեւս լաւ չեմ տեսներ... տարիքն է... Ինչքան պիտի ուզէի նստիլ հետ, ու խօսիլ քեզի հետ... Պէտք է վերադառնամ սակայն. կը փնտռեն դիւ: Առաջին անգամն է, որ կը հանդիպիմ դիւ հասկողի մը, դիւ հանոյքով մտիկ ընողի մը: Ինչե՞ր պիտի ուզէի պատմել քեզի, եթէ վաղը...

Կ'օղնեմ որ ոտքի ելլէ: Կը ժպտի քողցորէն: Յաջորդ օրը կրկին դիւ անանելու, խօսելու, պարպուելու հետանկարէն իսկ երջանիկ՝ գեղեւկոտ քայլերով կ'ուղղուի դէպի ատրեցնիներու տունը երկարոյ ծառուղին:

••

Նստած է ընկճուած երեւոյթով, ակնարկը հորիզոնին: Զիտ տեսնելուն՝ կհանքի կու դայ: Մտած աչքերուն մէջ հրճուանքի շող մը կ'իջնայ:

— Կարծեցի, որ մոռցած ես... սիրտի շղատ...

Կը բացատրեմ, թէ վերջին բուզկէն բարեկամուէր մըն էր հետամոյշած ու դիւ պէտք հպածէն աւելի պահած:

— Յուզուած էր, — կ'ըսեմ, — ընտանեկան ցուեք, մտահոգութիւններ... Զկրցաւ կարճ կտակել:

— Որքան ատեն որ կեսնք կայ աշխարհիս վրայ՝ պիտի ըլլան նաեւ ցուեր ու մտահոգութիւններ. մտ'նաւանդ ներկայիս, մա'նաւանդ... եթէ դատակներ ունին ձի՛չդ եմ...

— Եստ ճիշդ. շատ լաւ կրահեցիք:

— Այսօր, կանուխ դուրս ելայ. վեր պարտէջ մը կայ, դէպի այն կողմը քաղցիք ու տեղ մը նստայ: Եստ, շա՛տ կը յոգնիմ: Տեսայ, որ քիչ անպիս զոյգ մը կար. աւելի հեռուն՝ ուրիշ զոյգ մը, պատանեկան տարիքի մէջ տակաին: Այնչաւս ո՛չ քաշուիլ դիտեն, ոչ ամենայ... Փճացած սերունդ մը հասակ կը նետէ: Յիւնցի, որ այդ նոյն աղջիկը երկու օր

առաջ տեսեր էի ուրիշ տղա մը դիրկը, ու այդ տղան՝ ուրիշ աղջկան մը հետ։ Կր դիտէի ու չէի կրնար հաւատալ աչքերուս։ Կեանքը օր առաջ ճանչնալու, ապրելու հեռք մը. ամէն ինչ ժամ առաջ փորձելու ու փճանալու տենդ մը։ Այդ տարիքին՝ ծխախոտ, խմելք, թմրեցուցիչ, Թոշնով յաղեցած միտքեր, որոնց մէջ կը գրաս, թէ տիրապետողը անասնաշինն է լոկ։

Վեր խորհիմ, թէ ինչքան տարբեր էր կեանքը մեր տարիներուն։ Ընթն ու ես ինչպէ՞ս սիրեցինք դիրքը։ Խոր ու մաքուր, անկեղծ ու անխարդախ սէր մը։ Մեր հողիները բաց դիրքեր էին, գաղտնիք չունէին իրարմէ. մեր վճիտ աչքերը ամէն ինչ, ամէն զգացում կը պատմէին իրարու։ Ատենք երբեք պիտի չհաննան ճշմարիտ սիրոյ պարզեւած անյատակ, անպարտականի քաղցրութիւնը. տկար բառ մը այս սիրիչներ. հողիդ պարուրող ու քեզ անհասանելի ուրբուներու բարձրացող վսեմ զգացումը։

Զարմանքով մտիկ կ'ընէի, Կարծես այսփոխուած էր. երիտասարդացած, զեղեցկացած, ներշնչուած։

Բառերը կ'արտաբերէր ամենայն դիրքութեամբ։ Կր գոյնի, թէ բաւականին մշակուած միտք մըն էր իբր, որ յառաջացած տարիքի բերումով, առանձնութեան մէջ լուսութեան դատապարտուած րյալով՝ մասամբ բթացեր ու իր սիրելիին ուրուականին էր կառչեր։ Այսօր, սակայն, դինք հասկցողի մը, դինք համբերութեամբ ու սիրով մտիկ ընողի մը ներկայութեան թարմացեր, պայծառացեր, աշխուժացեր էր։

Սպիտակ մազերուն պսակը ոսկի ներկեցի մտքով, դէմքին խորշումները սրբեցի, շրթներուն ու այտերուն՝ դոյն, եւ աչքերուն մէջ՝ շողեր դրի ու դիտեցի այդ օրերու թարմատի զեղեցկուէին։

— Բայց դիտես, կեանքը շատ ալ սակուն դնացրով շ'ընթանար. ելեւէջներ տեղի կ'ունենան, վերիվայրումներ, աջ նակնկալ հարուածներ, փորձութիւններ... Ու եկաւ օր մը, երբ սկսայ կասկածել... Ընթի վճիտ աչքերուն մէջ յանցանքի պատրուկներ մը սկսաւ տա-

րածուիլ եւ սիրտս վաւա։ Անցաւ քանի մը շաբաթ, չէի դիտեր ինչ ընել։ Վճի կը խորհէի, թէ ճանչցած ես զայն, կ'ըսէի ես ինձի ու սիրտս կ'արիւնէր։ Բայց մի՞թէ ճանչցած ես դուն քեզ, կր հարցընէի յանկարծ։ Ինձի անծանօթ զգացումներ սկսեցի ինչ խորտիլ մէջս։ Սկսեցի էր արեւութեամբ լեցուիլ, թուանալ զգացումներով տառապիլ։ Չէի դիտեր, թէ ով էր այն քածը, որ կը ջանար ամուսինս իր ճանկը ձղել։ Մտքով կը մեղանէի, կ'ուզէի բոկտել, յօշոտել զայն։

Վեւելի ստորին արարած չեմ կրնար երեւակայել, քան այն մարդակերպ ճիւղազր, որ առանց խղճախալթի երջանիկ բոյն մը կ'ուզէ քանդել։ Ոմանք հարատուրէն քաջադործութիւն կը նկատեն առկա եւ կամ իրենց չունեցած բացառիկ շնորհներուն կը վերադրեն։ Սխալ, սըռխալ... Ենչդ չե՞մ, ըսէ, ճիշդ չե՞մ...։

— Այո, — կը պատասխանեմ, — ուղղակի զգուշի արարածներ կարելի է նկատել զանոնք։

— Ե՛նչ, — ըսի վերջուպէս օր մը, — մի՛ պահեր ինձմէ. ըսէ՛, պատմէ ինձի. եթէ կը սիրես զայն, եթէ կը խորհիս, թէ երջանիկ պիտի ըլլաս անոր հետ՝ դիտելով, որ արդեւք պիտի ըլլամք քեզի...։ Զարմացայ, թէ ուրիշ եւ ինչպէս կրցայ այդքան քաջութիւն գրտունել, բայց չէի կրնար այլեւս տոկալ ու չպոռթկալ։ Ինկաւ աթոռին վրայ ու դէմքը ծածկեց ձեռքերով։ Ամէն ինչ վերջացած է, կր խորհէի ու կր զողայի ամբողջ մարմնով։ Ե՛նչ, — ըսի հանդարտ երեւալու հերոսային ճիղով, մինչ յուզումը կը խեղդէր դիս, — Ե՛նչ, դեմ՝ իրեն...։ Հողիս աւելի խաղաղ պիտի ըլլայ այդ կերպով...։ Զեռքերը վար առաւ։ Զարմացայ։ Աչքերուն մէջ արցունքի կաթիլներ կը փայլէին։ Վճի, — ըսաւ վճուական շնչով, — պիտի երթամ, բայց պիտի երթամ՝ թքնելու համար իր երեսին...։

Վճի մի գարմանար, եթէ ըսեմ, թէ այն օրէն ետք աւելի ամբացաւ մեր սէրը, աւելի ու աւելի խորացաւ։ Գէտք է խոստովանիմ, որ սկիզբները թիչ մը դժուարացայ, բայց աղջնակիս սիրոյն է

վերջոյ ջանացի ներել: Եարաթնորու ընթացքին համողուած էի արդէն, թէ ինծի հանդէպ ունեցած իր զգացումներէն ոչինչ փոխուած, ոչինչ կորսուած էր ու այդպէս ալ մնաց մինչեւ իր մահը ու պիտի մնայ յաւիտեանս:

Կուրծքը արագ կ'ելուէջէր, դէմքը շտապուած էր:

— Յոգնեցաք, — նաեւ յուզուեցաք կարծեմ. կը վնասէ այդ ձեռքի:

— Ինծի համար վայելք է վերապրել անցեալը. պատմել այս բոլորը քեզ հասկցողի մը, քեզ հանոյցով լսողի մը: Զրկուած եմ ես այս բոլորէն: Ծէջը միայն ունիմ, անոր հետ է, որ այսպիսի վայրերու մէջ ազատորէն կը խօսիմ, կը պարպուիմ: Եւ յետոյ՝ ըսի արդէն, թէ այդիս մահէն ոչ մէկ սարսափ ունիմ, ընդհակառակն...

Կը քթթէ ժամացոյցին ուղղուած աւզերը:

— Ուշացայ արդէն եւ ես ինչքան կ'ուզէի պատմել նաեւ աղջկան մասին...

Դէմքը թնթեօրէն կը խոտոտի, որմէ կը հետեցնեմ, թէ լատ ալ նպաստաւոր բաներ պիտի չըլլային իր պատմելիքները:

— Վա՛ղր, կ'ուզէ՞ր դալ վաղը...

— Անը՛ւշա, — կ'ըսեմ, — եթէ միայն լանձրեւէ...

Կ'ելլենք ոտքի:

— Ի՞նչ լաւ է հոս, սա խաղաղու-

թեան մէջ. ձէքն ու ես յաճախ կու գայինք այստեղ, կը դիտէինք ջուրը, կանաչութիւնը, անցնող գրօսանաւերը ու կ'ողեկոչէինք հին օրերը, եւ այդ քաղցր վերջիւումներէն դիմով՝ ձեռք ձեռքի կ'երթայինք տուն: Հի՛ն օրեր... անո՛ւշ օրեր...

Գլուխը օրօրելով, ու ձեռքի շարժումով մը՝ կ'ուղղուի դէպի ծառուղին: Ակնարկս կը հետեւի իր կքած մարմնին, որ հետդհետէ կարծես կը լուծուի մշուի մէջ:


Գիտեմ, թէ այլեւս պիտի չտեսնեմ զինքը: Ըստ ճայնափիւռի օդերեւութաբանական տեղեկութեան՝ յաջորդող օրերուն սաստիկ պիտի անձրեւէ ու անկէ ետք ջերմաստիճանը թաւալուրը անկում պիտի կրէ:

Արեւը անցեր է արդէն շէնքերուն ետեւ: Հետուն՝ վիշապանման գորչ ածպիր սկսեր են կուտակուիլ երկնասլացներու զադաթին:

Ծառերէն չորցած տերեւներ կ'իջան ջայլերուս առջեւ, միանալու համար արդէն թափածներուն: Կը ջալեմ, միշտ ականջ տալով անոնց փսփսուքին...

Իրենց կուրծքը տուած տաքուկ հողին, անոր կենսատու սրտփին՝ կարծես այժմ զուարթ չլուկով կը պատմեն նաեւ յաւերժութեան... յաւերժութեան մասին:

Ա. ԱՐՓԻՆԷ



Յ. Ն Ա Գ Ո Ի Լ Ե Ա Ն

ԵՐԿՈՒՇԱԲԹԻԷՆ ՄԻՆՉԵՒ ԶԱԲԱԹ ՕՐ

ԵՆԱԼ Կիրակի
երգով ժպտով լեցուն իր շրջապատը
խնդաց ու մեծցաւ

թափանցեց խորքը ժպտներուն
նշմարեց դողը երգող շրթներուն
տխրեցաւ
երբ ժպտին տակ դէմքեր տեսաւ խոժոռ
դիմակներ էին դէմքերը ժպտուն

մեծցաւ
լրջացաւ
խնդալ բարկանալ տխրիլ սորվեցաւ
առանց դիմակի

Երկուշաբթի մը մեծ քաղաքներուն վառող ու մարող լոյսերը տեսաւ
մոռցաւ իր ներսի թելադրանքները
հոգին պարտւող հեթնախոնքները հին
դուրսի վանգերուն դողանջն ունկնդրեց
բարի ճանապարհ մաղթեց ինքզինքին
վար իջաւ
երկիր

Երեքշաբթի
կէս գիշերէն ետք լսեց լացը տխուր
ջղջիկներուն
մարդոց քրքիջը երեւակայեց
ու համեմատեց քրքիջը լացը
քրքիջը լացը
քրքիջը լացը
եւ առաւօտուն երբ ախթնցաւ գործի շտապող մարդոց դուփիւնէն
յիշեց երազը որ կեանքին պէս էր
կեանքին յար մման
բայց հակառակ
համեմատութիւն չկրցաւ գտնել խնդացող շղջիկներուն
ու լացող մարդոց միջեւ
ու պղջաց

պղջաց մեծցած ըլլալուն համար

digitised by A.R.A.R.@

Չորեքշաբթի մը պատուաստուեցաւ կեանքի պտղատու ծառերէն մէկուն
 ելեւէջներով ճամբաներ գտաւ
 համուպեցին պինք թէ կոճղ է դարձեր ինքն ալ իր հերթին
 թէ պատուաստուեր կան տերեւներուն մէջ իր ալ իր հերթին
 ծարձակեցաւ
 ծածկեց պիտուանը մանկութեան
 ասրսոսաց յաճախ երբ չարձանագրուած սէրեր մնացին ստուերներուն
 մէջ իր տերեւներուն
 եւ պատուաստուեր փակուեցան ընդմիջտ այդ ստուերներով ու
 տերեւներով
 սմգոյն տերեւներ որոնք դեռ երեկ
 ծիլ կոկոն էին ու բողբոջեցան
 արեւին յոյսը բերին կոճղերուն
 հիմա դեղնած ալյուս
 կը տրտմին
 կ'իյնան

տերեւներ որոնք երբ կանաչ էին
 պարուրեցին պինք
 ուրախացուցին
 նոր ձեւ
 նոր միտում
 նոր ընթացք տուին իր շարժումներուն

Չորեքշաբթի մը ծածկեց վերջին պատուաստը իր ներաշխարհին



Հինգշաբթի Ուրբաթ
 կարդաց գիրքերուն վերնագիրները ու բացաւ կողքը ստափն գիրքին
 քառերու ծովն էր
 յողալ չգիտցաւ ու փշրուեցան իղձերը բոլոր հանգրուաններուն
 յղի
 բայց ունայն տրամադրութեամբ
 Հինգշաբթի Ուրբաթ
 չգիտցաւ նոյնիսկ հանգրուաններու հատիկներէն սերմնցուն պտի
 ու դառնալ գոնէ սերմնացանն աշնան



Հարաք առաւօտ բարձրացաւ տանիք ուպեց վար ցատկել
 քունքի ձեռքէն
 գիշերը
 երազ տեսայ
 տանիքէն ինկաւ ու փշրուեցաւ
 եւ փշուրները ջղջիկներ դարձան թռան տանիքին քաղրիքին նստան

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԳՈՒԼԵԱՆ

Յ. Օ Շ Ա Կ Ա Ն

ՄԱԹԻԿ ՄԵԼԻՔԻՄԱՆԵԱՆ

(Վ. Լ. Պ)

Սեղբակը պատանի էր այն ատեն, մեծ եղբորը հետ խանութը կեցող, Անոր աչքին դէմ, եղ ժորթելու նման ժորթեր էին մեծ եղբայրը, պատուական երիտասարդ, շորս աղու հայր, ոչ մէկուն սիրտը ցուցուցած ամբողջ քաղաքին մէջ: Ձէր լացած, աղաչած: Այլ դոցած աչքերը ու կզպած շրթները: Յետոյ պատկեցուցեր էին զինքն ալ, զլուխը վիզին փոսիկէն՝ ձգելով դուրս եղբորը ուսերուն: Ու անոր այտերը քսուեր էին վիզէն հասող արիւնին փրփուրին: Անոր սարսափը: Աղաչանքը: Լա՛ցը: Վերէն աղմո՞ւնք մը, ջարդերու պահուն գիտուած շրթն՝ ալ, զո՛ւթ. — հրաշք մը միջամտեր էր զոհին: Անիկա հանուած էր ոտքի, հրամանովր այն մարդուն, որ կտրեր էր եղբորը զլուխը: Տեսե՛ր էր անոր պատկեցուցիլը, երբ կը մաքրէր դանակին երախր ժորթուածին լաթերուն: Այդ ազգասէր միւսլիմանը, որ հաճի Մարութէ ազային արջառը կը բերէր կարնոյ լեւներէն ու մեծցեր էր անոր հասցովր, վերջին բոպէին այցուեցաւ խղճի տաղանպէ: Կըսեն, թէ երախտագիտութիւնը ամբխային զգացում է. ու Արեւելքի մէջ մաս կը կազմէ քիչիկ մըն ալ՝ բարբերուն: Նախնական մարդերը հաւատարիմ են իրենց կերած հացին աւելի ընդարձակ չափով մը, քան աւելի բարձր մշակոյթի բարոյախոսական սկզբունքներով ներկուտ ազգերը: Բարի միւսլիմանը խղճի դէմ էր գտեր մէկ տունէն սա դոյզ սպանդը: Ու կը տրամաբանէր, կրտսերը ազատելու համար, հրամանին պակասէն. իրենց հրահանգուածը արմատական բնաջնումը չէր կենաւորին, այլ սանկ մաքրագործում մը, շուկայի երեսին: Իրաւունք տուին անոր իր րնկերները, արդարութեան զգացումի մը հպատակելով, այն զգացումին, զոր յեղյեղել չեն մոռնար մինչեւ այսօր ալ: Տղան ազատեցաւ: Ըսին, որ երթայ: Ձկրցաւ քայլել ու ինկաւ կրկին: Փաթթոցաւոր մը, դանակը ախանսիտուն մէջ տեղաւորած՝ դրաւ մէկ ոտքը անոր կանակին, ձեռքովր տղուն կրակը ամուր քաշելով դէպի ինքը, զսասական դիրքը ոչխար մորթելուն: Ամէն կեսարացի ի ծնէ մորթել գիտէ, առանց թուրք բլաւու: Տղուն լեղապատառ ճիշդ շոքրեց վայրագ մարդը յուղելու, որ դանակը առած էր միւս ափին եւ կ'ըսէր թթուած դէմքով մը ճեմելով՝) եկած է, օղլում: Բայց արդիւնեցաւ միւսնակէն: Կը հասնէին ուրիշ խումբեր, նոյն ճանդերմանքով, շորս-հինգ հոգինոց, իւրաքանչիւրին կեդրոնը մարդ մը, զլխաբաց, դեղին՝ աւելի քան թուղթը, աղբրսարկու եւ անորակելի: Այդ խումբերը չէին աճապարեր մորթելու համար: Ետեկայէն վերջուած այդ զոհերը կը քիչին դէպի վեր, հայոց թաղերը, տեսանելի տեղեր փնտռելով, իրենց զոհակատարութեան մէջ շատ մըն ալ դերասանութիւն, արուեստի հաճոյքը հետապնդելով կարծես:

(*) Ենեւ — մահուամ ժամ:

Կենսարացին տաղանդով կը մորթէ: Ջղայնոտ ու խիստ Սեդրակին եզ-
բօրը սպաննիչը հրեց արան, միւս խուճբերուն նմանելու ճիգի մը մէջ, բռնի,
քաշելով ձեռքէն ու վազցնելով: Ողջ հասցուց դայն իր տունը ու յանձնեց
ձօրը, յանձնարարելով ինձմք ունենալ հստի աղային դաւակէն ու ինք եկաւ
փողոց, շարունակելու իր պարագը:

Սեդրակը հոն, թուրքին տունին մէջ անցուց օրը, անոր դիւերը, յա-
ջորդ ցիւրիկը, եւ իրիկունը տարուեցաւ իր հօրը:

...Այդ օրէն ասդին, այդ տղուն մէջ մտած էր այդ անորակելի պա-
հր, եղբորմէն, խուճբերուն ձեռքը ճուացող իր ազդակիցներէն, դազան փաթ-
թոցաւորէն, մրակաւոր, մեռած, բայց տառօրէն կարծր:

Այն օրէն ասդին անոր արթնութիւնը կ'այցուէր այդ պատկերով, ամ-
բողջ ու անփոփոխ, զոյնի եւ զգայնութեան այնքան հարազատութեամբ, որ
անոր ջիւղէրը խախտեցան ու կէս խեղապար վիճակ մը ծաւալեցաւ իր վրան:
Ու անոր քունը առաջին տարին տեսակ մը զոց աչքով փոխառացութիւն. ան-
դադար ազալող. նոյն բառերով, որպէսզի իննալուի իրեն:

Գիշերախօս այս տագնապին անբարձրաձր ցիւրիկին վրայ սա լուսութիւ-
նը եղաւ, որ կը բռնէր անոր դէմքը, ինչպէս շաքաթ տեւող անձրեւէ մը ետքը
բուրնները թաղող խոնաւ ու կաթիլթուն մշուշը: Դեռ, դարձան շունեցան ար-
դիւնք: Տարիքը աւելի օրտառուչ բրաւ այս լուսնահարուճը պատանիին, որ
աճեցաւ ոսկորներէն անձրանելի առատութեամբ ու խելքէն մնաց տասնը-
հինգամեայ:

Ընկեր Մաթիկը խորունկ յուզումով մտիկ բրած էր այս դրուագը.
Հարիւր հազարներու մէջէն մէկ հատիկը, այսպէս մատուցուող իր ջիւղերուն
սղոցումին: Դժբախտութիւնն ալ մեր աշխարհին վրայ կը հպատակի բախ-
տին: Հազարներ պիտի անցնին հետախաղաղ ու մէկը պիտի խռովէ խղճմը-
տանքները:

Անիկա լացաւ. դիտունի անվայել այս տկարութիւնը ներելով իրեն,
իր անտնձնութեան մէջ, երբ կը խորհրդածէր իր ցեղին ճակատագրին վրայ:
Այս յուզումէն, կա'պը, որ պիտի չքակուէր, իր ու Սեդրային մէջ, մինչեւ Մո-
խրիդոյի նոյնքան խժողութիւնը պերճարունը երկուքին ալ օրերուն:

Յեղափոխականն Չէր Սեդուն: Բայց տարուեցաւ, սա քաղաքէն հեռա-
նալու փրկարար պատկերով: Չունեցաւ անիկա տարրական դիտակցութիւնը
այն բազմազան, յաճախ մահ տանող գիտանքներուն, որոնք անխուսափելի կեր-
պով կը դառնան ճամբորդի փէշերուն, երբ հայ ըլլան անոնք ու յանդգին
ոտք նետել դուրս, իրենց քաղաքէն: Հոս, ճամբաներու այս աղէտը կերպով
մը օրինակումն էր անդին ջուրդերով ստեղծուած սարսափին: Չունէր թա-
փանցումն ալ Մաթիկին նպատակներուն, զոր կը ճանչնար իբր շրջիկ ատամ-
նաքոյժ, ինչպէս՝ քաղաքին հանճարեղ կառավարիչը կը վկայէր քրանիւ եւ
զործոյժ: Մնաց որ, ընկեր Մաթիկը եղաւ զգոյշ գտնողինն ազգայիններուն
հետ իր յարաբերութեանցը մէջ: Բնագրական, այս կեցուածքը: Վասնզի
անիկա չէր հաւատար, թէ իր մայրենի լեզուն ուրացող ժողովուրդ մը կա-
րող ըլլար զայն սիրելու: Առանց բերնի ուտել մը ըմբռնելի՛: Սիրելու հա-
մար զգայաբանքներ են հարկաւոր: Այս քիչ մը շատ արժատական մտքը
միակողմանի կը թուի, երբ նկատի առնենք միւս պարագան.— ցեղային ազ-
դակներէն երկրորդին, այսինքն՝ կրօնքին ալ արժէքը: Ոչ մէկ տեղ մեր եկե-
ղեցին այնքան խորունկ գուրգուրանքի արժանացած է, որքան ոչ-հայաստ
գաւառներուն մէջ: Այդ դպացումը մերինները տարած է մինչեւ չափազան-
ցումը: Բոլոր աստուածատենները, բաւանները թրջախօս քաղաքներու նը-
ւերներն են տակաւին մինչեւ այսօր:

Մաթիկը չայցելեց վարժարան, Բայց կանչուեցաւ ծերունագարդ առաջնորդէն, որ մեծագործ եպիսկոպոս մըն էր, Հին սերունդէն:

Մաթիկը շահեկան մերձեցումները բրաւ արժաւահան տիպարին ու Հին ոճի այդ եկեղեցականին ընդմէջ: Իր հոգեւած ժողովուրդին նման ինքնատիպ երակ ունէր այդ մարդը ու խորունկ ազդեցութիւն թուրքերուն վրայ: Ձէր կրցած արգիլել ջարդերը, վրանդի հրամանը եկած էր բարձրէն, բայց երկու ժողովուրդներու յարաբերութիւնները ուրիշ ամէն դաւանէ առաջ՝ դրած էր տանելի պայմաններու: Հնասէր, հմուտ, մատենագիտական Հին Հետաքրքրութիւններով, որոնք մեր կրօնականներուն մէկ մասին յատուկ են եօթնասունական թուականներուն, երբ Ալիշանի ուղիով մեր ազգայնականութիւնը թափանցում կը փորձէ դէպի գանգուածը: Եպիսկոպոսը, մարդերու մեծ կռող մը, ինք կ'ըսէր քարոզի, չիանդաժառուեցաւ սա կէս տոքթորով, որ Հակոտակ ճեմարանակա՛ն ըլլալուն, կ'ուրանար դարբարը, «Էրաւիքալ»-ներուն գեղեցկութիւնը ու կը պաշտպանէր արդիական սկզբունքները, լեզուէ՛ն՝ ինչպէս վարչութիւնէ: Անիկա, բարի մարդ, պարտք սեպեց իրեն զգացնել ժամանակներուն փափկութիւնը, ծայրայեղ դաղափարներուն կարելի վնասը մեր ժողովուրդին բարօրութեանը համար, որ դիտուած ինչպէս ինքը՝ տոքթորը կը տեսնէր, իր պայմաններուն մէջ, հետու էր նմանել ուրիշներու երեւակոյածին: Թուրք մը կար մեր զլիտուն, զոր պարտաւոր էինք կրեալու, ինչպէս ուրիշներ ալ կը կրեն ուրիշ բան: Այդ թուրքը մեր պապկրը վարեր էին առանց արդի գաղափարներուն: Ու պահած՝ զոնէ թիւը: Նորերուն պարսէն էր շղպիլ այդ թիւին, որուն էր միշտ վերջին խօսքը ազդեալու զուպարին մէջ: «Խնամձի հո՛տ» առած էր բանիմաց եկեղեցականը՝ այս կերպ արտայայտուելու համար: Անիկա կարճ եղաւ այս պահանջողական անսուքիւններուն վրայ: Յետոյ խօսեցու մեր աշուղներէն: Մըրազանին մենասիրութիւնն էր ատիկա: Բանասիրական ու պատմական հանգանակներով ուսումնասիրած էր մեր աշուղները: Բոլորին կեանքէն ու գործէն աւուով մտտ մը բան հանդէսներու: Հիացող մը ինքը, այդ արուեստագէտներուն, որոնք մեծ մասին կեանքը արամաթիք հանդոյցով մը կը կապուէր նախնական այն ստեղծազորութեան: Արժէ՛ք: Կ'ընդունէր այդ բանը, հրապարակ չդրած չափով մը, այսինքն՝ ամբողջ թրքական ժողովրդական երգերը եւ անոնց եղանակները անոնցմէ բխած յայտարարելով, ինչպէս կ'ընեն հիմա թուրքերը՝ վարկածը շրջելով: այսինքն՝ մեր երգերն ու եղանակները իրենցմէ առնուած ներկայացնելով: Եպիսկոպոսը ունէր իղճամիտ հաւաքումներ, ոսկեղօձ տետրակներու մէջ իր թիփիկ գիրովը օրինակած: Իր հաճոյքներէն մէկն էր ամէն կարեւոր այցելուի ցոյց տալ այդ թանկագին ու փառակազմ հատորը ու սպասել զնահատման:

Մաթիկը, արեւմտահայ գրականութեան հանդէպ իր ծանօթ արհամարհանքը անշուշտ պիտի տարածէր նաեւ այդ երգերուն ու մնար լուս: Մըրազանը վերցուց զիրքը ու դարձուց կոնակը, յանձնարարելով ժամկոշիկ նարկիլէ՛ մը եւ սուրճ մը: Բաժնուեցան իրարմէ. դժգոհ:

Առաջինը՝ անոր մէջ տեսնել կարծելով նոր սղիի նմոյշ մը, որ Հինը, անոր ամէն ինչը արժեղորկելուն մէջ կը շարունակէր իր նորութեան իրաւունքը ու պատճառ կը դատարար ազգին անձածկելի անկումին:

Երկրորդը՝ ա՛լ անօգուտ կը կարծէր սա մարդերը, որոնք խունկ ու մաս հոտոյ իրենց մտայնութիւնը կը պարտադրէին երիտասարդութեան ու կը ջլատէին անոր ջանքերը իր ժամանակին հետ ըլլալու, քալելու: Անիկա չկրցաւ մոռնալ սակայն սրբազանին մէկ նախադասութիւնը, որով մեր վրանակը կը պատկերանար տպաւորիչ ճշգուծեամբ: «Մեմէ քարէին անպալա-

տին մէջ ովասիսներ եմք, բայց շատ ալ հեռու եւրոպայեմք: Թուրքին ծո՞վը: Անշուշտ: Մ՛՛՛՛՛՛՛ ի՛ր շարժած ի՛ր տեղէն, մէր երեք Հարիւր հազար զոհերուն խղճալով: Ո՛՛՛՛ ռք: Ու աւա թուրքը, աւելի քան վայրագ մեր գլխո՞ւն:

Ընկեր Մաթիկը եղաւ զգոյշ Հաճի Մարութին ալ տունը: Բայց կենդանի նահատակը, որ Սեղբակն էր: Անոր լուսթիւնը ողջ գեղեցկութիւն մըն էր այդ օր մը շէն տունին մէջ: Անոր հայրը հանդիսաւոր ուխտ էր ըրեր, նոր քահանային ժամանումէն յետոյ, Արմաշու Զարիսափանը տանելու իր սղան: Կրօնական զգացումը խորագոյն զգացական տարրն էր մէջն ինք թրքախօս Հայէ ներս: Ս. Յարութիւն, Իջման տունար, Ս. Կարապետ եւ ուրիշ ուխտավայրեր դարերով հրապուրած են կեսարացի մեծազօրք աղաները: Զարկերը սպաննեցին այդ սրտեռանդ թուրքը: Բոլոր գաւառներուն մէջ: Ինչ Հարիւրին, ուխտադնացութիւնը խափանուած պաշտամունք մըն էր բացի Արմաշէն, որուն նախկին վանահայրը, այդ շրջանին Պոլսոյ պատրիարքը, յաջողեցաւ կերպ մը գտնել հանրային հետաքրքրութիւնը վառ պահելու Զարիսափանի պատկերին շուրջը, նոյն ատեն տպահովելով դնացքին կարելիութիւնը: Կեսարացին անծանօթ չէր այն հրաշքներուն, որոնք մէջն տարի կը կատարուէին Արմաշու տաճարին մէջ, — ընդհանրապէս՝ կապուած անգամներու, լեղուններու փականքին արձակումով: Ինչպէս ու կոյրերը: Այդպէս կը վկայէին «Է լուր աշխարհի» Պոլսոյ թերթերը ու նորընծայ քահանան, որ զպրեւձանքի աշակերտութիւնը իր նոր ստղարէզին համար շահագործել կը տեսնէ շար:

Հաճի Մարութ արան, նման մէջն կեսարացիի, չփախցուց տեթը: Պիտի դնէր իր տղան բնկեր, դէպի Արմաշ Մաթիկին ուղեւորութեան: Այս որոշումին մէջ անհկա ունէր գործնական նպատակներ: Մէկ ամիս ճամբորդութիւն, իր կարծիքով, աւելի կ'արժէր երեսունըրկուց ամիս զպրոցէն: Աշխարհը ճանչնալու ամենէն շիտակ ու կարճ կերպը, ճանչնալ էր ստեղծ, ձեռքով, աչքով: Մեղք, որ իր գործերը կ'արդելէին դինքը: Միւս կողմէն՝ անոր հաւատքը խոր էր ամենակարող Սուրբ Կոյսին: Թող Զարիսափանը անզամ մը նայէր հսկայ այդ երեսասարդին ու ատիկա բաւական էր, որպէսզի հաշտին անոր կայերը հաշտին ու լեղուն: Կանգալառ, անհկա կարգադրեց ճամբորդութեան թեքնիք պայմանները: Տղուն համար հանկ օրինաւոր անցագիր: Մեյիք օգլու Մաթէոսին համար ալ, բացի անցագրէն, «բերդի պէս» ամուր վկայագիրը կատարարիչ պէյին: Հաճի Մարութէ աղային պապենակուն «Է՛՛՛՛՛՛՛ Անրը» (պօտի) կաշնպատ, բայց սակեկուռ, անցաւ տղուն մէջքին: Ոսկին բախտ, առողջութիւն կը բերէ: Ատիկա հաւատքն է ժողովուրդին: Հաղորդուեցաւ երիտասարդը մեկնումը կանխող կիրակին: Ընդունեց ազգականներուն այցն ու նուէրը, համբուրեց հօրն ու ծօրը ձեռքերը, զեղած, սիրտ երած (ս՛՛՛՛՛՛՛ կ'ըսէր իրեն, թէ ա՛լ չունէր տեսնելք այդ դէժերը) ու քահանայէն յատուկ յանձնարարականով մը, յառաջ Աստուած, ինկան ճամբայ, դէպի արեւմուտք:

Չե՛մ կրնար այդ ճամբորդութեան հետեւիլ, հակառակ անոր շահեկանութեան: Մեր կորուստները ուսումնասիրելու համար դինաւորուած դպրերը կարծոյ մէջ պատուած էր Ատանայի առաջնորդին ծածկագրութեանց թուղթերը: Իր մինակութիւնը եւ աշխատանքին մեծութիւնը դիրտը կը հերքէին: Գործի մը դէժ, որ ընդարձակ կազմակերպութեամբ մը միայն կը դառնար կարելի: Պիւզերու գանցառումը զգալի՝ կարիե՛ն Կեսարիա, կ'ըլլար շեշտուած վիճակ, Կեսարիայէն դէպի արեւմուտք: Մեր ժողովուրդը այդ բայց հողերուն վրայ, բանակներու քառուղիներուն, ձգած ըլլալու էր դաշտերը, ապատանելու համար քաղաք, ուր ճարտար պետեր կերպ մը ճարել գիտէին չմեռնելու:

Մինչև այժմարած Ակոյի քարայրը մեր գոյզը անցուց շատ ու շատ «դժուար շատորդներ»։ Այս փորձանքները պայմանաւոր չէին միայն ընթացիկ ապահովութեամբ, որ միահեծան կ'իշխէ թուրքերուն տիրակալած Հոգեւորուն վրայ, իրենց իսկ կամքովը։ Մտղիա՛հարը՝ ուրիշ երկիրներու մէջ անհետացած, դեռ կ'ապրի Հանրապետական կառավարութեան բարեացակամ Հովանիին ներքեւ։ Այդ փորձանքներուն վրայ կ'աւելնար մօրուքը ընկեր Մաթիկին եւ դժուար բացուող բերանը նորընծայ Սեդոյին։

Կեսարիոյ գաւառին կառավարչը, անշուշտ պէյ մը առնուաղն, բան մը կ'արժէր Հարկաւ, իր վկայագրէն ու ստորագրութենէն, բայց ատոր Համար կարողացող մը պէտք էր։ Ու ճամբու պահանջները քիչ անպամ բոխատուր կ'ըլլան այս դիժէ տասնապետներով։ Այդ կայաններուն մէջ ընդհանրապէս ճանդրայէտ տրարածներ էին այդ շաւուշները, ա'լ գառամ՝ բայց իրենց պաշտօնական կնոջ քով կապած ուրիշ մը, քանիւ նոր մասած, որուն պոկունքէն արիւն կը կաթէր։ Արուններու պակասը հզօրը ըրած էր այդ երկրին մէջ թիւով դերպանց։ Տեսակ մը կապանք, այդ տարպանդները շնորհւած անոնց, մերձակայ քաղաքներու երիտասարդ Հարիւրապետներէն, որոնք անոնց յոյնքան մատուցի կիներուն վայելումին համար կը հեռացնէին զանոնք սա պաշտօններով քաղաքէն, ու անոնց ծեր օրերուն կու տային ճամբորդները շահագործելու ազատութիւնը։ Ձրի վաստակիլը անփոխարինելի վայելքն է բնաւ շվաստկողին։ Այդ տարպանդները խրճիթներ էին, սայլանի մեւով, շինուած ցտիւէ, ցեխէ ու եղէգէ։ Ախրո ալ, սրճարան ալ, ննջարան ալ, դիւնարան ալ՝ մէկ տանիքի տակ, Վիր կառուցուէին — ո՛վ մեր բառերը, ի՛նչ կը քաշէք մեր ձեռքէն — պետական պիւտճէն, այսինքն՝ ոստիկանին քամակովը։ Ու փոխարժէքը կ'անցնէր Հարիւրապետին դրօշմը, Հայրենասիրութեամբ։ Ծամբաներու բաժանման կէտն էր յաճախ յարմարադոյն վայրը այդ խուղերուն։ Ծամբորդը պարտաւոր էր կանգ առնել անոնց առջեւ, ժամի թէ ամբամտակ։ Մտնել ներս, ձմբան, խոշոր կրակին։ Ուտել Հաց ու պանիր։ Կազդուրուիլ թէյով կամ սուրճով։ Ու վճարել։ Բայց պէտք է դիտնաք, որ այդ ճամբաներու թափառականները չըլլիկ փերեզակներ են յաճախ, որոնք շոր օրտան մէջ շորս Հեղ շորս տասնոց շին բերեր քով քովի։ Ու պարտաւոր են օրը առնուազն երկու Հեղ ցնծալ այդ բնիո՛նը։ Քրիստոնեաները, ջարջարիչ քանակով Հայեր, Հոն կ'ենթարկուէին մանրակրկիտ զննութեան։ Իրենց ունեցածն ու շունեցածը կը խուզարկուէր։ Իրենց անցադիրները (այն ատեն գոյութիւն չունէր անցադիրը) կը կարողացուէին զօրութեամբ, այսինքն՝ կնիքին, ապագիրին, սիւնակներուն եւ կենսագիրներուն նրբախոյզ ստուգումովը, վասնորի անդրադէտ շաւուշները աչքի զօրաւոր յիշողութիւն կ'ուսնենան երբեմն։ Ի Հարկէ, կարելի բան չէր, որ ըլլար գողցուած հսկայ կնիքը, ան՝ որ ճիւղմտիցն նախարարութեան պաշտօնանիւն էր ամէն պետական թուղթի ներքեւ։ Ու չէին կրնար քով քովի դրուիլ միւսները, գրագէտ, դանձապետ, արկղակալ, դիւանի անդամ եւ տակաւին ուրիշներ, իրենց գիրովը ու կնիքովը։ Ի Հարկէ, անցադիրները չէին կրնար պատկանիլ կրողէն զատ ուրիշի, թէեւ այս արդար տրամաբանութեան ճիշդ Հակառակը պնդէին առնուառն անցորդ քննիչներ, երբ կեցուցած զանոնք զինուորական դերքի մէջ, կը յանդիմանէին անխնայ, թրջական զօրաւոր բառերով, սրոնք այնքան գոյն ու թանձրութիւն կը փոխադրեն ականջներէն ներս յանցաւորներուն։ Կը յանդիմանէին դիւանք իբր նարկիլէի ու սուրճի Հերոս, անկարող գատնու, ճամբորդներուն մէջէն, գողները, զոմիթաները, բանտի փախստականները եւ ամէն կարգի շարագործները, որոնց Հոտը առնելը պարտականութիւն էր անոնց քիթին, թթախտով անխաղած ու ա'լ անընդունակ զործօն ծառայութեան։ Տեւական այս սաստերը, զոգութեան յաճախի գէպերը,

մեծ ոճի յուղարկաւորութիւնները ամէնէն բանուկ խճուղիներուն վրայ, երբ մնալ ալ չարութեան, գազանութեան պահանջ մը կամ խառնուածքի հետեւանք արիւնկղակ խորութիւնը շատ տխուր անունով կը համբաւէին առ ու ան տարպանկները: Ու վա՛յ անցորդներուն:

Այս ամէնուն համն ու փաստը ընկեր Մաթիկը պիտի առնէր այդ դէպի արեւմտեաց արշաւէն: Աւելի՛ն: Վսեմաշուք կառավարիչ պէյին վկայադրէն աւելի իրական փաստ մըն էր սուր ձորաքիկ մը, սա լեռներուն, հայր մը կզակին: Լեզո՞ւն: Բարեբախտաբար Սեդրակը կը միջամտէր հարթելու համար թուրքերէն հաղիւ իմացող ու պարսկաշունչ բարբառով Մաթիկին կնճիրոյ:

Ամէն կեսարացի ծնունդով արիրուն է:

Մեր գաւառներէն սչ մէկը իր մարդերը օժտած է խօսքի այս շնորհներով: Աւելի՛ն. ամէն կեսարացի սատանան իսկ կարող է համոզել սուտով, բայց, լաւ ուղիղէք, առանց կաշառքի: Սեդոյին այդ կապ լեզուն կը փակէր բոլոր միջադէպերը, բերանները քննութեան ենթարկելով ականաւոր տղթորին, որ ջուրով մը կը բռնէր ամէնէն գազան ցաւերը անգամ: Ու այսպէս, զաղա՛յն դաղա, գեղէ՛ գեղ: Ոչ մէկ տեղ հայ առանձին դիւղակները, որոնց հեռաւոր կարօտը կ'արէր Մաթիկին երակները, Սասնոյ լեռներէն: Ամէն ինչ թո՛ւրք. բանով մը նման թիֆլիսի այն թաղերուն, ուր դեռ թաթարները կը բնակին կաշի գործելով, աղբին ու որդին մէջտեղը, մզլած մննելունքու պորտէն շտապեղուտը տուներու գիծով մը: Երկաթուղիին մօտերը երկիրը կը փոխուէր: Կայանները, որոնց ոճը հակադրութիւն մըն էր թրքական մութ ու նկուն շինարարութեան: Մզիթներէ դուրս չէնքե՛րը, բաւական մեծկակ: Ինչպիսի Ատաբազար ու... Արմաշ:

Զեմ հետեւի բերկաթուղիին: Ճակատագրական գիպուած մը կտրեց այս ուղեգիծը ու մէկ երկու հերոսները Պրուսայի մարզը, անկից ալ մահուան առաջնորդեց: Այդ դիպուածը հանդիպում մըն էր Պեյիճիկի կայարանին մէջ անդուռն հայոց առաջնորդին: Պատուհանէն Մաթիկը նշմարեց ակնոցաւոր եկեղեցականը, թաւիչ փակեղ, քայուածք, կեցուածք, նայուածք տարօրէն հարգատուութեամբ կը յիշեցնէին Ատանայի առաջնորդը, որ խօսած էր իր ընկերներուն մօտին, ներկայացնելով Պեյիճիկի առաջնորդը ինքնատիպ մարդ մը, աղեղնիկ ու ըմբոստ, թուրքերուն հետ վարուելու մէջ առանձին տաղանդով ու քիչիկ մըն այ... յեղափոխակա՛ն:

Մաթիկ Մեյիքեֆանեանց իջաւ վակոնէն, մօտեցաւ եկեղեցականին, առաւ օջը, բարեւելով զինքը անունէն: Թուսահայ շէշտը թիթիւ մը պղտորեց եկեղեցականին հաճ արտայայտութիւնը, որ աչքին պոչովը գնացքը շրջապատող ուսիկանները կը զննէր: Ամէն կառաչար, այդ գիծին վրայ, կայարաններուն հոյակապ ամայութիւնը ողևորող ու գունատորոզ երեւոյթ է: Անոր սպասումը, ծուխին ու սուրիչին հեռաւոր ալիքները մէջտեղ կը հանեն իրենց բուններէն, սպահնափութեան այդ պաշտօնեանները, որոնք իրենց յատկացուած սեղերուն փոխ կու տան իրենց դատան արձանները ու կը դիտեն:

Եկեղեցականը, կէս դրօսանքով, կէս դործով, իջեր էր կայարան, քաղաքէն կէս ժամով աւելի ցած: Այդ շարթու կը սպասուէր երաժշտութեան նոր ուսուցիչ մը, Գարամանէն, ուր սկիզբ էր առած Պեյիճիկի առաջնորդին եկեղեցական ասպարէզը: Մաթիկին հետ իր հանդիպումին տհաճ զգայութիւնը զուցէ արդիւնք էր այս շփոթութեան, վասնցի նիդն հասակով զպրապետ մը մեղք մըն էր ժամուն: Բայց պատրանքը չտեսնեց երկար: Մանօթացո՛ւմ: Ատանայի առաջնորդին անունը, ողջոյնը, յանձնարարականը վերջ դրին արհաճ ու անապահով այն բունին, որ անակնկալին մուտքն է մեր Ծանօթէն

ներս: Տաք, տնվախ այս խօսակցութիւնը, մա՛նաւանդ կենցաղադիտական ծեփձեքումը, որ առւս շրջանակներու նուէրն էր անոր, դրակեցին ուշադրութիւնը մարդակարօտ եկեղեցականին, քիչիկ մը խենթ ու անսանձ, խօսելու համար մինչեւ Պոլիտ երկարիւ մը յանձն առնող: Անոր պնդումովն էր, որ ուխտագնացութիւնը յետաձգուեցաւ անորոշ ժամանակով: Պելիճիկն ալ հասարակութեանը էր, տեսնելու արժանի ժողովուրդով մը, հին բարքերու երկընդայնացու: Շրջանի գեղե՛րբ: Ընկեր Մաթիկը չէր կրնար դաւել իր առաքելութեան: Նոր դաշտ՝ իր աչքերուն ու մտքին:

Առաջնորդը, պոլսեցի, խօսուն, եռանդուն, արտակերպ, զրազեցուց զանոնք մինչեւ կէս դիւեր: Սեղրակ Տոմպայեանը համ կ'առնէր այս լեզուանի ու թուրքերէնը կենսարացի մը պէս արեւապետած մարդէն: Չե՛մ խորանար այդ տեսակցութեան, որ ունեցաւ աւելի զոչոյ զնոցք: Որուն մէջ մաս առաւ խօսքէ այնքան ժլատ երիտասարդ ուխտաւորը, իր երկրին բերքը, ապուխտը պաշտպանելով սերաստական խարդախուած տեսակին դէմ: Բայց տեսակցութիւնը, սա շատ կտրուե՛ր պարագային դուրս, ուշադրաւ էր նոր երանգով մը: Առաջնորդը, արժաւական ըլլալով հանգերձ, կը թուէր թիֆլիսէն, այնքան արդիական էին իր գաղափարները ումէն հարցի շուրջ, բայց ասիկա՛ քաղաքներուն տմնէն յետադիմականին մէջ, ուր հայ կիները դեռ թրքական սաւաննէն չէին ուզեր դատուիլ եկեղեցի երեւալու ատեն: Անոր տարբերութիւնը Առանայի առաջնորդէն, օտարութիւնն էր հոնդէպ յեղափոխութեան: Անկորպէն ասդին արդէն այդ զգացումը կը ստանայ տարբեր կերպարանք: Այդ լեզուով ալ թրքացած գաւառներուն մէջ յեղափոխական զգացումը ատեն չէր գտած քիւրդականալու ու փոխանակուած էր շատ ամուր ընդդիմութեամբ մը, պահպանողականէն ալ անդին: Պատուական հայեր, որոնք Աւետարանին պատգամները լրիւ գործադրելու, խորին գահուցակութեամբ մը կրնային թուրքերուն ատնանքին մասնել իրենց ներկայացուած ունէ հայ, խոռվարար մտկերով, ու ասիկա՛ իրենց ազգին ծառայութիւն մը մատուցանող հողիով: Առաջնորդը թերահաւատ ալ արդիւնքէն, թուրքերը աւելի մօտէն ճանչնալուն: Պոլիսը զուր անդը չէ, որ մայր է քաղաքներու: Անոր դատումները հակառակն էին Առանայի տաք դուրս առաջնորդին, որ Եւրոպա ըրած կուտակալի մը դիւանագիտութիւնը կը ասրածէր թուրքերուն զանգուածին վրայ:

Մաթիկը շուտով զգաց միջնորդախ այս փոփոխութիւնը ու ծածկել ջանաց ինքզինքը, բայց զմէկ ոտքը բացը ձգած, ինչպէս կ'ըսեն զեղերու մէջ, անճարակութիւնը երբ կը պատկերեն: Պելիճիկի առաջնորդը հասկցա՛ւ: Չհասկըցա՛ւ: Իրողութիւն էր, որ արդիւնք անոր հրապարակ դնել ատամնարուած ժական տաղանդը: Պոլսոյ մօտերը — երեք-չորս հարիւր քիլոմէթր հազիւ պիտի բաւէր Սուլթան Համիտին վախերուն — այդ անորոշ արհեստները, օտար ու նոր դէմքերը կասկած կրնային հրաւիրել: Քանի ասորի կայ, որ Երլաղ պալատը կը պաշտպանուէր այդքան հետունքէն: Ոտիկանութիւնը, վեհապետը շոյելու իր ետանդին մէջ, ես չէր կրնար որեւէ անհիթեթութենէ, հերքէ է, որ անհիկա ներկայանար պալատին հետ կարելի ազերսով մը ու ինքզինքը կը գերադանցէր իր գիւտերով: Առաջնորդը այս նկատումներով է, որ դարձնալ զգուշացուց անհիկա շատ թափառել, քաղաքը տեսնելու հոգով ինքզինքը ենթարկել ուշադրութեան: Բայց մարդիկ զիրենք կ'ըսեն, իրենք կը լրսեն: Յարդը օրն իսկ, օգտուելով առաջնորդին պահ մը կատաճարչատուն կանչուելէն, Մաթիկը մտաւ դպրոց, որ մօտն էր եկեղեցիին: Ուր անոր անխուսափելի Խրիմեանը, սուր մօրուքիկը եւ արեւելահայ բարբառը դարձան առարկայ լուրջ հետաքրքրութեան: Մտաւ վէճի տիրացու Արուսիկ հետ ու պապունձեցուց հայերէնի օւտուցիւրը, որ մեղքը կը գործէր Սմբատ Դաւթեանի

«Փուճը» Բ. Էն Հայերէն դաստիարակչութիւնը Առաջնորդը զատապարտեց կառար-
 ւածք, կէսօրուայ ճաշին: Բայց սխալը գործուած էր: Նոյն իրիկունն իսկ,
 ոստիկան մը երկու ճուխտաւոր էֆէնտինները հրաւիրեց զբանի մը բոլորէի Հա-
 մարը կառավարչատուն: Կեսարիոյ կառավարչին փառաւոր վկայադիրը ու
 Վերմ յանձնարարականը կը չէր քանար ընկեր Մաթիկին նոյնքան փառաւոր
 այլուրութեամբը երկրին պետական լեզուէն: Տասը տարիէ ի վեր յեղափո-
 փական Հալածող ոստիկանութիւն մը Հաստատ, ա'լ շահուած տեսակէտներ
 ունէր իր խուզարկութեանց մէջ անվերջ պարիսկեղով: Անոնցմէ առաջինը՝ լե-
 զուն: Բուր վանեցիները, մշտնիները, զէյթունեցիները իրենց բնիկ սահման-
 ներէն դուրս կտակածելի տպանքներու կարգը կը դասուէին: Իսկ անոնք, ո-
 րոնք պարսիկի մը բերնով կը խօսէին թուրքերէնը, վաւերական Էմիրա,
 որոնք ձգած կողմաւոր, մտեր էին Հաւատարիմ Հայ ժողովուրդին մէջ, անոր
 տունը քանդելու: Մաթիկէն պահանջեցին բժշկական վկայական, զոր չունէր:
 Կտակածի տեղի տուաւ իր ծննդավայրը, Ատանան, զոր ոստիկան մը կը ճանչ-
 նոր քիչ մը, գինուորութիւնը Հոն անցուցած ըլլալուն: Ատանա-Կարին-Կե-
 սարիա-Գոնիա-Պելիճիկ-Առաքաղար... քաղաքներ էին, որոնց մէջէն այդ մօ-
 րուքիկը միտ պտտայ մը չէր, որ կը կատարէր քննիչ քարտուղարին կարծի-
 քով: Սեղաւիկին պատասխանները, իրենց վայելչութեամբը, անթերի թուր-
 քերէնովը, աստիճան մը աւելի կը շեշտէին Մաթիկին ժութ Հանգամանքը:
 Առաջնորդին անձնական միջամտութիւնը դեր մը ունեցաւ: Պուսեցի, ոստի-
 կանապետը կը յարգէր ազատամիտ ու գաղափարականապէս զգոն եկեղեցա-
 կանը: Անոր Հաւատարիմ անշուշտ պետի փակէր այդ թիւրիմացութիւնը, Է-
 թէ քաղաքը ծու չըլլար Պոլսին ու երկաթուղիի վրայ: Երգեկառ զբոսաբերը
 բացող զորուոր կազմակերպութիւն մըն է: Տասը-քսան տարուան մէջ անի-
 կա կը յեղաշրջէր գարուոր մտայնութիւն ու ապրում: Ոստիկանապետին գիւտն
 էր ճատրաքաղաքին զաները շատ Հեռուներէն բռնելը: Պոլսոյ վրայով Հա-
 մարուան կողմէն ոստիկանութիւնը մինչեւ Էսկի Ենի-Եր' այդ զօտին կը նկա-
 տէր առաջին շրջանակ: Երկաթուղիին պաշտպանութիւնը կը Հպատակէր
 Երլորդի ապահովութեան: Այս սկզբունքն էր, որ ամբողջապէս շրջանակին
 Համար կը փնտռէր ամէնէն փորձ եւ բանիմաց արարածները, որոնք մայրա-
 քաղաքին մէջ քանի մը տարի գործօն ծառայութեանէն ետք կ'ունենային արագ
 բարձրացում ու առատ թօշակով կը վարձատրուէին, թաղաւորին մասնաւոր
 Հոգածութեան առարկայ դառնալով: Անոնց զգեստն ու ապրուստի պայման-
 ները կը տարբերէին երկաթ գիծէն բաց ինկող զաւաւներու Համաստիճան
 պաշտօնակիցներէն: Պոմպա եւ զէնք փոխադրող Հայերուն Հեքիաթը յաճախ
 տեղական ոստիկանութեանց դաւերով, իրականութիւն կ'ըլլար վազոնի մը
 մէջ գտնուած սնտուկիկով մը, զոր միշտ մոռցած կ'ըլլար այս ու այն Հա-
 յը: Անդամ մը, չղթալով Պոլսի փոխադրուելէ յետոյ այդ Հայը թող աշխա-
 տէր ապացուցանել իր անմեղութիւնը: Մնացեալը ծանօթ է ձեզի: Պելիճիկի
 առաջնորդը բաւական տաղանդ ունեցաւ՝ ապահովեցնելու Համար ապահովու-
 թեան պաշտօնատարը ու առաւ անոր ձեռքէն ուխտաւոր էֆէնտինները:
 «Սկիզբն էր երկանց», ինչպէս բանաձեւեց իմաստուն եկեղեցականը, կրք գա-
 նոնք իր սենեակը տարաւ: Այս առաջին մկրտութիւնը, թուրք ոստիկանու-
 թեան Հետ, սարսափի մթնոլորտէ մը, զէմ գէմի գալը զորուոր գիծերով կը
 մնար սեւեռուած Մաթիկի ուղեղին, քանի որ ամբողջութեամբ Հոլովոյթէ մը յետոյ
 այդ դրուաղը պատմած ատեն անիկա շէր շփոթեր իր զգացական վիճակը այն
 միւսներուն Հետ, վասպուրականէն ու Տարօնէն, ուր մշտական Հոգեբանու-
 թիւն էր մահը, բայց զէնքը ձեռքին, կոխէ ետքը: Հո'ւ: Մասնութիւն: Ան-
 շո'ւշտ: Ինչպէս կը Հաւատարիմ երիտասարդ ուսուցիչ մը, առաջնորդին սի-

րիլին, զօրաւոր պաշարով, որ Սեւանիկի մէջ Խոտաի բրած, խօսելու ու գրելու շնորհովը վարժարանին ուժը կը ներկայացնէր, առարկայ ըլլալով խուլ ու սողոսկուն հալածանքի, ինչպէս գիտնն ընել այդ դժբախտ ասպարէզին մէջ բոլոր անկարողները, հանճարային կատարելութեամբ կազմակերպելով դաւազարական աշխատանքը, իր գործին նուիրուած ու անկէ դուրս ոչինչ տեսնելու գիշող աշխատողին ոչմ: Մատնութիւն: Ու կատարուած՝ առաջնորդին հակառակորդ խմբակէն, որ առաջին սողոսկողն էր անոր առջին: Մաթիկը մտած էր մտանցի գօտին, զոր չփորձեց սակայն անդիտել կամ չափազանցել՝ ինչպէս ընել է սոփորութիւնը յիմարներուն կամ շատ իմաստուններուն: Կիլիկիա՞ն: Ինչպէս չիլի, տրտում կարօտով, ու պատուարներ սուգով՝ անոր կուսակալը: Բանաստեղծ, պատմաբան, արար ու պարսիկ քերթողութեան մէջ մասնագիտորէն զարգացած անձնաւորութիւն, որուն դէմքէն վերտարուած էր թուրքը եւ լեզուն այնքան դաշն աղերսով մը կը յայտնաբերէր բարձր իմացականութեան ու ազնուական ոգիին հաշա խանուրդը, այնքան քիչ հանդիպելէ վարիչ շրջանակներու մէջ: Որ իր ներկայութեան էր ընդունած հիւանդ ուսուցիչը: Թօսած հետք մտերմարար, ինչպէս կը հաստատէր թարգման եկեղեցականը:

Մաթիկ չէր գիտեր, որ Միջերկրականը, անոր արեւելեան աւազանը հեռու կ'իյնային Պոլսէն, որ վարչութեան քաղաք, պէտքը չէր զգար իմաստին եւ ոգիին: Իր պատմութիւնը արդարացումն էր այդ վարկածին: Անիկա չէր գիտեր, որ ժամանակակից կարգերուն մէջ բանաստեղծը ամէնէն տխուր սպասներուն իսկ անտրժան կը դաննէք մենք ու շատ-շատ, թուրքերուն նշման, շէզոք, անկարելուր գօտիներու վարչութիւնը կը վառահինք անոնց, երբ իրր անբազմալի աքսորի ալ չենք դատապարտեր, դյուխնուն վաթթելով բարարտ գաւառ մը, ձանձրոյթն ու մալարիան: Թորիմաց վեհապետը մայրաքաղաքին ու անոր ճատալին գօտիին վարչութիւնը կը վերապահէր միայն ու միայն իր մարդերուն, բոլորն ալ ամենագուշակի ծագումով, բանակին ընդերքէն զեղծումով ու ստորնութեամբ իրենց մակարոյնի յնդաշրջումը կատարած ու իրր մեծ, պսակաւոր անձնաւորութիւն հասած մինչեւ կայսերական պալատ, թիրախը՝ բոլոր բախտանդիւրներուն, հանած-վարածներուն ու թուրք պատմութեան քաջամանսթ հերոսներուն, ենիչէրի կամ նոր բառով՝ աւազանի, որոնք գիւղակի մը կառավարչութեան կամ տասնապետ զինուորի մը աստիճանէն մինչեւ նախարարութիւն, եպարքոսութիւն, սպարապետութիւն ճամբայ կը հարթեն, արժանիքէ դուրս ամէն միջոցներով:

Այժմաշական վարդապետին անձնական երաշխաւորութեամբը, անոնք շարաթ մը հիւր մնացին առաջնորդարան: Առաջնորդը Մաթիկին մէջ կ'ողջունէր այնքան երկար ատենէ ի վեր կարօտուած խօսակիցը: Հակառակ երկտասարդ տարիքին՝ իւրացուցած էր օս մենապարութիւնը, խօսելու, առանց վիճարանութեան (կէտը, որ անիկա կը գատուէր Մաթիկէն) հանդարտ ու համով: Այս կարգի վարժութիւններ տարիքին հետ կը ստանան գաւառներու եղիսկոպոսները: Անոնք իրենց ձանձրոյթը կը պարպեն անվերջ դրուագումներով, միշտ մէկու մը գլխուն, որ մտիկ կ'ընէ սրբազան յեղումը ու ակումները կը հիւսէ իրարու՝ յօրանջը խեղդելու համար: Երբեմն հանելի, սրամիտ լեզու մը կը խնայէ խեղճ տիրացուներու կամ լուսարարներու գլխուն՝ սանահատակութիւնը, բայց ասիկա բացառութիւն է: Պեխիճիկի առաջնորդը աստեղծ էր: Անոր հետ անցուած այդ շարաթը անմոռանալի քանդակի մը նրման դամուեր էր Մաթիկին ուղեղին: Անխառն վայելքի կարեւատեւ շրջան, որուն մասին բերանացի աւանդումներ գեռ ունէին գոյութիւն էլ միաձնական հին սերունդի ծերացած վարդապետներէն, չթիւռ մը կոթ չեղած մարդեր,

որոնք իրենց դատունթևան մէջ քրոնիկ կը գրեն կամ ասոր պատճառը կ'ըլլան մեծ տաղանդով, յանկուցիչ, ու համոզ:

Մաթիկը բախտը կ'ունենար վերջապէս հաստատելու զտանկահայերի մէջ էլ՝ դրական միտք, ու ջերմ խառնուածք, դերձ յաւակնութենէ, մեծադարական կոչտութիւններէ, եկեղեցական եւ աշխարհիկ դասէն համանպասան: Ատիկա անշուշտ յանձին առաջնորդին, եւ թանկադին ուսուցիչին, այնքան տարբեր վասպուրականեան ձիւղ ու պնդերես տիպարէն: Առաջինը մեծ շնորհներով խօսելու, խօսուածքը համեմելու, Մաթիկին ուղեղին մատչելի ըրաւ անմահ Բիւզանդիոնը, ռուսերուն երազած ցարերու քաղաքը, անոր Հեքիաթային տեղորովը ու գարաւոր կուտակումներով գոյաւոր նախնացած մտայնութեամբը:

Առաջնորդը, ճամբորդական գրականութեան մեծ սիրահար մը, Պոլիսը շուսփող զիրքերը իրեն էր բրած, այսինքն՝ անձնական ապրումով քիւրեղացուցած: Այդ յանախումներով անիկա ձեռք էր ձգած մտածումներ տաբաղելու զիրքին Եղանակ: Ժողովրդագետի իր աթոռը զիրքերու այդ սոսնցտումներուն աւելցուցած էր մարդերէ, անոնց թերութիւններէն, ծիծաղելիութիւններէն մեծ հասկացողութիւն մը: Յետանկեալ այդ քաղաքներուն մէջ եկեղեցիին պետը ամէն բան է ու մարդոց ասուպանքը միշտ մեղքի մը լարը ունի սնունդ կամ առաջնորդ:

Տէր Թաթուլ ծայրագոյն վարդապետը — պահ մը տանք այս անունը այդ մարդուն — ո՛չ միայն գիտած, այլ վերլուծած էր մարդկը այնքան անբան ընող մեծ կիրքերուն գոպանակները ու դիտէր զանոնք ցայտուն ընծաշելու դադանիքը: Արժանի՞ք: Բառք չէ էականը, այլ երիտասարդօրէն ծեր այդ ահպարներուն անսխալ ճշդումն է ներկայացած թնճուկէն, ինչ որ Թաթուն աղպարը եղաւ անոնց: Խղճմտանքի վարդապետները միշտ յիմարներու հետ գործ լուծեցան: Առանայի եւ Պելիճիկի առաջնորդներուն — դասընկերներ — տարբերութիւնը: Մաթիկը գտած էր ատիկա ու բաւ, այդ ատիթով ծանր նախադասութիւն մը — զմեր եկեղեցին կուսակցութիւն է հիմա»: ..Տէր սխալեր այդ եկեղեցիին հետ շատ ալ գործ լուծեցած յեղափոխականը: Մեր ալ քաղաքականութիւնը այդ ատեն կը դառնար անոնց փէշերով: Զօրաւոր տուրքեր չպակսեցան այդ մարդոց: Այդ տուրքերուն մէջ, մեծէ գուրս աշխարհը կը դադրի իբր բառ տպաւորելէ, երբ ներկայացուի այդ զիծով օժտուածներու բերնէն ու կ'առարկայանայ լսողին ներսը:

Մայրապոյն վարդապետը ունէր շնորհը, ձեւերը՝ — կին թէ մորմար — խտացնելու եւ զգալի ընելու: Ատիկա քիչերու վիճակուած առաւելութիւն մըն է: Նիւթական մարզէն դուրս կը յօրինէ հարուստները, բարոյականէն՝ աշխարհականները, արուեստագէտները: Անոր բառերուն մէջէն ընկեր Մաթիկը աւշոփը կը շուսփէր յաւիտենական Պոլիսը, որ խոց-խոց բլլուած լեռի կը նմանի, հորիզոնը ժանկոտ: Ոսկեղջիւրը, ցամաքին միւտած թմահաճ զաշոյն, որուն չէր կրնար հաւատալ ջուր կամ կապար ըլլալուն: Ու Վոսփորը, ափերուն այլապէս սուտ, անկարելի հեքիաթովը, երբ բլուրի մը մէկ ծալքը կը բացուի յանկարծ ու պալատ մը կը ստանի ջուրին եւ կանանչին ընդմէջ, այնքան անակնկալ, որ կը թուի դուրսէն գրուած ու փոխադրելի: Անոնց մարմարեայ քառափունջին սանդուխ ու նաւակ: Ու այս նաւակներուն մէջ հանրմները, որոնք կը թուին նոյնքան անիրական, երբ բնահողին ու մետաքսին փրփուրին մէջ իրենց զէմքերը հաղիւ կը բանան, խմոր ու հեքիաթ, այնքան՝ որ մարդ չի հաւատար անոնց երես ըլլալուն, ու կը կարծէ փոխ դրուած բան մը, բանուած մարմար մը՝ ոսկեղոյն կամ կապոյտ շարերուն վրայ:

Մայրապոյն վարդապետը զուր տեղը չէր, որ բանաստեղծի մը մական-

նունը կը կրէր: ... Բայց պէտք է քաշել... Պոլիսը ձգելով ուրիշներու վրձի-
նին: Աւ շմռունալ կրիտաստրդ ուտուցիչը, Նիկիոյ շրջանէն, Հին ու անուանի
ընտանիքի մը արժանաւար շատաւիզ, որ անոր պատմեց իր գեղէն, անոր յի-
մար քաջերէն, շրջանին Հոծ հայութենէն, այդիներէն ու ձիթենիներէն: Ան
էր, որ Մտթիկին տուած էր իմ ալ անունը, իրը զարժանի տեսակցութեան»,
ինչպէս նաեւ մեր շրջանին վրայ մանրամասն, տեղագրորէն կատարեալ ծա-
նօթութիւններ:

Մտթիկը գիտէր, երբ ինծի եկաւ զէպի Հիւսիս բուր գեղերուն անուն-
ները, մօտաւոր բնակչութիւնը, վստահելի մարդերը, վտանգաւոր անցքե-
րը: ... Այդ շարաթը, աւա՛ղ:

Ծրագի մխմ անցել-գնացել
ել շեր դատնալու...

Քաղաքի կառավարիչին շատ քաղաքավար թելազրուսոյն անոնք Հրա-
ւիրուեցան իրենց ուխտը գործադրելու գէպի Ատաբազար-Արմաշ:

Այս հրաւէրը ձեռքաւարման բանաձև՝ ա մըն էր, երբեմն պործադրելի՝
սա դիծին վրայ, ինչպէս զիտել տուաւ ուտուցիչը: Այն ատե՛ն: Առաջնորդը
չէր կրցած հասկնալ, այսինքն՝ ընդունիլ կարելիութիւնը սա տղիտականին:
Մտկուայի ուտանողը անկարող էր խօսքէ կեղծիքի: Հարազատ յեղափոխա-
կան: Բայց դիւրին չէր այդ պիտակը հազցնել սա տղուն: Պոլսոյ մօտ վայ-
րերուն մէջ, ջարդերը կանխող պատանութեամբ ու անոնցմով արիւնտո երի-
տասարգութեամբ ամէն հայ չէր կրնար կազմակերպուած, մահադիր յեղա-
փոխականին այնքան վտանգահար ու վտանգաւոր տիպարը հայտնցնել սա
միամիտ, խօսուն, խանդավառ քարոզիչին, որ կը խաղար իր կեանքին հետ,
բայց առանց որոշ ծրագրի, ու այնքան դիւրաւ կ'ընէր մատչելի իր զաղա-
փարները առաջին հանդիպողին: Փոխա՞նկ: Բայց անոր լեզուն լուզիզամ էր
մարմնացած ու կը հանէր քար եօթը վարդապետի: Ի՞նչ, ուրեմն: Ես ալ ըրի
այս հարցումը անոնց նման: Աւ կ'ընեմ մինչեւ Հիմա:

Կառավարիչին հրաւէրը զանոնք ըրաւ գործնական: Ուտուցիչը, որ Սե-
լանիկի մէջ պուլկար յեղափոխականներ պահած էր քահանայ իր հօրը (ան՝
որ մեր այս պատմութեան մէջ երեւաց դաւաճանական արարքով մը, հա-
կառակ երկու-երեք տարի առաջ գլխուն զնովը օտարներ ազատելուն թուր-
քին կրակէն) մատուցին մէջ, ի քնէ արկածախնդիր, թելադրեց անոնց մտնել
մատուռը: Ատիկա յարմարագոյն ընթացքը կը ներկայանար տուեալ պայման-
ներուն մէջ, քանի որ այդ ճամբորդութիւնը պիտի ընէին այս անգամ պար-
տաւորուած, ոստիկանական հսկողութեամբ: Մտնել վախոն, բայց երկրորդ
կայարանին իջնալ վար: Անցնիլ թուրք քաղաքը ճիշդ մէջտեղէն կտրելով,
առանց ալ կամ մախ թեքուելու: Անցնիլ կամարակապ կամուրջը, Բարեւել
սպասող ոստիկանը ու անցնիլ, առանց ես նայելու խճուղի՛ն, որ կը խորա-
նայ դետահովիտը գէպի: Եղերական ուտիներ, որոնք հատնէին պիտի ճիշդ
բլուրին առիւն, այն կէտին, ուր եռափողակ ազդիւր մը մէջլքի հաստու-
թեամբ տու մը կը հոսի իր թերաններէն: Ուր եօթնադարեան եօթը նոճի եւ
երկհազարամեայ երեք սօսի հեքիաթի տեքոր մը կը շինեն Հիւզակի մը վը-
րայ, մէկը տանկական սուրբ մը, տեղական բարբառով — ստտակ մը, իր
զաղաղին մէջ այդպէս տեղաւորուած ով գիտէ քանի՞ դար: Անոր անապակի
պատուհաններուն երկաթեայ ցանց, ուր լաթի կտորներ, Հիւանդներու
գղեստներէն, նախուն հիւսք մը կը ստեղծէին: Խմել այդ աղբիւրէն: Ենդիլ
քիչ մը ալ, առնելու համար սովորական ճամբայ, խոցոտ ու կտրտուած,

ողնայարին միայն սաբերը պահելով տեղ-տեղ, — ինչպէս էին ճամբաներու կմախքները, խճուղիէն առաջ: Քալել վեր, մինչև գաղաթը բլուրին, ուր կոնքի ձեւով մեծկակ խոռոչի մը մէջ ծուարած է հայ գեղիկը: Անշուշտ անահողի էր կռու յայտարարել անոր միակ սափրիչին, որ գերագոյն բժիշկն էր գեղին, մահամերձները կէս ճամբէն ետ դարձնող, արեւն առնելու ժամանակ հիտուրթեամբ ու քրտինք հանող իր լախաներովը: Անտղի էր վարժարան երթալ, որ գետնայարի սննեակ մըն էր ճմրան միայն բաց, երբ տիրացու Սիմոնի իր ցանքը բնեյէ ետքը, տունին փայտը խնայելու համար, մեծ ձիւնհարուն, կը հաւաքէր տասնեակ մը տղայ ու փոխ կը սորվեցնէր, ինչպէս նաեւ ծննդեան, միւսոն-կաթի ատղերը: Եարաթ մը: Յետոյ ժամով հեռու ուրիշ գեղեր, աւելի մեծ, աւելի կանոնաւոր, որոնք սիրով պիտի կիսէին իրենց շուքնցած հասցը Հայաստանի դարիպներուն հետ: Աւելի յետոյ, լեռնային գիծով ինչոյ նիկիոյ շրջանը, ուր քաղաքէ չափ խիտ բնակչութեամբ չէն գեղեր պիտի կրնային պատասպարել գիրենք, մեր պարզային լեռները շրջող ասպատակներուն խառնելով գիրենք: Այսպէս կը թելադէէր ուսուցիչը, վախճալով թրքական դուէ մը, քանի որ կտուրտարիչը հետաքրքրուած կը թուէր առաջնորդին հիւրերով: Հեռապիւր մը, Ատարազար, բաւ էր երկու օտարականները իրարմով վտանգելու: Մաթիկին ժորտը, առանձինն, հրաւէր մըն էր արգէն, անոր օտարութիւնը բարձրագոյնակ բարբառող: Կրնային այս բոլոր վախերը մնալ վախի վիճակին մէջ: Բայց թարմ էր ձերբակալութիւնը իրենց գողէն, իրեն ազգական հաճի Տիրանին, որ քեռորդի պէտ բան մը կ'իյնար ուսուցիչին: Զիթապտուկ էր քերած, քանի մը փարա չահելու: Իր տորազը — պիտիալո՞ն, որ պետական համազգեստի մը չափ հաղուադէպ էր այդ օրերուն տեղացիի մը միայն — կտուրտարիչը կը ներշնչէր: Ուսուցիչին անձնական երաշխատութիւնը հաներ էր զայն բանտէն, բայց չէր բուսած արգիլել անոր ձերբակալութիւնը Ատարազարի մէջ:

Թուրքերը մեղ նախատելու այդ նորը ձեւէն հտեռը կը զգային, օրէնքին հարկադրանքը զննելով մէջտեղ հո՞ն, ուր անձնական քմահաճոյքը կ'իշխէր: Այս փորձառութեամբ, լաւ էր քիչ մը ատեն յետաձգել Արժալը: Դէպքեր պիտի թելադէէին ատոր ալ պորձագրութիւն ժամանակը: Յետո՞յ: Աստուծոյ գիտնալիքն էր ատիկոյ: Ուսուցիչին վերջին խօսքերն էին, կայսարանի ճամբուն. — վստահիլ գեղերուն, որոնք օտարը կը պաշտպանէին, դեռ շարունակ բարոյականի մը ցուշմունքովը եւ կը ջնային տուն-տեղ բնել զայն, սանկ տուն-մնայ աղբիկ մը (քաղաքի երեսուննոցները շանցինն ձեր մտքէն, աղէտի մը զնով նշանածը կորսնցուցած ու նորի մը շարժանցած վարդի պէս աղբիկը, քաննէն երկուք-երեքով վարձ տուն-մնայ կը սեպուի) կամ թարմուկ այրի մը զննելով անոր կուշտին: Այսպէս ամուսնութիւններ բազմաթիւ էին: Վստահիլ գեղերուն, բայց երբեք չբացուիլ անոնց, վասնդի այդ մարդերը տարբեր էին իրր խմոր Վասպուրականի եւ Տարօնի գեղացիներէն: Զէին մտոցած իրենց ազգը: Բայց զայն սիրելու ձեւն ալ անծանօթ էր իրենց: Բացի եկեղեցիէն, ուր կը զգային իրենց տարբերութիւնը թուրքէն, եւ խուլ այն տառապանքը, զոր թուրքերու բռնութիւնը շամանդադի նման կ'աղար անոնց դիտուն, չունէին ուրիշ հող: Հաց ու կնիկ: Հող ու գաւակ: Պիտի չհասկնային բոլոր Մաթիկները: Այս գիտողութիւնները անշուշտ անմաստ, չըսելու համար հոստոսական էին ընկեր Մաթիկին, որ ականջին հաւատարիմ, առաջին դորձը պիտի ընէր, առաջին հանդիպած գեղին մէջ վարձապետ փնտռել ու անոր ուշացած պարագային, չկրնայով զսպել իր անհամբերութիւնը, գեղացիներուն հետ վէճի սկսիլ, Որիմեան քննադատելով, գիտնալով հանգերէն, որ այդ անունին արտասանութիւնը լաւ էր գինքը փորձանքի անելու, դեռ կ'իլիկիոյ գոնքէն:

Ուսուցիչը թելադրեց դարձեալ շատ շնորհալի, այսինքն գրուշանալ՝ ուսուցիչը չրաւիրող արարքներէ, մանաւանդ ազաններուն հակառակ դասերու պաշտպան կանգնելով: Երկու օտարական թուրքին մէջ կը խեղդուէին: Չվատահիլ Կեսարիոյ կառավարիչին վկայագրին ու անցագրերնու անթերի օրինակներու թուրքերը իրենց դրածը իրենք լղելու մեծ ախորժակ ունէին, երբ հարցը կը դառնար անհաւատ մը դատաւարտելու շուրջ: Չմոռնալ, թէ ինկած էին թրքական հոծ շրջանի մը մէջ, ուր գաւառային գեղերը, գողթական կամ ոչ՝ թուրքերու պատկանելնուն, պիտի խուսափուէին: Մնալ միշտ շոգիի վրայ: Չոհեւ գիջանիւ ժօրուքի՛ կը, ուրկէ կրնար շար բան միայն գալ:

...Ելան վահոն: Ոստիկանները յարդանքով բարեւեցին առաջնորդին բարեկամ ուսուցիչը:

...Հրաժեշտ:

...Դէպքերը քայեցին ուսուցիչին թելադրած գնացքով:

Ընկեր Մաթիկ եւ բնկեր Սեղօ, բարագազաթի դիւղին մէջ եղան շարաթ մը: Յետոյ անցան ուրիշ մը, ուրիշներ:

Չանց կ'ընեմ ողիսականին այս մասը, ուր մեր յեղափոխականը դիրքեր լեցնող առատութեամբ նշմարներ ունէր մեր ժողովուրդէն, — բարք, նկարագիր, նոյնիսկ լեզու: Ճեմարանի շրջան մը գուր առղը շ'անցնիր մարդոց գլուխէն: Չանց կ'ընեմ, վասնզի կը նմանի իր մեծ մասին մէջ այն պատկերներուն, որոնցմէ մաս մը պատմեցի արդէն: Մաթիկը ճանչցեր էր մեր ժողովուրդը, անոր ամէնէն յետանկեալ մէկ գեղին մէջ, իրեն ջերմօրէն յանձնարարուած երիտասարդ մը — որ ես էի — այդքան թեթեւութեամբ վտանգելով ու ճիւղման վերլուծելով մարդոց առջեւ, որոնց ազգային ընտանդութիւնը ուրիշ հորիզոն չունէր, քան մեծկակ ծաւալով պատերը իրենց մատուրին:

Կր կեցնեմ այս յետախաղացը:

Այնքանք Ալույի շարայրէն երբ ճամբու դրի դիրենք, շիրնալով համոզել վտանգին լրջութենէն, որուն կը դիմէին, ամիս մը շանցած, անոնք մատուցած էին, իրենց ժողովուրդը ո՛րքո՞ղ ազաններուն ճնշումով: Ողբերգական մեծութիւնը իրենց զոհարեումին, երբ լսելով իրենց համար ձերբակալուածներուն տառապանքը, իջիւր էին գեղ եւ յանձնուեր թուրքերուն: Յեղափոխական: Դատելը ձեզմէ: Ես պատմեցի: Ու կ'երաշխաւորեմ անոնց ողիսականին այն մասը, որուն խառնուեցայ:

Մոխրնոցին մէջ անոնց մահը վաւերական է դարձեալ:

Ենդօ՛ւմ մը, «Մնացորդաց»էն:

«Խոնարհները» գործին հեղինակը այդպէս չի գատեր:

Տասը տարիէ ի վեր տիտղոսաւոր եւ արժանաւոր մարդեր կը ջանան մեր յեղափոխութեան մեծ գէժերը կորուստէ վերկել, անոնց նուիրելով իրզճամիտ ու սուղազորոյց մենագրութիւններ: Ընդարձակ այս վերակազմումի ընթացքին՝ Մաթիկն՛ էր: Այսինքն՝ մեծ կամ պզտիկ այն հերոսները, որոնք իրենց անձին ամբողջը գրին այդ գործին, իրենց ձեռովը, կէս, քանի որ այդպէս էր ձեւուած կեանքին բաժինն ալ իրենց: Յիմա՛ր՝ քանի որ իմաստուն չէին ծնած, բայց ազգին համար մեռնելու պահուն մեծերուն շօք մեծ եղան:

Մաթիկն՛ էր:

Կը հարցնեմ ու կը լուեմ:

Թող ներքն իմ ընթերցողները այս լեզումն ալ, կամ՝ ինծի:

Յ. ՕՇԱԿԱՆ

(Վերջ)

Ե Ր Զ Ա Ն Կ Ո Ի Թ Ի Ի Ն Ը, Ո Ր Ի Մ Ս Զ Է Ր...

Աւելի քան շաբաթ մը ի վեր արտասովոր դրացի մը ունիմ. գրասենտակիս կից՝ Եկեղեցիին բարձրագիր պատուհանի քիւնն՝ ազունի մը թառած է: Առաջին ակնարկին կարծեցի, որ քանի մը վայրկեան թառել է ետք՝ պիտի թռի: Քիչ ետք՝ ուրիշ ազունի մը եկաւ քովը, ընկերը անկասկած (երբ ազունիննէրն իսկ չեմ կրնար ապրիլ ասանց ընկերաց...) բաներ մը կտկտացին, իրարու փետուրին ու կտուցին քուտեցան: Նոր եկողը թռաւ: Արուն էր անկասկած... Ժամ մը ետք կրկին աչքերս սեւեռեցի պատուհանէն նշմարուող Եկեղեցիի պատուհանին, որ ծածկուած էր երկնքից ապակիով: Դարձեալ տեսայ ազունին նոյն տեղը կկգած: Արդեօք բռ՞ջն կը շինէ, անցաւ մտէս, ու սկսայ նայածքներովս հետապնդել մեծաւորը, որուն մերթ քնդ մերթ կ'այցելէր ընկերը — որքա՞ն հաստարմութիւն... —: Բայց վաղը կամ երեկոյեան կը թռի, անցաւ մտէս, ու տրամեցայ: Յաջորդօրը, գործի սկսելուս, առաջին մտածումըս եզաւ ազունին որոնել: Հոն էր, նոյն դիրքով: Արդեօք մայրութեան շրջան մը կ'ապրի:

Կէսօր: Ազունին հոն է միշտ: Երբեմն թեթեւ թռիչք մը մեր պաշտօնին վրայ: Կը հոցահարէ բաներ մը, Ուսելիք կը ճարէ ու կրկին կը վերադառնայ տեղը: Բարձր է իր դիրքը ու արեւը շատ քիչ անգամ կը սահի պատի այդ երեսին վրայ: Ո՛չ, ազունիննրը այդքան ալ միամիտ մի կարծէք: Արեւստ տեղը շուքէն գտնազանկու չափ խելք ունին: Ան ձուերուն ջերմաստիճանը կը մերդաշնակէ իր մարմնի ջերմաստիճանին: Պէտք չունի արեւու ճառագայթներուն. ինք հասակ արեւ է ու շունչ, շող ու ջերմութիւն, հով ու զովութեամբ:

✱

Արդէն շաբաթ մըն է, որ մեր դրացնութիւնը կը շարունակուի այսպէս: Թեւաւորը իմ կողմս շատ կը նայի ու ես հաճոյք կը զգամ իր բարեացակամ նայածքէն, ուրկէ մայրութեան յոյսեր կը ծորին: Երբեմն պոչին կողմը կը տեսնեմ: Նոր դիրքաւորում մը կ'ունենայ, յետոյ կը կծկուի, կը մանրանայ, կէտի մը կը վերածուի, ու ինծի կը թռի, թէ թռած է: Բայց տես թեթեւ շարժում մը ու փետուրը կը թրթռայ, ինչ որ կը փաստէ, թէ հոն է եւ ողջ: Այո՛, ո՞ղջ, որովհետեւ երբեմն նոյնիսկ կը կասկածիմ, թէ կը շնչէ: այնքան անշարժ կը մնայ իր դիրքին վրայ...

✱

Գիւղի մէջ չեմ: Ո՛չ ծառ, ոչ տներ: Եկեղեցի մը, անոր մերկ պատը, պատուհան մը՝ քիչ մը խոր բացուածքով: Այսքան «տե՛քոր» բաւական եղած է, որ յօժարեկամ մտի ու սպասէ ձագերու ծնունդին: Ո՛չ փափուկ տերեւներ, ո՛չ ռստերու ռստայն, ոչ ալ գովաբայր գեփիւտ: Պէտքի խնդուն մէկ բազին մէջ այնքան խազազ մնացող սա Եկեղեցիին պատուհանը միայն: Կը բաւէ: Ու ազունին ինծի կ'ուսուցանէ ժուժկալութեան փիլիսոփայութիւնը: Սա պարզօրէն մեկ անկիւնին մէջ ընկերը չի մտնար զինք այցելելու, ու այդ պարզութիւնը ոչ մէկ պատճառ եղած է, որ ան չ'մայրանայ: Իրեն համար կարեւորը ձագերու ծնունդն է, նիւզերու փափուկ բարձին վրայ թէ պատի մը խռռոչին: Որքա՞ն խոնարհ է հոգին: Ու կարծես ամենէն մաքուր հոգին իրենք՝ ազունիննրը ունին: (Հիւստ ո՛ր որ է ընկերը կու

գայ...): կը նախանձիմ անուշ թեւաւորին, անոր բախտին, զիրքին: Ոչ ոք կը խանցայէ զինք:

Երէկ, Աստուածածնայ տօնն էր ու եկեղեցիին զանգակները ուժգին զօղանջեցին, բայց մայրացոյ թռչունը չազդուեցաւ անագին ձայնէն: Թերեւս նախըզգաց, թէ օրհնութեան ձայնն էր այդ, որ պիտի իջնէր իր սպազայ զաւակներուն վրայ, որոնք մոյմբան անեղութեամբ պիտի թռին երկինքի մաքուր ոլորտին մէջ:

Այնքա իրեն յառած՝ կը գրեմ իր մասին: Արդեօք բան մը կը զգայ: Որքա՞ն խոկում ու ապում պարզեց ան ինձի, ու որքա՞ն արտաբերեց զբաւմտածումներուս: Թռչունի մասին խօսիլ զիտութեամբն դարձան... Կ'ուզեմ հացի փշրանքներ նետել կողքի տանիքը, ուր կ'իջնէ երբեմն: Ու կը նետեմ: Բայց հիւսնա բնկերը կա գայ (որ չ'ուշանար): Ինք պզտիկ պահաւ մը համար կը ձգէ իր տաք բազմոցը, կը միանայ ընկերոջ: Զայնէր կը հանեն, թեթեօրէն զիրար կը կտցահարեն... Որքա՞ն մարդակայնութիւն կայ անոնց վարմունքին մէջ, որքա՞ն ազնուութիւն: Ի՞նչ լաւ է, որ գազանը բացակայ է անոնցմէ: Որքա՞ն փափուկ են անոնց մաքմունքները: Էզր որքա՞ն փափկակատ, իսկ որքա՞ն գուրգուրան է արուն, որ անա դարձեալ կը թռի: Ո՞րք պիտի երթայ արդեօք: Պէտք չէ հարցնել. արաւ է: Կ'երթայ ուզած տեղը: Կը թռի ուզած երկինքին մէջ, կը սլանայ, կը թռաի ծառերու կատարին կամ զանգակատուններու գմբէթներուն, միանալու ուրիշ նուազողներու... Թող երթայ: Երեկոյեան կը վերադառնայ համակ սէր ու յուզում դարձած: Ա՛յդ է կարեւորը...

Աշխատանքին առթած յազնութեան առնթեր, սա թռչունին բերած խաղաղութիւնը ուրիշ մթնոլորտ մը ստեղծեց: Տարբեր աշխարհի մը մէջ կ'ապրիմ: Երանի՛ր թէ իմ բոլոր դրացիները թռչուններ ըլլային: Թռչնասիրութեան փափաք մը արթնացաւ մէջս: Մտածեցի անմիջապէս վանդակ մը հարել ու քանի մը թռչուն պահել, կամ ազատիներ չարագործիք: Բայց ազանի պահողներուն մասին առասպելներ կարդացած եմ մեր գրականութեան մէջ: Այնքան ալ ձեռնտու գրագում մը չէ, մա՛նաւանգ ազգկայ մը համար: Դրացնութիւնը ամենէն յարմարն է կարծես: Ու երանի՛ր թէ երկարէր սա ազանիին մայրութեան շրջանը, ու ես հրեւեղի պարովը այս գոյգին, խանդաղատանքովը սա ապագայ ընտանիքին, որ իր բոյնը շինած է եկեղեցիի մը պատուհանին...

Իսկ մեր շէնքերը, պալատները, փափուկ անկողինները, շարժներն ու համագամները ինչո՞ւ չեն կրնար խաղաղեցնել մեր հոգիները: Ո՞րք ես, երջանկաւի՛ն: Թռչունի մը փետուր թւերուն մէջ: Ի՞նչ համբերութիւն, կամքի որքա՞ն ուժ: Երկար օրեր, շարաքներ, մատիլ, մատիլ, հրաժարիլ երկինքներու գով նախաճաճէն, ու սպասել սպասել, սպասել զաւակներու ծնունդին:

Դրացի թեւաւորին երգանկութիւնը զիս կը վարակէ: Գռն եմ, որովհետեւ այսօր իսկ նանչացայ երջանկութիւնը, որ հոգ չէ, թէ իմն չէր...

ՇԱՀԱՆԻՈՒԵՏ

Մ. Պ Ձ Ա Ք Յ Ե Ա Ն

Պ Ա Յ Ո Ւ Ս Ա Կ Ը

Երկուր բացակայութենէ մը ետք, Վերա յանկարծ կը յայտնուէր Զոհրայի փոքր վահանատան մէջ: Քանի մը տարի առաջ, տասնըփնդ օրուան համար Պէյրութ եկած էր Վերա եւ նշանածին համար ժամացոյց մը դնելու մտադրութեամբ մտած էր Զոհրայի խանութը ու նոյն օրն իսկ տղուն հետ դացած էր ուղակի անկողին: Առանց նախարանի, առանց կեղծ պարկեշտութեան: Իսկ առաջին սիրարանութեան օրքա՞ն ինդացած էր տղան: Թէեւ ամբողջական էր անոր անձնատուութիւնը, սակայն դիրկընդիտանումներն ու համբոյրները ստորակիրտող կարծ դադարները օգտագործելով, արագ ակնարկով մը կը ստուգէր իր ձեռքի պայուսակին ապահովութիւնը ու ակնի բուռն մղումով կը կառչէր Զոհրայի մերկութեան:

- Բայց ինչո՞ւ շարունակ պայուսակիդ կը նայիս, — հարցուցած էր տղան:
- Արտփեռեւ ամբողջ դրամս մէջն է, — պատասխանած էր աղջիկը:
- Այսի՞նքն:
- Ի՞նչ «այսինքն»:
- Բայց տարօրինակ է, չէ՞:
- Ի՞նչն է տարօրինակ:
- Մարմինդ կը վստահիս, պայուսակդ՝ ո՞չ...

Եւ շէտեցնող պատասխանը՝
 — Ի՞նչ կ'ապ անոնց միջեւ...: Կըրնամ մարմինս անմիջապէս ետ առնել, բայց դրամս՝ ոչ:

Ու այսպէս, երկու շաբթուան համար արձակուրդի եկած աղջիկը կը մնար մէկ ամիս, ամբողջ երեսուն օր եւ, Զոհ-

րայի անուականութեամբ կրանուած՝ իսկական մեղրայուսին մը կ'ապրէր, վերացուածի ճշմարիտ պահեր կը վայելէր՝ նոր տարողութիւններ աւելցնելով մինչեւ այդ օր իր ճանչցած երանութիւններուն:

Իսկ հիմա, տարիներու ամբողջական լռութենէ մը ետք, Վերա անսխիչի մը նման կը յայտնուէր Զոհրային՝ առաւել հասունցած, առաւել տղուօրցած, առաւել պատրաստակամ:

— Ինչպէ՞ս ես, Զոհրայ:
 Հարցումը՝ հտկառակ հրուէրի մը ամբողջական վաւերականութեան՝ շէղօքացած Զոհրայի անբացատրելի անտարբերութեան դիմաց: Վերա զայրոյթով նկատեց, որ տղան պաշտօնական էր, կը խուսափէր իր նայուածքէն ու անոր ճեւու լաւ եմք զրթմնջիւնը երբեք պատասխանը չէր իր կարօտով յաղեցած հարցումին:

— Արկտծ բացիկիս ու նամակներուս ինչո՞ւ չպատասխանեցիր:

Աղջիկը ո՛չ բացիկ զրկած էր, ո՛չ ալ նամակ: Ան պարզապէս սպիտակ սուտով մը կը փորձէր խօսակցութիւնը քստեղծել: Ինք լաւ կը ճանչնար տղաքը: Մ'անաւանդ հոգեվիճակը այն աղոց, որոնք կը դարպատուին: Վերայի համար այնքան ալ հարց չէր փչրել ոեւէ տըղու դիմադրողականութիւնը, մանրացնել զայն ու վերածել փոշիի...:

Իսկ Զոհրայ մատնուած էր չփոթի: Իր սառնարտութիւնը անարդարանալի էր դիմացը կեցող աղջկան համար: Բացատրութիւն մը պարտական էր ա-

նոր, Բայց ինչպէ՞ս...: Պիտի խօսէր Ջոհրայ, երբ նայուածքը ակամայ կեդրոնացաւ Վերայի պայուսակին վրայ ու մեղուտը հանդիպելով մը յիշեց աղջկան միւս պայուսակին հետ կապուած դրրւագր: Այս մէկն ալ բացա՛վաւ կարմիր էր ու տղուն թուեցաւ, թէ Վերա դիտումնաւոր կերպով ընտրած էր այդ գոյնը՝ պարզապէս զբոլորելու, կարօտ զարթնեցնելու...: Իսկական անելի մատնրուած էր Ջոհրայ: Սեղան ու Սիլվիան, Այտան ու Անին ըմբռնած էին, որ այլեւս անմերձենալի է ինք: Անոնցմէ իւրաքանչիւր փորձած էր որեւէ ձեւով հարդարակցութեան մէջ մտնել իրեն հետ, բայց իւրաքանչիւրին տրուած կոշտ պատասխանով մը յաջողած էր խորտակել իր շուրջ հիւսուած սարդոստայնները...:

— Ի՞նչ պատահած է քեզի, լաւ կը զգա՞ս ինքզինքդ, — գեղումով մը հարց տուաւ Վերա՝ նահանջելու տեստակ, կնոջական վճռակալութեամբ: — Ծա՛տ լաւ, իսկապէս շատ լաւ, — փոխադարձեց Ջոհրայ՝ այս անգամ յստակօրէն լսելի ձայնով ու վճռակամութեամբ ուղղակի նայելով Վերայի աչքերուն մէջ . . .

Աղջիկը անմիջապէս ուղծա՛վարու թիւն փոխեց.

— Կ'ուզեմ ժամացոյց մը զնել: Ջոհրայ ուղեց անտեսել առաջարկը՝ զայն նկատելով դաւ մը: Պարզապէս թակարդ մը: Սակայն՝

— Կնոջակո՞սն թէ այր մարդու համար, — հարց տուաւ լրջօրէն:

— Մեծ հօրս համար, — եղաւ անըստասելի պատասխանը:

— Մեծ հօ՞րդ:

Ջոհրայ յանկարծ յիշեց, թէ Վերա ահաբեկ բաներ պատմած էր իրեն: Պատմած էր, թէ մեծցած էր առանց նոյնիսկ մեծ հայր կամ մեծ մայր ճանչնալու...:

— Իսկ քանի՞ տարեկան է մեծ հայրդ, — հարցուց Ջոհրայ քմծիծաղով մը:

— Երեսուներեք, — եղաւ չփոթեցրեող պատասխանը:

Եւ պատասխանին հետ Վերա ժպտեցաւ, ազա քահա՛հեց, աչքերը փոքրու-

ցան ու ան աւելի քաղցրացաւ: Ջոհրայ հազիւ յաջողեցաւ իր ինդուքը ամփոփել ժպիտի մը մէջ, սակայն յիշեց Վերայի կենսունակութիւնը անկողնին մէջ, անոր աննախատեսիլութիւնն ու ականջին բրլթակը խածնելու միջոցին արձակած նոյնանման քահա՛հեքը:

— Վե՛րջը:

Ջոհրայ չպատասխանեց: Ան անդրադարձաւ, որ աղջիկը որոշած էր ամէն զնով երկարած գել խոսակցութիւնը ու հակառակ իր կարծր կեցուածքին, վճռած էր չնահանջել ու, մա՛նաւանդ, կոխտուած շտեսնել կնոջական իր արժանապատուութիւնը:

— Վե՛րջը, — կրկնեց Վերա ու գարձեալ սպասեց:

Յաճախորդի մը մուտքը միայն կրցաւ փրկել Ջոհրայը միարաւ այս հարցումին դրոհէն: Վերա հասկցաւ, որ կարելի չէր աւելի երկար մնալ: Երբ գոհունակութեան արտայայտութիւն մը դէմքին տղան յաճախորդին դարձած էր, Վերա մեկնեցաւ՝ «Յտեսութիւն» մաղթելով:

«Յտեսութի՛ւն... ցտեսութի՛ւն...»: Բառը ուժգնօրէն զարնուեցաւ Ջոհրայի դիտակցութեան:

— Երթաւ քարեա՛ւ, երթաւ քարե՛ր, — ձայնեց ան, երբ աղջիկը անկարող էր լսելու իր մաղթանքը:

Ջոհրայ շնորհաւորեց ինքզինքը: Իր յաղթանակը: Ամուսնութենէն ետք առաջին վտանգաւոր փորձութիւնն էր: Այլեւս ո՛չ մէկ կին պիտի կարենար վայրթակղեցնել զինքը: Ո՛չ անդիմադրելի շրթները, ո՛չ պարարտ կրօնքները, ո՛չ ալ ծեփծեփուն քալուածքը անոնց:

Երբ յաճախորդը մեկնեցաւ, Ջոհրայ սիկարէթ մը վառեց, ծուխը անյարգօրէն քաշեց թոքերուն մէջ ու մտածեց կնոջ մասին: Սակայն մասնակի յաջողութիւն ունեցաւ: Թէեւ յաջողած էր վանել Վերան, բայց այդ աղջիկը կրցած էր մասամբ խռովել իր ներքին անդորրը: Նայուածք մը նետեց վաճառատան ժամացոյցներուն, որոնք, ինչպէս իր հօր պարագային՝ զինք ալ փիլիսոփայ դարձուցած էին: Թէեւ միայն երկրոր-

գական վարժարան աւարտած էր, բայց կարգացած պիւքերուն առիթներ, ժամացոյցներու եւ ժամանակի մասին իր տեւական խորհրդածութիւնները հատուցուցած էին զինք ու, մանաւանդ, ժամանակին անհեթեթութիւնը իմաստուն դարձուցած էր Ձոհրապը:

Տարիներ առաջ, դպրոցական քրննութեան մը ընթացքին, ճշդուած մէկուկէս ժամը բաւարար եղած շէր տրուած թուարանական խնդիրները լուծելու, բայց այդ յիմար սահմանափակուածութենէն դուրս, երբ այլեւս ժամանակը օղակի մը նման շէր սեղմեր իր կոկորդը, իր սենեակին մէջ, ժամանակի առատութեան վստահած, ան այնքա՞ն պիւքութեամբ յաւոյրած էր լուծել նոյն այդ խնդիրները...

Դարձեալ տարիներ առաջ, երբ օր մը, կէս պիւքերուան մօտ, քայլով տուն կը վերադառնար ու կ'անցնէր թաղէ մը, տունէ մը արձակուող ժամացոյցի մը պարկերը կէս-պիւքեր կը յայտարարէին: Քիչ անդին, ուրիշ ժամացոյց մը, պահ մը ետք, դարձեալ կէս-պիւքեր կը յայտարարէր: Այսին կէտք, ուրիշ ժամացոյց մը նոյնը կ'ընէր... Այսպէս, երեք անգամ, մէկ փողոցի մէջ, երեք տարբեր կէս-պիւքերներ կը յայտարարուէին... ու Ձոհրապ կը կորսնցնէր իր հաւատքը բոլոր ժամացոյցներուն հանդէպ եւ զրգանք մը կը զգար ժամանակը չափող ու սահմանափակող այդ կազմածներուն դէմ...:

Ու հիմա, կեանքի մէկ հեզնանքով, փոխանակ բժիշկ դառնալու, հօր կանխահաս մահուան պատճառաւ, տէրը դարձած էր անոր ժամացոյցի վաճառատան: Ձոհրապ արգահատանքով կը դիտէր իր վաճառատան ափան ու թանկ, խոշոր ու փոքր, ջատակուտ ու բոլորակամէս բոլոր ժամացոյցները: Իսկ իրեն յատուկ ջղախնութիւն կը պատճառէին մանաւանդ եկեղեցիներու եւ հրապարակներու այն ժամացոյցները, որոնք մունետիկներու նման յայտարարութիւններ կ'ընէին: Ի՞նչ դորձ օւնէին անոնք մանաւանդ Աստուծոյ հետ հանդիպման վայրերու մէջ: Աստուծոյ յաւերժութեան եւ անբաժանելիութեան զուտ արտայայտութեան զարմացնող այս կազմածները հեզնանքով կը զննէր անոր ժամանակի զարդափայլը մարմնացնող այս կազմածները հեզնանքով շէր ն մարմնացնէր: Ձոհրապ ծաղրանքով կը զննէր ու կը քահա՞հէր, «ժամանակը ոսկի է» կը կրկնէր ու կը քահա՞հէր, «ժամանակ չունիմ, ժամանակ չկայ» կ'ըսէր ու կը հեզնէր բոլոր ժամացոյցները:

Նոր յաճախորդի մը ժամացոյց ծախելէ ետք միայն Ձոհրապ նկատեց, որ վերա իր պայուսակը մոռցած էր քիչ անդին գտնուող ցածրիկ սեղանին վրայ: «Վայ, շա՛ն աղլիկ, դիտմամբ ըրաւ...: Յետոտութիւն, հա՛, ցտեսութիւն, հա՛...»:

«Մարմինս կրնամ ետ առնել, դըսմը՞՛ ոչ...» նախադասութիւնը ցնցեց զինք կրկին:

Իսկ պայուսակին հետ Ձոհրապի յիշողութեան մէջ արթնցան մանրամասնութիւններ: Երբ վաճառատան հայելին մէջ նայեցաւ, իրեն թուեցաւ, որ կը գանուի վերայի պոնդոկին սենեակին հայելին առջև ու երկուքով կը դիտեն անոր մէջ ցոլացող զոյգ մերկութիւնը:

Ձոհրապ անմիջապէս հետաքաշուեց: Ծիղիթակտ փորձութիւնը անցուցած էր անարգել, բայց հիմա մտային դաւաճանութիւնը կը փորձէր յամառօրէն սողոսկիլ իր հոգեկենտրոններ...: — Պարտա՞տ է ժամացոյցը: Ձոհրապ զգաստացաւ: Նորոգութեան տրուած ժամացոյցի մը մասին էր հարցումը: Ամիս մը առաջ ծախուած ժամացոյց մըն էր ու այդ օր Ձոհրապ յայտնած էր, թէ երկու տարի անսխալ պիտի գործէր ան: Իսկ քանի մը օր առաջ յաճախորդը մեծ զժգոհութեամբ իր դիտացը նետած էր զայն ու սպառնացած: Ինչպէ՞ս իր ժամանակին յարգը պիտի գիտնար, եթէ ժամացոյցը ամիսը ուղիղ մէկ վայրկեան, ամբողջ վաքսուսն երկվայրկեան ետ կը մնար: Կարելի՞ թոն էր...: Մէկ ամսուան ընթացքին մէկ վայրկեան...: Ահադին մեծ զայթակղութիւն մըն էր, անհանդուրժելի պարագայ մը...: Արագութեան եւ ճշր-

զըրտութեան այս դարուն երեւակայելի՞ բան էր գաստակին կրել ժամացոյց մը, որ չէր յաջողեր ժամանակը ճշգրտորէն ցոյց աւել...

«Վայրկեաններով ու երկվայրկեաններով մտահոգուող խեղճուկրակ մարդիկ: Այնքան բազմազարդ են, որ ժամացոյց յարելու ժամանակ նոյնիսկ չունին ու օքսիմորիք ժամացոյցներ կը նախընտրեն: Չեն անդրադառնար, որ այդ ժամացոյցներուն սլաքները պիտի շարունակեն խորի իրենց կողերուն, իսկ զայլանակները պիտի մզեն գերէնք «թիթ-թաք»ներու կշռոյթին վրայ խաղալու անվերջանալի, խելադար պար մը, մրտածէջ Չո՛րապ՝ զգրոցներուն մէջ պահանջուած ժամացոյցը փնտռելով:

— Ահաւասիկ...: Այլեւս պիտի չուշանայք ձեր ժամադրութիւններուն...: Ձեր գործատւըը պիտի գնահատէ ձեզ...:

Սակայն փոխանակ ժամացոյցը ուղղակի տիրոջ յանձնելու, Չո՛րապ սկսու ճառախօսութեան մը: Բացատրութիւններ տուաւ ժամացոյցի գործարաններուն մասին, խօսեցաւ ճափոնական եւ դոսիցերիական արտադրութիւններու որակի տարբերութեան շուրջ, ապա ըսաւ, թէ՛ ժամացոյցը մարդուն ստեղծած արիւմարագոյն դիւտն է, թէ՛՝ մարդիկ իրենց կեանքը կանոնաւորելու համար ստեղծած են մեքենայ, որ պարզապէս բանտի խուց մըն է եւ որուն մէջ ինքնակամօրէն ինքզինք բանտարկած է մարդ արարածը: Թէ՛՝ ժամացոյցը կը նմանի աւազակները ձերբակալելու համար ստեղծուած գործածած ձեռնակապին, եւ թէ՛՝ մարդիկ կամաւոր կերպով ձեռնակապեր անցուցած են իրենց դաստակին ու կը շարունակեն յիմարօրէն խօսիլ մարդուն ազատադրութեան շուրջ...:

— Հայրս կ'ըսէր, թէ Աստուած իսկական եւ անօրաբանական ժամացոյց մը գրած է իւրաքանչիւրիս կուրծքին տակ ու ամէն մարդ պէտք է ընթանայ միայն այդ ժամացոյցին թելադրութեան համաձայն...: Կ'ըսէր նաեւ, թէ Աստուած ստեղծած է օրեր, կէսօր ու դիւեր, ըստեղծած է յորս եղանակներ, քամի ու զեփեռ, արեւ ու անձրեւ, իսկ մարդիկ

փորձած են կազմակերպել, կատարելագործել Աստուծոյ ստեղծագործութիւնը՝ օրերը ժամերու վերածելով, ժամերը՝ վայրկեաններու, եւ երկվայրկեանները՝ շաբաթներու, ամիսներու, տարիներու եւ դարերու...:

Չո՛րապ պիտի շարունակէր իր փիլիսոփայութիւնը, եթէ պիտոյնը տրամադիր ըլլար ունկնդրելու զինք ու թափանցելու իր ըսածին խորքին...: Բայց ան կ'ամապարէր...:

Բայց ինչու այս պատմութիւնները կը պատմէր այդ օտարականին: Ի՞նչ էր իր գործը: Միծաղելի չէ՞ր եզած արդեօք...: Սակայն երբ նայուածքը կրկին հանդիպեցաւ Վերայի պայուսակին, Չո՛րապ անդրադարձաւ, որ թիչ առաջ ըրածը պարզապէս փախուստի փորձ մըն էր, ինքզինք որեւէ բանով զբաղեցնելու անօրուտ ճիգ մը:

— «Պիտի չդաւանանեմ: Պիտի չդաւանանեմ երբե՛ք...: Երբե՛ք»: Երբ այս բառերը կրկինք բարձրաձայն, երկրորդ «երբեք»ը այնքան ալ համոզիչ չ'ընչեց...:

Սակայն հոն էր պայուսակը, որ կը պարունակէր Վերայի ամբողջ գրամը:

«Վարձիւղ կը մտահոգիս, գրամդ՝ ո՛չ...»:

Չո՛րապ հեռացուց նայուածքը աղջկան աննիւթական ներկայութենէն: Թերթը առաւ ու սկսաւ կարդալ ընդհանրապէս տան վերապահուած երկարապատում յօդուածներէն մէկը: Սակայն կարդացածէն բան չ'հասկցաւ: Դիմեց քաղաքական լուրերուն: Յուսահատեցընող լուրեր միայն դտաւ հոն: Անցաւ աւելի կարճ յօդուածի մը: Նոյն արդիւնքը: Կեղրոնացումը կը խուսափէր իրմէ: Փոխեց պայուսակին գիրքը: Ապա բացաւ զգրոցը ու առաւ խանդարուած ժամացոյց մը...: Դարձեալ չկրցաւ կեղրոնանալ: Երբ շարունակեց զայն զգրոցին մէջ ու ուժգնօրէն փակեց, բան մը կ'ոտրեցաւ անոր մէջ:

— Նոր յանախորդ մը: Այս մէկուն հետ ալ ուզեց երկար գրազիլ: Սակայն կրկին մնաց առանձին:

Գիւտ ընտղի նման վերցուց ընկալուչը ու կազմեց տան հետախօսի թիւր: Պատասխան չկար...: Յիշեց, որ Մատչէն ատամնորոտիին պիտի երթար: Բայց դարձեալ կազմեց թիւր ու երկար սպասեց, երկար ժամանակ ունկնդրեց անպատասխան կանչին՝ պարզուղէս ինքզինք վրադեցնել փորձելով:

Ու դարձեալ պայուսակը...

«Արդեօք ո՞ր պանդուկը էջեւանած է...: Եթէ գիտնայի, կը հեռանայնէի, որպէսզի դայ առնէ...: Արդեօք նո՞յն պանդուկն է: Նո՞յն սենեակը: Նո՞յն սաւանն ու հայելին...»:

Ձոհրապ խոթոռեցաւ: Մեղադրեց ինքզինք: Ինչո՞ւ մտածէր անոր մասին...: Ինչո՞ւ խանդարէր պարկեւտութիւնը:

Ստեփան պայուսակն ու անոր կապուած զրուակը չկրցաւ վանել ուղեղէն: Ի՞նչ կար մէջը: Ռ՞րքան դրամ ունէր: Տարիներու ընթացքին կնոջական պայուսակ մը միշտ ալ իր հետաքրքրութիւնը շարժած էր: Անոր խորհրդաւոր բովանդակութիւնը թափ տուած էր իր երեւակայութեան: Երբեմն զաղտագողի նայածք մը կը նետէր բաց պայուսակներու մէջ ու կը նկատէր արգասագործի առարկաներ, հայելի, շրթունքի ներկ, թաշկինակ, բայց կնոջական պայուսակը միշտ ալ շահախուզուած քորայր մը կը ներկայանար Ձոհրապին:

«Նիմա ս'ը որ է կու գայ: Բայ ինչո՞ւ կ'ուշանայ: Արդեօք ժամանակ կու տայ ինծի մասածելու, յիշելու, որոշում մը գոյացնելու...: Որքան ժամանակով եկած է...: Նոր տարիածո՞ւ մը հայթայթելու գնաց: Ինչ է, սկսայ զղջա՞լ...: Սկսայ նախանձի՞լ...: Օ՞, յիմար մտածումներ...: Թող ի՞նչ կ'ուզէրնէ: Ո՛ւր կ'ուզէ երթայ: Ինծի ի՞նչ...: Ազատ է, չէ՞...»:

Ձոհրապ դուրս եկաւ ու կեցաւ իսնուսին ցուցափեղկին դիմաց: Սիկարէթ մը վառեց ու սկսաւ պիտել ետուզեւոր: Մարդիկ դարձեալ չկազմէին: Ինքնաշարժները դարձեալ Չղային ճիշէր կ'արժակէին: Քաղաքին հեւքը շնչարգելութեան դատապարտուած հիւանդ մը կը

յիշեցնէր: Ամէն ոք սիգիֆեան համբերութեամբ կը վազէր անհասանելիին ետեւէն: Ամէն ոք ժամացոյց մը ունէր զատակին: Իւրաքանչիւր անհատ ժամացոյցի զէժ ժրցումի մը մէջ էր: Ձոհրապին թուեցաւ, որ մարդիկ կը նմանին իրենց ժամացոյցի սլաքներուն, որոնք շարունակ կ'առաջանան, մի՛շտ կը ջուրնէ՝ անապէս վերադառնալու համար մի՛շտ նոյն կէտին: Որո՞նք աւելի իմաստուն էին...: Այդ սուրացողները, թէ քիչ անգին սրճարանի մը մայթին անտարրերօրէն նստող գրեթէ միշտ նոյն մարդիկը, որոնք շարունակ կրկնակ կը փրփրացնէին ու հաստատ կամ երազային նայուածքով անտեսանելի տեսնողի տպաւորութիւն կը ձգէին ու իրենց կրկնակներուն քրքիւրով կը ծիծաղէին անպարտողներուն վրայ...:

Ու յանկարծ՝

— Պայուսակը քովդ մոռցեր եմ...

Ձոհրապ այնպէս ձեւացուց, թէ տեղեակ չէր: Առանց վերայի բոցիլտացող աչքերուն մէջ նայելու, առանց ընկրկումի նշաններ յայտնարեւելու, քսաւ:

— Ներքը նայէ:

Պայուսակը մոռցուած տեղը չէր: Դիտումնաւոր կերպով սեղանին վրայ մոռցուած պայուսակին գիրքը փոխուած էր: Իսկ Ձոհրապ ինքզինք անտեղեակ կը ձեւացնէր: Որբեմն մասնակի յաջողութիւն մը արձանագրած էր աղջիկը: Վերա գրաց, որ Ձոհրապ կը պայթարէր: Կր տատապէր նոյնիսկ: Հետեւաբար որոշեց փորձ մը եւս ընել: Նուասացուցիչ էր իրեն պէս աղջկայ մը համար ընդունիլ այս պարտութիւնը: Որբեւէ աղջկայ համար: Երբ դուրս եկաւ ու կանգնեցաւ Ձոհրապի դիմաց, կնոջական նրբութեամբ բացաւ պայուսակը ու նայուածք մը նետեց թղթադրամներուն: Ստեփան տղան, հակառակ վերայէն եկող շերտութեան ու քաղցրահամութեան ուժեղ այլքին, հակառակ իր մէջ ունեցող բուռն կերպին, յաջողեցաւ անտեղիտայի մնալ:

— Նոյն պանդուկն եմ...: Նոյն սենեակը...:

— Պայուսակէդ բան մը պակասած է,
— կատակեց Չոհրայ:

Վերա կրկին յուսադրուեցաւ: Ուրեմն տղան մտայած չէր: Բայց ինչպէ՞ս կրնար մտցած ըլլալ:

— Ձեռ գոնէ սուրճի մը պիտի չհրաւիրե՞ս...

Չոհրայ չպատասխանեց: Իսկ Վերայի զայրոյթը բռնկեցաւ յանկարծ:

— Ի՞նչ պատահած է...: Ինչո՞ւ այսպէս կ'ընես...: Կ'ը կարծես, որ մտնուած արտօնի մ'ընես ես...

Վերա չկրցաւ շարունակել: Արցունք երեցաւ աչքերուն: Ձգային ու աղմուկով գոցեց դրամապանակը, դրաւ պայուսակին մէջ ու հեռացաւ՝ առանց նորնիսկ հրաժեշտի խօսք արտասանելու:

Չոհրայ թեթեւութիւն մը զգաց: Դարձեալ շնորհաւորեց ինքզինք: Ան նոյնիսկ պնահատեց ինքզինք: Պահ մըն ալ զիտելէ ետք անցորդները, մտաւ խանութ, առաւ փետրակներ ու սկսաւ ձմամանակներու» մրայ իջած փոշիները ասնելու...:

.

Կէսօրէ ետք հեռամայնեց տուն: Կիւր վերադարձած էր:

— Բժիշկին գացի, — յայտնեց Մատիչն:

— Առամհարոյժի՞ն թէ բժիշկին:

— Նախ՝ առաջինին, յետոյ՝ երկրորդին:

— Ի՞նչ բաւ բժիշկը:

— Գուշակածդ, — ինզոց Մատիչն:

Եփոթ ու երջանիկ՝ երբ բնկայուելը կետեղեց կազմածին վրայ, Չոհրայ շանդրադարձաւ նոյնիսկ, որ անհետացած էին Վերան ու պայուսակը, անհաստարմութեան սաւաններն ու բոլոր կեղծ ժամացոյցները...:

Երկու յաճախորդներու հետ ալ որոշ ժամանակ մը անցրնելէ ետք, Չոհրայ կանուխ փակեց փճառատունը ու անսպարեց դէպի տուն: Հակառակ բանայի ունենալուն, դրան զանդը հնչեցուց: Ինչո՞ւ Մատիչն կ'ուշանար դուռը բանալու: Կարճ այդ պահը այնքա՞ն երկար

թուեցաւ տղուն: Ան երկրորդ անգամ մըն ալ պիտի հնչեցնէր զանդը, երբ դուռը բացուեցաւ: Առանց բառի Չոհրայ գրկեց կինը ու սուղուեցաւ սիրային զեղումի մը խորերը: Ան իր քիթը մխրճեց կնոջ ծոծրակին ու ուսերուն իջած ծամերուն մէջ ու այդ զիրքով մտաց երկա՞ր...:

— Ի՞նչ բաւ բժիշկը, — վերջապէս կակաղեց Չոհրայ:

Մատիչն չպատասխանեց: Ան պարզապէս անդրադարձաւ, որ ամուսինը այսօր սովորականէն աւելի բերտ էր իր սէրը արտայայտելու եղանակին մէջ: Ան պարզապէս զգաց, որ սովորականէն աւելի ուժեղ կարօտի պրկում մը աքցանած էր իր ողջ իրանը...:

— Անոր համար ժամանակէն առաջ փակեցիր փճառատունը...

Անո՞ր...: Ո՞վ էր «անոր»ը: Կնոջ արդունդին մէջ սաղմնաւորուող ժանտուկը թէ միւսը, պատահաւ աղջիկը: Ո՞վ էր «անոր»ը: Վերայէն փախուտ տուն՝ համար կանուխ եկած էր տուն, թէ կնոջ կարօցած էր...: Արդեօք կնոջ կան բնագոր կասկած մը արթնցուցած էր Մատիչնի ուղեղին մէջ: Չկրցաւ ճշդել: Պահ մը չփոթեցաւ, ապա՞

— Աղջիկ է թէ տղայ, — փորձեց կատակել Չոհրայ:

— Եթէ հարցնէիր, թէ փաստաբա՞ն պիտի ըլլար ապագային թէ բժիշկ, թե՛րեւս զիւրութեամբ կարենայի պատասխանել...:

— Բայց ես ո՛չ բժիշկ կ'ուզեմ, ոչ փաստաբան, — բարկանալ ձեւացուց Չոհրայ:

— Հապա՞...

— Կ'ուզեմ, որ քեզի նման, ճի՛շդ քեզի նման...

Փոխանակ նախադատութիւնը ամբողջացնելու, տղան արտաշ համբոյր մը եւս գրոշմեց կնոջ շքեղ շրթներուն վրայ ու անցաւ նստասենեակ: Պատկերասփեւթն ժամանակը եկած չէր տակաւին: Իսկ անսպարանքին մէջ մտցած էր օրաթերթը հետը առնել: Գիրք մը առաւ գրադարանէն ու սկսաւ կարգալ թերթատելու պէս...:

— Վաղը նորէն բժիշկի պէտք է երթաս, — ձայնեց Ջոհնայ կոնանոցը գտնուող կնոջ:

— Ինչո՞ւ կ'անապարես: Բժիշկը ըստու, որ մէկ ամիս ետք պէտք է հանդիպիմ իրեն...

— Ձէ', չէ', շարտք մը վերջ նորէն դնա...

Մատչէն չպատասխանեց:

Փամ մը ետք ընթրիքը պատրաստ էր: Պօսեցան ամանային արձակուրդի յայտագրին մասին: Ջոհնայ կ'ուզէր Պուտոսփեշտ եւ Փրակա այցելել, իսկ Մատչէն կը նախընտրէր Լոնտոնն ու Քոփենհագենը:

— Ուրեմն արձակուրդը քիչ մը երկարաձգելով կարելի է այդ շորս քաղաքներն ալ այցելել, — եզրակացուց ամուսինը:

Ընթրիքէն ետք, Ջոհնայ յանկարծ յողնած զգաց: Երբ կինը խոհանոց վերադարձաւ, ինք կէս ձգեց պատկերասրահին իր նախընտրած յայտագիրներէն մէկը, անցաւ ննջասենեակ՝ մտաւ անկողինն ու մտածեց իր առջիններէն մասին:

«Թող արագի՞նք օդանւեր չընեն, թող թռչունին ազատութիւնը կաշկանդող ոսկեայ վանդակը յիշեցնող սոսիկներով ժամացոյցներ շարտագրեն, թող լուսին չբարձրանան, ու ճաշի եփը աւրագցնող փրեսքոններ չպատրաստեն, այլ զիտնականները թող մտածեն կնոջ մը յղութեան ժամանակաշրջանը կրճատելու մասին... Ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ սպասել, այնքա՞ն երկար սպասել... Բայց չըլլայ թէ հոն ալ միջամտեն: Չըլլայ թէ խոսնուին Աստուծոյ ստեղծագործական ամենավեճ աշխատանքին: Բայց իսկապէս անհասկնալի է... Երբ Աստուած յաջողեցաւ այսքան աշխարհ մը ստեղծել միայն վեց օրէն, ինչո՞ւ, ինչո՞ւ մամուկ մը կապմաւորուելու համար ինը ամսուան պէտք ունի... Ինչո՞ւ...»:

Ջոհնայ կէս-քուն վիճակի մէջ էր, երբ Մատչէն, խոհանոցի դորձերը աւարտած՝ ննջասենեակ եկաւ ու մխրճուեցաւ մօտը:

— Քնացա՞ր արդէն, — հարցուց ամուսինը:

Մուսնին մազերը խառնշտկելով:

— Անշուշտ ոչ, — պատասխանեց Ջոհնայ՝ աչքերը բանալով: — Կը մտածէի, թէ ինչպէ՞ս պիտի կտրենամ համբերել...

— Համբերութիւնը կեանք է, — յիշեց Մատչէն մաշած առածը:

— Իսկ չէի՞ր դիտեր, որ շատն ալ տանջանք է, — ամբողջացուց Ջոհնայ ամուսինը՝ ծամածռութեամբ մը:

— Ատամնարոյժէն երբ ելլայ, դիտե՞ս որուն հանդիպեցայ, — ըսաւ Մատչէն՝ առանց հանդիսաւորութիւն տալու իր հարցումին ու շարունակեց ամուսնին մազերը գզուելու դորձողութիւնը:

— Որո՞ւն:
— Սուրէնին:
— Սուրէնին... Սուրէնը ո՞վ է...
— Մեր գոսրնկերներէն ամէնէն անկարգը:

— Յետո՞յ...
— Պնդեց, որ միասին սուրբ մը առնենք:
— Յետո՞յ...

Ջոհնայ անդրադարձաւ, որ այս պարուկաւոր բառը այդ օր երկու անգամ ստացած էր Վերայէն:

— Յետոյ բժիշկին գացի:

Տղան յանկարծ ցրուեցաւ: Յիշեց այդ օրուան հանդիպումը, Վերայի գալոյթն ու իր անտարբերութիւնը: Ուրեմն, երբ ինք Վերայի հետ տաղանայ մը կ'անցրնէր, նմանօրինակ դէպք մը կը պատահէր իր կնոջ ու այդ Սուրէն կոչեցեալ դասընկերոջ միջեւ:

«Պատմե՞մ իմ հանդիպումիս մասին: Ըսե՞մ, թէ ինչպէ՞ս իր սիրոյն մերժեցի հաճոյքի իսկական խնճոյք մը: Ընե՞մ պայուսակին պատմութիւնը: Բայց այս Սուրէնը ո՞վ է... Վերային արու տեսակին է արդեօք...: Անոր հըրաւէրը անմեղունակ էր...: Դասընկե՞ր: Ի՞նչ դասընկեր: Երբ աշակերտ էի, սիրահարուած էի դասընկերուէ՛րէն: Իսկ ի՞նչ կապ կրնայ ունեցած ըլլալ այս Սուրէնը Մատչէնին հետ...»:

— Ի՞նչ կը մտածես:

Մատչենի անմեղունակ հարցումը սթափեցուց զինք:

— Պէտք չէ արտօնել, որ պատահական հան...:

Ձոհրապ շարունակեց: Ինք վստահութիւն ունէր Մատչենի վրայ: Գիտէր, որ կը սիրէին զիրար: Անշուշտ որ ան երկինքէն չէր իջած...: Բայց ի՞նչ վրտահուժեան հարց է այս...: Մարդ նըման հարց կ'ունենայ երբ պարտաւորութիւն զգայ...:

— Լոյսը կը մարեմ կոր, — ձայնեց Մատչեն, ապա աւելի մխրճուեցաւ ամուսին կողքին:

Ու այդ գիշեր, երբ Ձոհրապ պահ մը մոռցած ամէն բան, կնոջ մարմնէն ծորող ջերմութեամբ գինով՝ փաթթուեցաւ անոր կրկին Ֆիդիբական ու հոգեկան հաւատարմութիւն ու սէր յայտնելու եւ երբ կնոջ արգանդին մէջ անող սաղմին գոյութիւնը ստուգելու համար

ափը պտըացուց Մատչենի որովայնին վրայ, նողկանքով կարծեց, որ վերան է իր կողքին պատկույր, աննուանելի Մուսն, զոր վերջնականապէս վանած ըլլալ կը կարծէր, բայց որ յաջողած էր փառաւորապէս սողոսկիլ մինչեւ իսկ իրենց անբիծ անկողնէն ներս...: Ու աւելի ցնցուեցաւ, երբ ունեցաւ այն աններելի կասկածը, թէ Մատչենն ալ ինքզինք կըրնար երեւակայել նոյն անկողնին մէջ, սակայն Սուրէնի ընկերակցութեամբ:

Հակառակ յոգնածութեան, Ձոհրապ չկրցաւ քնանալ: Ան ատեց ինքզինք: Ատեց իրարու բոլորդին անծանօթ՝ Վերայի ու Սուրէնի միջեւ տեղի լուսնեցած, բայց աւելի քան իրազործուած ժամադրութիւնը: Իսկ երբ պատուհանէն ծորող լուսնի լոյսով ողորուած կնոջ անդորր դէմքը գիտեց, յուզուեցաւ, սարսըռաց, ապա համբուրեց զայն՝ ներողութիւն հայցելու պէս:

ՄՈՎՍԷՍ ՊԶԱԲՃԵԱՆ



ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆ

ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ՄՈԳ ՄԸ՝



ԾԱՀԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Սփիւռքի հրատարակչական մեր եռուզեոջ պատկերացնող այս տարուան տոմարը նշանաւորոզ սակաւաթիւ հրատարակութիւններէն մէկը պիտի նամարուի անպայման այն նատորը, որ Եսահան Թ. Պերպէրեանի անունով լոյս տեսաւ Տօնիկեան ապարանէն, խմբագրութեամբ՝ Արասչէս Տէր Եւաչատուրեանի, եւ ապագրական ծախսօժը սրդի Տօնիկեաններուն, ի յուշ իրենց հոր շատարար հրամցուած Պերպէրեանի այս կտորները անտիպ դործեր չեն, մէկտեղուած են մեր պարբերական մամուլէն ու անծանօթ չեն մատարական լայն հետաքրքրութիւն ունեցող խաւերուն, այսուհանդերձ, տարակոյսէ վեր է, որ սրդի Տօնիկեաններուն լոյս ընծայած նատորը Թանկագին նուէրի մը պէս պիտի ներկայանայ

Պերպէրեանի սուսմնասիրութիւններուն ու փիլիսոփայական դրօշմներուն ծանօթ թէ անծանօթ բոլոր ընթերցողներուն, պատճառելով ամէնուն այն խոր հրճուածքը, որ զիսն ընծայելուան սրբութիւնն ու դրօշմիւնը խորութեամբ ու վայելչութեամբ ցայտեղեղ բացատրիկ մատուանները:

Մաքէ մեր պատմութեան մէջ լիբրաւ ժառանգականի այն սիպարն էր Եսահան Պերպէրեան, որ արուեստներու պատմութեան ու հասկան մասին անհասարկելի կճառութիւն մը ամբարեց ու ամբարածը ընտաուր իր շորհներուն նարստութեամբ խորացնելով, ճոխացնելով ու հոգեղինացնելով բաշխեց իր աշակերաններուն, ունկնդիրներուն ու սպիտակ թուղթին, որուն մէկ մասին,

անելի քան շրտ հարիւր էջերու տարածութեան մը վրայ փոռած շուրջ եօթնասուն կտորներու ինծեայրին կը կանխուին ահաւասիկ նոր ընթերցողները:

Արձանագրուած, ձայնագրուած, քանդակուած, ամբարձած նրաշակերտներուն խորհուրդն ու լայնը, կըստյ՞ն ու վեհութիւնը, մեղեդին ու խօսուն լուսթիւնը վերայայանող Եանան Պերպէր-հանի այդ էջերը մողղական ուժ մը ունին սնո՛ր համար մանաւանդ, որ հմտութեան փաստեր կուտակող շրտ էջեր չեն, այլ իրենց ընդգրկած նիւթերէն բան մը ունին իրենց ներքը, շարժում մը, հմայք մը, ու բանաստեղծական են այնքան, որքան մարդկային հոգիին ու ժաշկին քրտնեղացուցած մեծագործութիւններուն դիմաց անզինանի ներաշխարհէն ծառայած թրթռուն ապրումները, որոնք հո՛ւնն են կը զատարոյնն զրոյը էջ լեզուող գործաւորէն ևւ ժամանակութեան իրենց հոռու նկարագրին շնորհիւ գրութեան կ'ընծայեն փոխանցիկ ուժի մը անդիմազրիկ զորութիւնը:

Տիեզերական տրուեստներու ևւ անոնց կենդանութեան շունչ փշած կիսատուածներուն ժառանգութիւններէն խօսքը, իր խոհականութեամբ ևւ բովանդակած ապրումներուն ներքորութեամբ՝ ունի արդարեւ անզրազարձ գեղեցկութիւններուն հոգը կնիքը, բայց մեծ տեսարանին իմացական ճառագայթումը առոււելադոյն չափով մը թանկազին կը զատնայ հայ մարդուն համար յատկապէս այն ատեն, երբ կը սփռուի մե՛ր աշխարհին վրայ ու զգալի, իմանալի, տեսանելի կը զարծնէ հայկական աշուեստը, հոգին, ոգին, սունը, յաներժութեամբ պատկուած իսկութիւններուն համաձայն այն սոցիին, որով մեր աշխարհը եղաւ ու մնաց մերը, վարդապոյն արեամբ ողորուած ըլլալու իր սրբութեան վրայ գումարելով արուեստի սրբութեամբ սրբացած ըլլալու կրկնորդ ու անջինջ փառք մը:

Այդպէս ապրեցաւ, այս քաներուն համար շնչեղ Եանան Պերպէրեան, աշխարհի մեծերուն հետ մէջտ, մեծագործութիւններուն հմայքին սուկը, մարդկային արժէքները ճաննալու ևւ կըլլ-

ուելու մեծ փաստագրութիւններով, թեւեւելով շարունակ հոգեկան բարդ ողորտներուն մէջ, բայց կրկնութեան գեղով ըստնց ու ընդգծենց դարձեալ, որ գիտութեամբ յազեցած ևւ ներքին մշակոյթով լիացած բոլոր սոցիւն նկարագրներուն պէս ընթերցանութեան փառանգին պատկանող այս ընտիրը ևւ սրբութեամբ մտնեցաւ իր ժողովուրդին նուաճումներուն, պայծառակերպելով անոր ասորիքի յասկութիւններուն ժայր դիմերը ու ծխական պաշտամունք մը ընծայելով լինելութեան անոր ինքնուրոյն նկարագրութիւններուն:

Իր էջերէն մէկուն մէջ տեղ մը պիտի ընդգծէր.

«Է՛լայ նոր սերունդը հայ մշակոյթիմ իրական ճանաչումովմ է միայն, որ կրնայ մնալ հայ, ևւ հայութիւնը, ամենուրեքմ, Յոյնիսկ իր հայրենիքիմ մէջ, զինք շրջապատող ժողովուրդներմ իր հոգեւոր թանկագիմ արժէքներաւ տեսնազարծ ցեղ ճանցուելովմ է միայն, որ կրնայ գտնել այմ համակոյթիւնը, որ աներաժեշտ է իրեմ՝ իր փրկութիւնը իրագործելու համար»:

Հանգանակը ծանօթ է ամէնուն, բայց ժողովուրդներու պատմութեան, ու պատմական փորձով կուտակուած իմաստութիւններուն հաղորդ Պերպէրեանի շնորհ մանուար նշանակութիւն մը կը հաղորդէ համոզումին:

Այս քանի մը սողեցը գրելու ասիք առողջ ներկայ հասարհն զուրս մնացած շարք մը այլ զրութիւններու կարգին՝ մեր թուղթերուն մէջ կը գտնուին գծամանակին ու տարածութեան մէջ ցրուած Պերպէրեանի գրութիւններէն քանի մը կարտեր, որոնցմէ մէկը «Պերպէրեան» վարժարանի շրջանաւարտներուն իրեն հուսկ բանը ուղղուած ստեղծագործ հայ հոգիին փառաստանացը կը յանձնենց ուշադրութեան, յուսալով, որ մեր բանաստեղծութիւնը, երբքը, քանդակը, դիւզագուր իւրայասուկ շաղախով մը կազմաւորող հոն կարկառուած ոգին կը գառնայ վարակէլ ու մշէլ ուժ մեր նոր շրջանաւարտներուն, մտաւորակուն նոր բողբոջներուն, ամէնուն...

ՇԱՀԱՆ Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԸՆԿԵՐԱԲԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՀԱՅ ՀՈԳԻՆ

...Գիտե՛ք, թե՛ ֆաներորդ դարը մտածման համար, ընկերաբանութեան եւ կեանքի համար՝ ընկերակամութեան դարը կոչուած է ըլլալ. իբրև, հին իմաստութեան յատկութեամբ արդէն Արիստոտելի դարերէն ի վեր ու դարերու մէջէն արձագանգող ձայնը հասած է մեզի, բայց ոչ մէկ դարու, որքան տասնիմներորդ դարու վերջն ու քսաներորդի սկիզբը՝ մարդիկ այնքան հզօրութեամբ զգացին ու պատկառութեամբ տեսան, թէ իրենք ընկերային էակներ են, իրենք՝ իբր մարդ՝ ընկերութեան ծնունդն են: Թե՛ մարդիկ չեն եղած ու չեն ապրելու համար ինչպէս կ'երեւակայէին տասնութերորդ դարուն, անտառներու մէջ միայնակ՝ ինչպէս գագանները, այլ եղած են ֆառափակրթութեան մէջ, նոր ստեղծումներով հարստացնելու իրենց յաւէտ կատարելագործելի բնութիւնը: Մարդը ծընու ընկերութեան մէջ ու իր վախճանը ապրիլ է ընկերութեան մէջ, հետզհետէ աւելի ազատ հոն, բայց հետզհետէ աւելի նուիրուած անոր:

Վաղամեռիկ այլ խոհուն իմաստասէր Կիյո կը գրէր. «19րդ դարը պիտի վերջանայ գիտովը օրէնքներու, որոնք բերելու գէշ բանաճեւուած ըլլան, բայց որոնք այնքան կարեւոր պիտի ըլլան բարոյական աշխարհին, որքան Նիւտոնի եւ Լափլասի օրէնքներն են աստեղական աշխարհին համար, այսինքն՝ օրէնքները զգայնութիւններուն եւ կամներուն ֆաշողութեան, իմացականութեանց համագործակցութեան, գիտութեանց իրերաբախանցման»:

Այսպէս, ընկերաբանութիւնն ու ընկերային հագեցանութիւնը հետզհետէ աւելի պայծառօրէն ցոյց կու տան, թէ՛ հոգիները աստղերուն պէս են, թէ՛ անոնք, հակառակ իրենց առերևոյթ անջատման ու միանկութեան՝ կապուած են իրարու թափուն գորութիւններով, թէ՛ անոնք երբեք իրարու հանդէպ փակուած չեն անթափանցելի պարիսպներով եւ երբեք չեն կազմեր անջատ գոյութիւններ, այլ ընդհակառակն, իրար կը ֆաշեն այնպէս՝ ինչպէս աստղերը, ինչպէս ելեկտրացած գունտերը, ինչպէս տիեզերքին մէջ գունուող մէն մի հիւլէ իրեն կը ձգէ միւսները եւ այն թրթռումը, որ կը ծնի իր մէջ, կ'անցնի, կը փոխանցուի միւսներուն, թէ՛ գիտութիւնը եղած է ներդաշնակելու համար մարդոց մտածումը, թէ՛ գեղարուեստը իր գեղեցկութիւններուն հետ զգացումները միայլար կը թրթռացնէ,

թէ՛ բարոյականութիւնը եղած է ներդաշնակելու մարդոց գործերը, թէ՛ հակակրօքեան կամ համակրօքեան հասանքներ կ'անցնին սիրտէ սիրտ, հոգիէ հոգի, ու կը վասնեն գանձնէ իրարմէ, կամ իրարու կը խառնեն եւ, ինչպէս անպաստի եւ ահաւոր գիտարար մը պիտի անցնէր երկինքին մէջէն եւ իր շուրջն ու իր ետեւէն ասուպներ պիտի տանէր, նոյնպէս երբեմն ժողովուրդներու եւ մարդոց բազմութիւններուն մէջէն կ'անցնի հանձար մը ու իր ետեւէն՝ իտէպներու ի խնդիր՝ կը քաշէ ու կը վարէ մարդերը: Եւ այն ուժը, որ այսպէս կը խառնէ հոգիները իրարու, որ գանձնէ իրենց եւէն դուրս կը հանէ, որ գանձնէ գերազանց ներդաշնակութիւններու կ'առաջնորդէ՝ այդ ուժը ընկերականութեան ուժն է, հաւաքականութեան ուժը, նշմարիտ բարոյականին ձգողութիւնը:

Թագ չկարծուի, թէ հաւաքապաշտ մըն եմ, որ կը մտնայ պետութեան երջանկութեան մէջ միտով, ոսկորով ու հոգիով գերազանց իրականութիւնը եղող անհատ մարդուն երջանկութիւնը, եւ որ՝ յանուն պետութեան ազատութեան՝ կը գոհէ անհատին գերարժէք ազատութիւնը:

Ըսած եմ ձեզի, թէ որքան քանկագին է ստոյիկութեամբ եւ քրիստոնէութեամբ ծնունդ տուած ու մարդոջ վերածնունդի տասնութերորդ եւ տասնիցներորդին մէջ իրագործուած անհատապաշտական գաղափարը, գազափարը անհատին անձեռնմխելիութեան, անոր սրբութեան, անոր ազատութեան, անոր բարոյական գերազանց արժէքին: Եւ գիտէք, թէ այդ սկզբունքին ինչեր կը պարտի քանքեան բարոյականութիւնը: Բայց թող չմտնուի, թէ մարդը մարդ է լեզուով ու քաղաքակրթութեամբ: Ատոնցմէ մերկացած՝ անասուն մը կ'ըլլայ միայն, եւ թէ՛ ատոնէք ակնյայտնի արդիւնքն են ընկերութեան: Եւ թող չմտնուի մահաւանդ, թէ անհատապաշտութիւնը չէ երբեք անհատներու անհաղորդութիւնը, եւ թէ՛ եսապաշտութիւնն է էապէս ազատ ու տկար ետերուն պաշտպանութեան պարիսպը, թէ՛ ընդհակառակն, մեծագոյն ու հզորագոյն անհատները իրենց նկարագրէն, սրտէն, մտէն ու հոգիէն բան մը գիտցեր են պարտադրել մարդկութեան, — Պուտտաները, Սակրատները, Յիսուսները, Տանթէները, Կէօթէները, Հիւկոնները, Պեթհովէները եւ տակաւին բոլոր գերազանց անհատները — իրենց մեծութիւնը կը պարտին անո՛ր, որ կրցեր են իրենք իրենցմէ ելլել ու ապրիլ ուրիշներուն մէջ, ուրիշներու հոգիին մէջ տարածել իրենց հոգին. որովհետեւ եսապաշտութիւնը հոգիին տկարութիւնն ու ազատութիւնն է, եւ զօրութիւնը, մահաւանդ կեանքին զօրութիւնը իր բնութեամբ տարածական է, եւ հզօր անհատը գերազանցապէս հաւաքական անհատն է:

Բայց ընկերութիւնը շատ մը կերպերով կը ներկայա-

նայ մարդուն, եւ այն շրջանակները, գորս կը գծէ անոնց շուրջը եւ որոնցմով կը գրկէ գայն՝ տարբեր լայնութիւններ ունին:

Ինչպէ՞ս չգալ, չըմբռնել ու չտեսնել սակայն, թէ գերազանց ընկերային գորութիւնը, ա՛յն՝ որ ամէնէն ուժգին կը գրկէ անհատը, ա՛յն՝ որ զինքը գորացնող, միացնող ազգակներով՝ հայրենիքի, տեղի, մտքի ու սրտի մշակման, լեզուի, բարբերու, կրօնքի ու ազգայի մէջ ալ ամէնէն անշիւ միտքնուող հասարակաց իտէալի կապերով կը միացնէ մարդիկը, որ անոնց հանճարներուն մեծագոյն ներշնչողը կ'ըլլայ եւ որ, վերջապէս, գիտէ ընել — ինչպէս կ'ըսէ բանաստեղծը — մարդիկը դիւցազուններ եւ կանգնել գանձո՞ք՝ ինչպէս խումբ առի՞ծի — ինչպէ՞ս չըրգալ, թէ այդ գերազանց ընկերութիւնը ազգային ընկերութիւնն է, ազգային գորացումը մարդոց, ի մի բան՝ անոնց հազարդութիւնը մարդոց հոգիին մէջ:

20րդ դարու շեմին վրայ, մարդոց հազարդակցութեան այս գերազանց ժամանակին մէջ, հակառակ փութկոտ նախազուշակութիւններու, ազգային գագացումը մարդկութիւնը վարող ու անոր մէջ ամէնէն անշիւ խոր ակօսներ բացողը ընկերային ու հաւաքական գագացումն է:

Եւ որովհետեւ ազգը ընդհանրապէս պարապ մտապատկեր մըն է եւ իրականութեան մէջ ինքնատէր, ինքնատիպ *սուի ժենըրիզ* ազգեր կան միայն, երբ խնդիր է ապրիլ ընկերային կեանքով, բնականօրէն մեր էութիւնները կը տարուին, կը ֆաշուին ու կը սարսուան հայութեամբ...

Օ՞, հայ աճունին ի լուր այդ սարսուտը՝ սրտիս խորերէն եկած՝ կը հուսատամ, որ ունիք գայն դուք եւս ու կը մաղթեմ, որ ձեր սրտէն փոխանցուի ուրիշ սրտերու մէջ:

Զգացէ՛ք, որ ձեր դաստիարակներն ու ձեր երէցները, եւ ա՛յն՝ որուն անշնչութիւնը պատճառ մը չեղաւ, որ չպաշտէ՛ք իր միշտ կենդանի ոգին — հիմնադիրը — գծեց անոր կը նուիրեն, — Հայութեան:

Դուք գորաւոր անհատներ պիտի ըլլաք, այսինքն ա՛յնպէս՝ որ ձեր կեանքը չմնայ ձեր եսին նեղ սահմաններուն մէջ, այլ տարածուի ու ընդխառնուի այլոց կեանքին, հասարակաց թոնիքի մը մէջ պարուրելով ամէնքը:

Այդ թոնիքը Հայութեան թոնիքը պիտի ըլլայ:

Հայ հոգին... Ա՛յն հոգին, որ մտածեց ու բանաստեղծեց այնքան բարութեամբ, այնքան շնորհալիօրէն եւ այնքան սիրով՝ աւանդավիպող հայ ժողովուրդէն ու Նարեկացիէն սկսեալ բոլոր հայ մեծ բանաստեղծներուն ու խորհողներուն մէջ:

Հայ հոգին... Ա՛յն հոգին, որ երգած է Գողթան երգերու ֆնարով եւ որ այնքան յուզիչ ու ինքնաբուխ կ'երգէ ժողովուրդին բերնին վրայ:

Հայ հոգին... Ա՛յն հոգին, որ կանգնեց այնքան հա-
ւատով, այնքան հրաշքով ու այնքան շնորհով հայկա-
կան հարտարայեծության տաճարներն ու անոնցմէ ար-
ւեստի սրբութեամբ սրբացուց հայ հողը:

Հայ հոգին... Ա՛յն հոգին, որ հայ կինը կը կապէ իր
օճախին եւ իր ընտանիքին կու տայ իր սրբութիւնը, հայ
բանուորին ալ՝ իր բեղուն աշխատասիրութիւնը:

Հայ հոգին... Ա՛յն հոգին, որ այնքան խորութեամբ
ֆրիստովեացաւ եւ որ այնքան խորութեամբ գիտցաւ դի-
ցազուններ ծառացնել անիրաւութեան դաւերուն դիմաց:

Հայ հոգին... Վերջապէս ա՛յն հոգին, որ կը հնչէ Մա-
սիսին ստորտը, Անիի անբակներուն մէջ, որոնց վրայ
Ալիշանի լուսինը կը հսկէ միայն:

Հայ հոգին... Որ սակայն զօրութեամբ եւ խորու-
թեամբ կը հաւատանք ու հաւատացէք դուք ալ, պիտի վե-
րածնի:

Այդ հոգին թող յեցնէ ձեզ:

Ձեր կեանքն ու ձեր ուժը թող Մասիսին ետեւէն ծա-
գող արշալոյսին շառագունութեամբ գունաւորուին, եւ
ձեր էութեան սահմաններէն դուրս յորդելով՝ թող երթան
տարածուիլ ձեզմէ դուրս հայերուն մէջ:

Հայ հոգին թող իր հնոցը գտնէ ձեր սրտին մէջ եւ դուք
անշէջ պահէք ձեր հուրը:

ՇԱՀԱՆ Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Աստուած ինքզինք ազատագրած է շարիքի այն մասնիկէն, զոր ունէր իր մէջ եւ որ կը խանգարէր ու կ'անհանգստացնէր զինք: Ստեղծագործութիւնը, ուրեմն, ի յառաջողունէ, հիւանդագին մը շուտի մը ծնունդն է:

Թատրոնի հեղինակը, որ կը խաղայ Աստուած ըլլալ, ինք եւս չի՞ ստեղծեր արդեօք անձնաւորութիւններ եւ կացութիւններ: Ան, ուրեմն, ինքնաբերաբար կը պարտուի այն շարիքէն, զոր կը կրէր իր մէջ, եւ կ'ազատագրուի անկէ՞ զայն ներկայացնելով բեմին վրայ: Բայց իւրաքանչիւր ստեղծագործութիւն կը շարունակէ ստեղծագործութեան սերիքը վիսիօ՛ճ եւ այսպէս է, որ ստեղծագործութենէ ստեղծագործութիւն, կիանքի թէ թատրոնի մէջ, շարիքը կ'աճի ու կը բազմապատկուի: Մնաց որ, շարիքը մարդուն համար ինքզինք հաստատելու միջոց մըն է: Արդեօք պարսկան նոյնը չէ՞ Աստուծոյ համար: Չարիք գործելով՝ մարդ ինքզինք աստուածներու պէս կը զգայ:

Այսպէսով, կեանքը կը դառնայ մրդձաւանջ մը, որ վերջնապէ չի վերջանար: Աւաճողի հիմնական թեմաներէն մէկն է մարդոց բնազդական շարութիւնը: Իր թատերգութիւններուն մէջ՝ մարդը այն ճիւղանոց անասունն է, որուն մասին կը խօսէր Հեկէլ: Ան աւելի բիրտ է վագրէն, աւելի վատ՝ շնագայլէն, եւ աւելի համոռն՝ խոզէն:

Աշխարհը կը վերածուի մթին զընթացի մը, ա'յն զնտանին, որուն մասին կը խօսէր Փասքալ եւ որմէ ազատուելու խարկանքը կրնան ունենալ միմիայն «զընթացութեան» եւ ինքնախարհութեան զինովութիւններուն մէջ իրենք զիրենք նետող անձերը:

Մարդկային հաւաքականութիւնը, ազգերու իրերօգնութիւնը եւ նման հասկացողութիւնները դատարկ խօսքեր են միայն: Երկար դարերու ընթացքին տեղի ունեցած պատերազմներն ու ջարդերը աւելիով կը փաստեն ասիկա:

Վատեցուցիչ այս տիեզերքին դիմաց, Ազատով կ'ազատուի ինքը:

Կահառելի է եւ միշտ կը դիմէ դէպի հեղնանք, բեմի խեղկատակութեամբ ծիծաղելի դարձնելու համար կիանքի մեռելաշին խեղկատակութիւնը:

Եւ խեղկատակութենէն անգին, որ կը խարանէ շարիքը, Ազատով կ'առաջարկէ քաղաքական յանձնառութիւնը, որ եթէ չի կրնար բուժել բնազանցական կամ էութեանական շարիքը, այնուամենայնիւ, կրնայ օգակել եւ փճացնել ընկերային եւ քաղաքական շարիքը եւ ստեղծել նոր մարդկութիւն մը՝ վերջնապէս ազատագրուած օտարացումէն (aliénation), ճնշումէն եւ մարդուն կողմէ մարդը շահագործելու իրակոնութենէն:

*

Մշակոյթին եւ կեանքին միջեւ կայ տեսական տրամախոհութիւն մը, շարունակական փոխազդեցութիւն մը, շընդհատուող ստեղծագործութիւններու յաջորդականութիւն մը:

Թատրոնը, որ տրամաթիքական ըստեղծագործութեան իրական խաղով կը փոխարինէ սուտ խաղը, միշտ կը դանդաղ մարդերու եւ ընկերութիւններու մշակոյթին յառաջապահ գիծերուն վրայ, որ կը ցուցնէ անոնց թաքուն եւ խորունկ կեանքը:

Ահա թէ ինչու թատրոնը ճիշտ զընթացութիւն մը չէ, ընդհակառակն, անիկա անհրաժեշտ խաղ մըն է, նոյնիսկ կենսական խաղ մը, որ թիրախ ունի ներկայացումը եւ լուծումը բոլոր այն հարցերուն, պայթարներուն ու բախումներուն, որոնք առկայ են մարդոց եւ ընկերութիւններու կեանքին մէջ:

Յառաջապահ թատրոնը, ինչպէս ամէն վաւերական թատրոն, կ'առնէ իր թեմաները օրուան անժիջական պատահարներէն: Անիկա կը պայթարի շարիքի եւ յաւաստութեան ուժերուն դէմ, հանդիսատեսին կը հաղորդէ նոր պայծառատեսութիւն մը, նոր ինքնազգիտացութիւն մը եւ կ'ազատագրէ զայն առապելներէն եւ հիւանդագին մտասեւեռումներէն:

Digitized by Google A.R.A.R.©

Ինչպէս ամէն վաւերական թատրոն, յառաջապահ թատրոնը եւս չ'ընդունիր որեւէ զիջում՝ Հանրութեան ճաշակին: Ահաւասիկ թէ ինչու անիկա կարծր է ու մութ եւ կը ներշնչէ այն սարսափն ու դիտութիւնը — ինչպէս նաեւ ծիծաղը — որ կը տանի դէպի «Քաթարսիս», այսինքն՝ ազատագրութեան: Միւս կողմէ՝ յառաջապահ թատրոնի քաղաքականացումը կը հաստատէ ճշմարիտ յառաջդիմութիւն մը ազատագրումի այս ուղիին մէջ: Քաղաքականութիւնը, որ քաղաքը կառավարելու արուեստն է, չի կրնար անդիտակցուիլ դրականութեան կողմէ, ինչպէս չէ անդիտակցուած փիլիսոփայութեան մէջ:

Թատերական դործ մը տեղեկութիւն մէկ մանրանկարն է, որ փոխադրուած է բնմին վրայ: Անիկա կը սկսի կացութիւն մը ներկայացնելով, որ մարդուն մէկ կացութիւնն է այս աշխարհին մէջ: Այդ կուսայ մարդուն անասնութեան, մարդկային կացութեան անհեթեթութեան, բնագանգական եւ բնկերային չարիքին դատապարտութիւնը: Եւ երբորդ հանդերուստին կը թելադրէ ազատագրութեան ճամբաները:

Ազամովի թատերգութիւններէն իւրաքանչիւրը կ'անցնի այս երեք հանգրըւաններէն, — ցուցադրութիւն, դատապարտութիւն, ազատագրութիւն: Ահաւասիկ թէ ինչու անիկա ունի հողերուժական եւ ընկերա-քաղաքական կրկնակ պաշտօն մը:

Ազամով թատերական աշխարհին մէջ մուտք գործած է գոյութեան կան ջրախտաւորութեամբ (névrose), լինելութեան դժուարութեան: Ապրելու ջրախտը անբուժելի է: Անիկա կը բղկտէ անձնաւորութիւնը, որ ամէն մայրիկան ենթակայ է ամբողջական քայքայման:

Թատրոնը պաշտպանութեան հողերանուկան այն մեքենականութիւնն է, որ վըճառական դեր խաղաց Ազամովի կեանքին մէջ:

Իր ամբողջ գործը կը կրէ կնիքը այդ էութեան կան ջրախտին, եւ տն դիտել կուտայ, որ «Մարքսիստ կամ ոչ, ամբողջ հարցը կը կայանայ իր ջրախտները գործածելի գիտնալուն մէջ»: Այս ջրախտը ինքզինք կը յայտնէ անձնաւորութիւններու յորինումով — որոնք ունին ստատմաստիքական քաջայայտ մղումներ — բիրտ, յարձակողական եւ կամ ենթակայական ու ստրկային, մինչդեռ կեանքը, որ մղձաւանջին յաճախանքին տակ կը դանուի, կը պտնուի նաեւ տեւական վրտանդի մը սարսափին ենթակայ, ենթակայ հալածախտին, որուն վրայ կ'աւելընայ յանցաւորութեան բարդոյթ մը եւ զրկուածութեան տկարացնող զգայնութիւն մը:

Այս ջրախտին վրայ կը դիպուի ձախողութեան անձեռնութիւնը, ձախողութիւնը մարդկային յարաբերութեան, սիրոյ եւ յեղափոխութեան մէջ: Հոգեախտաբանական կեանքի մղձաւանջին վրայ կ'աւելնայ ընկերային եւ քաղաքական կեանքի մղձաւանջը:

Այսուհանդերձ, այս տեսիլքը երբեք անձնատուր չ'ըլլար յուսահատութեան փորձութեան: Անհեթեթութեան դիմաց մարդ ունի երկու լուծում, — խնդուքը կամ անձնասպանութիւնը: Ազամով կ'ընտրէ խնդուքը, պէտք է հակակռել կեանքի մեռելային խեղկատակութիւնը բեմի խեղկատակութեամբ, եւ քաղաքական կեանքի խեղկատակութիւնը՝ թատրոնի խեղկատակութեամբ:

Այս կեանքին մէջ, ուր բոլոր տըւեաները սարսափազդու են, մարդոց ճակատագրին վրայ կ'աւելնան զանազան հարուածներ, — հիւանդութիւնները, որ քեզ կը հարուածեն չիս գիտեր ինչպէս, դժբախտութիւնները, որ կը պատահին՝ յիս գիտեր ինչու — եւ կ'աւելնայ ուրիշ ճակատագիր մը, նո՛յնքան սարսափելի, բայց որ իրական

կանութիւնը, իր ամբոխավարութեան, իր խարէութիւններուն, ճնշումի եւ շահագործումի ուժերով:

Ուստի՝ քաղաքական այս ճակատագրականութիւնը, որ անխուսափելի ճակատագրականութիւններէն մէկը չէ, կրնայ ուրեմն գուցուիլ, յաղթահարուիլ բնութեամբ, յեղափոխական գործունէութեամբ եւ պայքարով, որ կրնար յեղաշրջել ընկերային աւանդական կառոյցները:

Սակայն, եթէ Ադամով գովքը կը հիւսէ բնութեան, ասիկա անոր համար է, որ մեզ կը զգուշացնէ լուսաւեսութեան խարկանքէն. մարդը յաւիտենական դաշտ մըն է մարդուն համար եւ զվազորդայններուն, որ կ'երգեն կրնան յաջորդել գերմագորդայններ, որոնք կուսան: Այսպէսով, յեղափոխական կոչուած երկիրներու պիւրոկրատականութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ բանակալութիւն մը փոխարինել նոյնքան զարշիլի եւ սճրամիտ ուրիշ բանակալութեամբ մը:

Այս բոլորէն ետք, Ադամով կը մնայ պատգամաբանի եւ յուսարեկ ճանիշխանականը, որ մինչեւ վերջ շարունակեց, միակնութեան մէջ, ընկերութեան ընդհանուր քանդումի մը փորձը, վերահաստատելու համար նոր կեանք մը եւ նոր աշխարհ մը, որոնց մասին կ'երագնէին Րէմպո եւ Մարքս:

ԱՎԱՄՈՎԻ ԿԵԱՆՔԸ
ԵՒ ԿԱԶՄԱՌՈՐՈՒՄԸ

Նախնորհրու տէր Հարուստ Հայու մը զաւակը՝ Ադամով ծնած է Կոմկասի Կիսլովոտսկ քաղաքին մէջ, 23 Օգոստոս 1908ին: Զորս տարեկանին՝ ան իր ծնողներուն հետ հեռացաւ Ռուսիայէն: Անոնք իրրեւ գիւղապետներ կը գտնուէին Գերմանիոյ Սեւ Անտառին մէջ, երբ պայթեցաւ Համաշխարհային Առաջին պատերազմը: Արգելափակումէ ազատեցան չընարհիւ հօրը ծածօթներէն մէկուն միջամտութեան:

Ադամովի ընտանիքը անցաւ Զուիցերիա եւ հաստատուեցաւ Փընել: Աւելի ուշ, ան շարունակեց իր ուսումը Գերմանիոյ Մայէնս քաղաքին մէջ:

1924ին, Ադամով անցաւ Փարիզ, որ կը գտնուէր գերիբապաշտ շարժումի ետուն մթնոլորտին մէջ: Ան արագօրէն հմայուեցաւ այս շարժումէն, որ կ'առաջադրէր յեղափոխել արուեստը, կեանքին ու աշխարհը:

Ան յաճախեց գերիբապաշտ շրջանակները, յորինեց բանաստեղծութիւններ, հրատարակեց յառաջապահ հանդէս մը՝ «Անշարունակալիզմ» (Discontinuité) անունով եւ խառնուեցաւ Լատինական թագին եւ Սէնի Զախափնեայ Հակահամակերպական մտաւարականներու կեանքին:

Եւ ապա լուց. հաւանարար ան ապրեցաւ Րէմպոյի հողովիճակը, երբ նախընտրեց լուսթիւնը Բանին գօրութեանէն: Աւելի ուշ, ինքնակենսագրական եւ հոգեվերլուծական պզտիկ գրքոյիկ մը մէջ՝ ան բացատրեց բարոյական, հոգեախտարանական եւ քնազանցական այն խորունկ տագնապը, զոր ճանչցած էր իր լուսթեան նախորդող շրջանին: Եւ որ կը նախապատկերացնէր «գարուն հիւանդութիւնը», որուն բանբերները պիտի հանգիստանային Սարթը եւ միւս գոյապաշտները:

Նոր դարու այս հիւանդութիւնը արտայայտութիւնն էր լինելու գօրուարութեան մը, կեանքի անհեթեթութեան, զաղափարներու, երազներու, բոլոր տեսակի պատրանաթափութիւններու դաւաճանութեան, ամբողջ քաղաքակրթութեան մը անանկութեան, որ կը գտնուէր մարդ-անասունին ազդեցութեան տակ եւ որ կ'արտայայտուէր գրամի ազդեցութեան տակ պոռնկացած մարդկութեան մը միջոցով:

Միւս կողմէ՝ Ադամով կը նշմարէր, որ այդ «գարուն հիւանդութիւնը» կը կրկնուէր արժեզրկումովը լեզուին եւ բառերուն, որոնք զարձած էին սխալ ուղիներու առաջնորդող ջիւղէնէր, կեղծելով եւ այլասերելով մարդկային յարաբերութիւնները, անկարելի դարձնելով բոլոր հազարակցութիւնները, զանոնք հիմնելով «անվաւերականութեան» (inauthenticité) եւ կեղծիքին մէջ, ժամանակաշրջանի ընկերութեան պատկերով,

ներքնապէս կրծուած բազմութիւն հուկասութիւններով, մարդ-անասունի քանդուածի մոլեգնութեան հետեւանքներով:

Հողեախտարանական եւ քաղաքական այս ախտաճանաչումներուն շնորհիւ՝ Աղամով կ'իրագործէ գոյութեան կան իր առաջին փորձաքննութիւնը եւ կը պատրաստէ թատրոնի մարդը, որ հետագային բունութեամբ եւ սարսափով պիտի դատապարտէր բոլոր խաբէութիւնները, որոնք մարդը կ'իջեցնեն առարկայի աստիճանին եւ հողերանականօրէն ու քաղաքականօրէն կ'օտարացնեն դայն:



Համաշխարհային Երկրորդ պատերազմի տարիներուն, Աղամով Վիշիի կառավարութեան կողմէ նետուեցաւ Արժէի ջարդարին մէջ, ուրկէ, ազատ արձակուելէ ետք, անցաւ Մարսէյլ եւ ապա Փարիզ, 1943ի վերջաւորութեան:

Փարիզի մէջ, Աղամով հրատարակեց «Լ'ուր ժամ» (L'Heure Nouvelle) թերթը, որ շարունակեց իր ջարդախաղը (Jeu de massacre) ժամանակակից իրականութեան դէմ, որ ծնունդն էր Մեն Գատերազմի դաժան ջարդարաբուծիւններուն:

Այդ շրջանին, Աղամով կը անանէր իրեն բարեկամ Արթոյի «Թատրոնը եւ իր երկրորդ երեսը» (Le théâtre et son double) անուն քննադատական երկով, ուր հեղինակը կ'առաջադրէր թատրոնը վերածել գիրականութեան մը, որուն կարելի ըլլար հաւատալ, կեղծ հոգեբանութենէն անդին, որ անծանօթը կը վերածէր ծանօթի, եւ անդին երկախօսութենէն, որ կը փորձէ տալ աշխարհին ու մարդուն խողազարար եւ աղճատուած պատկեր մը:

Արդարեւ, Արթոյի նպատակն էր բուսեղծել նոր թատրոն մը, որ, անիշխանական քանդումով մը՝ օրգանականօրէն հարցականի տակ պիտի դնէր մարդը, կեանքն ու աշխարհը, խարանձով մտաւորական ծուլութիւնն ու հանդիսաւոր, ազատագրելով մարդուն ներաշխարհը, քարացած դրութիւններու դէմ ըմբոստութեան մղելով հանդիսատեսը:

Նպատակադրուած այս թատրոնը պիտի ըլլար ո՛չ միայն արուեստագիտական, այլեւ օգտապաշտ: Թատրոն մը, որ պատմականօրէն պիտի ունենար բուժիչ դեր մը, ձգտելով դէպի հակաստարացումը (désaliénation), միաձուլելով բեմն ու սրահը, դերասանն ու հանդիսատեսը, ինչպէս վաղնջական ժամանակներուն կ'ըլլային կեանքի եւ աշխարհի խորհուրդներուն ուսուցման համար կտտարուած կախարչական ծիսակատարութիւնները:

Ասիկա անո՛ր համար, որ Արթոյի մօտ առանց անկարելիին չէր կրնար թատրոն գոյութիւն ունենալ: Անկարելի մը, որ կը սպառնայ ընկերութիւններու կեանքին, կեդրոնացնելով անհատին եւ հաւաքականութեան վրայ քառասյին եւ միաժամանակ ազատագրող բոլոր կարելիութիւնները, պայթեցնելով ընկերային, հողեկան եւ քաղաքական բոլոր պայարները:

Աւելի՛ն. Արթօ կ'առաջարկէր «վայրագութեան թատրոն մը», պայծառատեսութեան եւ յաղթահարուած անհրաժեշտութեան թատրոն մը:

Աղամով երկար ժամանակ յիշեց Արթոյի գասերը, բայց Սթրենպէրկի գիւտը շատ աւելի ազդու անդրադարձներ ունեցաւ իր վրայ:



Սթրենպէրկի եղաւ թատերապիւր ասպրիտ անկարելիութեան, գոյութեան պատակաւորութիւնն ու անբուժելի ջլխտանեղումն, որոնք պատկերացուած են «Էմֆիրեօ» գործին մէջ: Ան եղաւ նաեւ առաջինը, որ շեշտը դրաւ հողեախտարանական այն սպաննիչ բախումին վրայ, որ կը տիրէ մարդկային յարաբերութեանց մէջ:

«Հնգվեկն իւրաքանչիւր էութիւն կը հետապնդէ միւսին մտախ», կ'ըսէր Հեկէլ: Սթրենպէրկի անձնաւորութիւնները կը մղեն «ուղեգնորու» յարատեւ պայքար մը, ուր հողերանականօրէն զօրաւորագոյն էակը կը յաղթէր միշտ՝ գործելով այն «հողեախտարանական ոճիրը», որ վերջ կը դնէ պայքարին:

Աղամով կ'ըսէ .

«Սթրենպէրկի աշխարհը առանձնութեամբ աշխարհը չէ, ընդհակառակն, անիկա յարատեւ փոխյարաբերութեանց աշխարհն է, ուր գորաւորագոյն ամէր կը ստիպէ ամենատկարը երեսնալ այնպէս՝ ինչպէս կը ցանկար ինքը՝ գորաւորը (...): Գծոյթը տեւական ճնշումն է ամէնում՝ ամէնում վրայ, որովհետեւ ոչ ոք, մո'յնիսկ հերոսը չի հասնիր տարրերութեամբ այն սատիմանին, որ կրնայ գայն պաշտպանել: Գծոյթը միաձուլումն է, որուն դէմ չենք կրնար պաշտպանուիլ»:

Աղամովի գործը պիտի կրէր գրողը այդ տիեզերքին, որ կը քաշէ ինչպէս ակտաները կճոտող պալէ մը, ապամարդկայնացած անձնաւորութիւններով, որոնք իրենց դէմքերը կը ծածուկեն ջրադարութիւնն եւ յուսարեկութիւնն:

Ահաւաստիկ, թէ ինչպէս Աղամով կը բացատրէ Սթրենպէրկի ազդեցութիւնը թատերագրի իր ծննդոցին վրայ, պատերազմի վաղորդայնին:

«Ինչ որ կ'ուզեմ ըսել՝ այն է, որ այդ շրջանին շատ կը կարգայի Սթրենպէրկը, յատկապէս իր «Երազը», որուն մեծ փառասիրութիւնը զիս ենթարկած էր իր հմայքին, եւ որ, քերտեւ, շնորհիւ Սթրենպէրկին է, որ առօրեայ ամէնէն սովորական տեսարաններում եւ մասնաւորապէս փնտրոցի տեսարաններում մէջ ես կը գտնէի քատերակամ տեսարաններ:

Աղամով կ'աւելցնէ .

«Ինչ որ իմ ուշադրութիւնս կը գրաւէր այն ատեն՝ անցորդներում տողանցքն էր էսպէս, առանձնաւորութիւնը՝ ամբողջում մէջ, իտալացիութիւններու ապշեցուցիչ այլազանութիւնը, գորս կ'որսայի մասնիկ առ մասնիկ, որոնք ուրիշ մասնիկներու ազուցուելով՝ ինծի համար կը կազմէին ամբողջութիւն մը, որուն մասնիկական յատկութիւնը կ'ապահովէր խորհրդանշական ճշմարտութիւնը»:

Իրապէս, Սթրենպէրկ, այս յաւիտենական հաշտեալը, կեանքի այս պանդուխտը, որ ինքն իրեն եւ աշխարհին հետ կը պտուղէր յաւիտենական դատի մը մէջ, յուսահատականորէն փնտրե-

լով հաստատումը մարդկային պտորալիք յարաբերութիւններուն, նզովելով ու պախարակելով իր ժամանակաշրջանի ընկերութիւնը՝ կը վերադարձնէր ամբողջովին Աղամովի գործերուն մէջ, յաճախուած միեւնոյն երազախաներով եւ առանձնութեան ու հալածութիւնի մը ստանեւորումներով:

Այդ շրջանին, Աղամով, որ կեանքի տնայղթահարելի ողբերգականութեան գոհն էր, կը փորձէ համայնաւարութեան մէջ գտնել ժամանակակից ընկերային եւ քաղաքական դրութեան մերժումի լուծում մը: Մակայն, Աղամովի համայնաւարութիւնը կը մերժէ ամէն առտուպիլ, Վազորգայններ, որ կ'երգեմքի հասկացողութեան մօտիկ ամէն պատրանք, որովհետեւ տն կը մեկնի ներկայ կացութեան պայծառատես վերլուծումէ մը եւ ի յուսալագունէ դիտէ, թէ ո՛ր պիտի յանգի:



Եթէ Սթրենպէրկ, պառակտող ջրախոտներու այդ թատերագրերը՝ ազդած է Աղամովի հոգեբանական կողմերուն վրայ, Պրեխթ, յեղափոխական արարքեններու թատերագրերը՝ ազդած է անոր ընկերային ու քաղաքական երեսներուն վրայ:

Պրեխթի թատրոնը, ամէն բանէ առաջ, անհրաժեշտ կը նկատէր ընկերային եւ քաղաքական հարցեր շօշափող «Ինքնազնեցական թատրոն» մը, որ ժամանակաշրջանի պատմական կացութեան վերլուծումը պիտի ընէր եւ հանդիսատեսը պիտի առաջնորդէր յեղափոխական ինքնազնեցականութեան՝ արդի աշխարհին անարդարութեան դիմաց ցոյց տալով պատմութեան արտառոց մեքենականութիւնը եւ դիմակազերծելով անոր ոճիւրները:

Աղամով կ'ըսէ .

«Եթէ մօտէն դիտենք աշխարհի վրայ մետուած Պրեխթի ակնարկը՝ կրնանք գայն ամփոփել մէկ պարբերութեամբ մէջ՝ «գիմակազերծումը կեղծ գաղափարականութեամբ»:

Պրեիթի գործը, ինչպէս նաեւ Ազատովի գործը, կը սկսի աշխարհի եւ կեանքի քննադատական տեսիլքով, տեսիլք մը, որ քիչ ետք կը դառնայ բացայտորէն քանդիչ:

Ահա թէ ինչու այս թատրոնը բըրասօրէն կը հարուածէ բոլոր առասպելները եւ կեղծ արժէքները, որոնք առարկայի կը վերածեն մարդը եւ զայն կերկը զարմնեն ճշուամի եւ շահագործումի պիղծ ուժերուն, կը մղէ դէպի բժրատութիւն, դիմակազերծելէ ետք շահագործողներու եւ խաբէրաներու ամբողջութեանը, հեղինակը ժամանակակից պիթիարի եւ արտասոց քաղաքական խեղկատակութիւնը:

Սակայն, եթէ քաղաքական նպատակներու եւ տրամաթիկական թեքիքներու նոյնութիւն մը նշմարելի է Ազատովի եւ Պրեիթի միջեւ, պատմական իրականութեան անոնց մտեցումին մէջ եւս նշկատելի են որոշ նրբերանգներ:

Ուստի՝ Պրեիթի կը մնայ աւելի «բարոյախոս» մը, որ հակառակ իր ըզզուշութիւններուն, չի կրնար բարոյախօսութեան դասեր տալէ ազատագրել ինքզինք, մինչ Ազատովի թատրոնը աւելի «նկարագրական» է եւ կր հիմնուի ներկայ աշխարհի դրութեան նկարագրութեան վրայ՝ վարակելու համար Հանդիսատեսը յեղափոխական ինքնազրտակցութեամբ:

Սակայն, հակառակ այս նրբերանգներուն, քաղաքական թատրոնի երկու մեծագոյն բեմադրիչներուն մօտ նշմարելի է ժողովրդական եւ յեղափոխական թատրոն մը առաջացնելու նոյն մտահոգութիւնը, թատրոն մը, որ այլեւս բնութանին միայն վերապահուած պիտի չըլլայ, այլ պիտի ուղղուի դանդաւածին եւ պատրաստէ զայն մշակութային ա՛յն յեղափոխութեան, որ անհրաժեշտ է ընկերային եւ քաղաքական յեղափոխութեան:

(Շար. 1)



Ազատով միշտ պատրաստակամութիւն յատնած է իր բոլոր միջոցներով եւ յատկապէս թատերական գործերով մասնակցելու յեղափոխական այն բոլոր արարքներուն, որոնք ուղղուած են ընկերային անարդարութեան եւ մեծ պետութիւններու կայսերապաշտ եւ դաշուժութեան ձգտումներուն դէմ:

Այսպէսով է, որ ան ձաղկած է Ալճերիոյ պատերազմը, Ղէիթնամի Զարդուրը եւ Չեխոսլովաքիոյ ներխուժումը:

«Անօգուտ է հեծնծել ու ծամածուծ թիւննիր ըննել», կ'ըսէ իր «Ալճեր» ալճերիոյ դէմ» թատերգութեան հերոսը: Հակառակ կեանքի ճնշիչ եւ մնայուն մղձաւանջին, մահուան ճակատագրականութիւնը, որ մարդկային բոլոր ճիգերուն ունայնութիւնը ցոյց կու տայ, Ազատով՝ մարդկային գոյութեան մեղաբան խեղկատակութիւնը, մինչև իր վերջին արարք, խաղաց քաջութեամբ:

«Իժրախոտութեամբ պաշարուած՝ պիտի է կա՛մ խնդալեմ պայթի եւ կա՛մ անճանապա՛մ ըլլայի», կ'ըսէր Ազատով: Ան Բապրլէի լիահազա խնդուքը, ինչպէս նաեւ խեղկատակութիւնը, Հապիտութիւնն ու հեզմանքը նախնորեց անձնասպանութեան:

